ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲԻ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.02 – ,Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարումե մասնագիտությամբ

Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սարգսյան Հայկ Լևոնի

ԵՐԵՎԱՆ - 2016

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ 1: ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 8

1.1. Երկրի տարածքային միավորների զարգացման անհավասարաչափությունների ձևավորման և կարգավորման տեսական հիմքերը 8

1.2. ՀՀ մարզերում առկա արտադրական ռեսուրսների և ստեղծված արդյունքի համեմատական վերլուծություն 19

1.3. Միջմարզային տնտեսական զարգացման անհավասարաչափությունների դրսևորումներն ու դրանց փոփոխման դինամիկան 35

ԳԼՈՒԽ 2: ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 51

2.1. ՀՀ մարզերի արտադրական ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատման մեթոդաբանությունը և մարզերի դասակարգումն ըստ այդ ցուցանիշի 51

2.2.ՀՀ մարզերի տնտեսական ռեսուրսների օգտագործման համեմատական արդյունավետության գնահատումը տվյալների պարփակման մեթոդով 63

2.3. Մարզային կտրվածքով հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը խոչընդոտող հիմնախնդիրների փորձագիտական հետազոտության վերլուծություն 70

ԳԼՈՒԽ 3: ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 82

3.1. ՀՀ մարզերի արտադրական ռեսուրսների արդյունավետության բարձրացումը որպես տարածաշրջանային քաղաքականության առանցքային խնդիր 82

3.2. Նպատակային ծրագրերի ձևավորումը որպես արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություն 94

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 106

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 114

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 121

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում երկրի տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև ձևավորված խիստ անհամաչափությունների մեղմացման և դրանցում առկա տնտեսական ռեսուրսների՝ հատկապես գյուղատնտեսական նշանակության հողերի և աշխատուժի արդյունավետ օգտագործման խնդիրները:

Երկրի տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելու խնդիրը պետության կարևոր գործառույթն է, երկրի տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակը: Երկրի քաղաքացիները, անկախ բնակության վայրից, պետք է նույնանման հնարավորություններ ունենան աշխատելու, եկամուտ ստեղծելու, կենսամակարդակ և կյանքի պայմաններ ապահովելու: Ցավոք, այդ հնարավորությունները հանրապետությունում ըստ տարածքային միավորների այժմ խիստ տարբերվում են և դա իր բացասական ազդեցությունն է թողնում երկրի մասշտաբով տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և դրա հետևանքով համախառն արդյունքի ծավալի, տնտեսական աճի, աղքատության մակարդակի և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը ներկայացնող մակրոտնտեսական մյուս բնութագրիչների վրա:

Այս երկու հիմնախնդիրները պատճառահետևանքային կապերով փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի հաղթահարման ուղղությամբ իրականացվող գործընթացներն ուղղակի ազդեցություն են ունենում մյուս հիմնախնդրի վրա: Այսպես, եթե երկրի տարածքային միավորները դիտարկենք որպես սոցիալ-տնտեսական համակարգեր, ինչը չպետք է առարկություն առաջացնի, գոյատևման և զարգացման սկզբունքներից ելնելով, դրանցում կարելի է առանձնացնել հետևյալ ենթահամակարգերը՝ տնտեսական, սոցիալական և բնական միջավայրի: Այս ենթահամակարգերից յուրաքանչյուրի զարգացման մակարդակը պայմանավորվում է երկու գործոններով՝ առկա ռեսուրսներով և կառավարման արդյունավետությամբ, ներառյալ նաև ռեսուրսների կառավարումը: Այս առումով, եթե ՀՀ տարածաշրջանային

քաղաքականության ներկա փուլի նպատակը երկրի տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամաչափությունների մեղմացումն է, ապա տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը պետք է համարվի խնդրի լուծման հիմնական ուղղություն: Այլ կերպ ասած, այս երկու խնդիրները պետք է դիտարկվեն նույն համատեքստում:

Երկրի արդյունավետ կառավարումը պահանջում է ոչ միայն այդ հարցերի նկատմամբ մշտական ուշադրություն, այլ նաև դրանց ժամանակին բացահայտելուն և լուծմանն ուղղված քաղաքականություն մշակելու և այն իրողություն դարձնելու նպատակով լուրջ տեսամեթոդական և գիտական հետազոտությունների իրականացում:

Հանրապետությունում և՛ մարզային, և՛ համայնքային կտրվածքով տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում իրականացվել և իրականացվում են զգալի թվով ծրագրեր, որոնք հիմնականում ուղղված են արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարեփոխումներին և ստեղծմանը: Սակայն, չնայած այդ ամենին, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ երկրում իրականացվում է պասիվ տարածաշրջանային քաղաքականություն: Այդ մասին է վկայում նաև այն, որ ՀՀ տարածաշրջանային քաղաքականության հայեցակարգը միայն 2011 թվականին է մշակվել, որն էլ, կարծում ենք, վերանայման կարիք ունի այն առումով, որ չի արտացոլում բոլոր տարածքային միավորների ներառումով տարածաշրջանային զարգացման հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման ուղղությունները, ինչն ակնկալվում է նման փաստաթղթից:

ՀՀ տարածքային միավորների համաչափ զարգացման և դրանցում առկա տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները տնտեսագետ-գիտնականների ուշադրությունից նույնպես դուրս չեն մնացել:

Այդ երկու խնդիրներն էլ առանձին-առանձին բազմիցս ուսումնասիրվել և քննարկվել են տարբեր տեսանկյուններից (երևույթի առաջացման պատճառների, հետևանքների, գնահատման, հաղթահարման ուղղությունների և այլն): Այդպիսի հետազոտություններից է նաև սույն աշխատանքը: Այն առանձնանում է շուկայական տնտեսության պայմաններում երկու կարևոր հիմնախնդիրների (տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամաչափությունների մեղմացման և տարածքային միավորներում առկա տնտեսական

ռեսուրսների արդյունավետ օգտագործման) համատեղ դիտարկման և դրանց հաղթահարման տեսագործնական հարցերի ուսումնասիրության ուղղվածությամբ:

Վերոհիշյալ հիմնախնդիրները, որոնց լուծումները հնարավոր է գտնել ռեսուրսների տեղաբաշխման և կառավարման արդյունավետ մեխանիզմների մշակման և իրականացման միջոցով, պայմանավորում են ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը երկրում ձևավորված տարածքային միավորների սոցիալ-տնտեսական մակարդակների անհամաչափությունների ուսումնասիրությունն է դրանցում առկա տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, փոխկախվածության համատեքստում, և այդ հիմնախնդրի լուծման մոտեցումների շուրջ առաջարկությունների մշակումն ու հիմնավորումն է: Այդ նպատակին համապատասխան առաջադրվել են հետազոտության կառուցվածքը և տրամաբանությունը կանխորոշող հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տարածքային միավորների զարգացման անհավասարաչա-փությունների ձևավորման և կարգավորման տեսական հիմքերը,
- կատարել ՀՀ մարզերում առկա տնտեսական ռեսուրսների և ստեղծված արդյունքի համեմատական վերլուծություն,
- ըստ տնտեսության տարբեր ոլորտների կատարել մարզերում ստեղծված արդյունքի և անհամաչափությունների դինամիկ համեմատական վերլուծություն,
- մշակել մարզերի ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատականներ ձևավորելու մեթոդաբանություն,
- ՀՀ մարզերի համար հաշվարկել վարկանիշային գնահատականներ և մարզերը դասակարգել ըստ ռեսուրսաապահովվածության մակարդակի,
- գնահատել մարզերի ռեսուրներ-արդյունք կտրվածքով համեմատական արդյունավետությունը,
- կատարել գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չմշակման պատճառների վերլուծություն,

- քննարկել տարածաշրջանային և ոլորտային քաղաքականությունների փոխհամաձայնեցման հիմնահարցերը,
- հիմնավորել, որ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը տարածաշրջանային անհավասարաչափությունների հետ համատեղ պետք է դիտարկել որպես տարածաշրջանային քաղաքականության խնդիր,
- հիմնավորել, որ ՀՀ պայմաններում տարածքային զարգացման մակարդակների անհամաչափությունների մեղմացման և ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները կարելի է հաղթահարել միայն ծրագրանպատակային մեթոդի կիրառումով,
- մշակել և առաջարկել հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանն ուղղված նպատակային ծրագրի կառուցվածքը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության օբյեկտը երկրի տարածքային միավորներն են (մարզերը և համայնքները), դրանցում առկա տնտեսական ռեսուրսները և տարածաշրջանային քաղաքականությունը, իսկ առարկան տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների և դրանցում առկա տնտեսական ռեսուրսների միջև կապերի բացահայտումն ու գնահատումը, տարածաշրջանային քաղաքականության մշակման մեթոդաբանությունը, ինչպես նաև օբյեկտին և առարկային առնչվող հասկացությունների միանշանակ մեկնաբանումը:

Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության տեսական և մեթոդական հիմքը կազմել են տարածքային միավորների անհամաչափություններին, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և տարածաշրջանային քաղաքականությանը վերաբերող հայրենական ու արտասահմանյան տնտեսագետների գիտական աշխատանքները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ՀՀ օրենքներն ու իրավական ակտերը, ՀՀ կառավարության որոշումները, նախարարությունների և միջազգային կազմակերպությունների զարգացման ծրագրերը, միջազգային փորձը և համացանցային ռեսուրսները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակված վիճակագրական և վերլուծական նյութերը և ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների (,Հազարամյակի մարտահրավերե կորպորացիա, Ասիական զարգացման բանկ, ,Լինսիե հիմնադրամ, DFID, TACIS, USAID և այլն) ծրագրերն ու հաշվետվությունները: Աշխատանքում լայնորեն օգտագործվել է UNDP ,Համայնքային զարգացումե ծրագրի շրջանակներում ձևավորված ՀՀ համայնքների տեղեկատվական բազան:

Ատենախոսությունում կիրառվել են վիճակագրական խմբավորումների, համեմատական վերլուծությունների և տնտեսամաթեմատիկական մեթոդներ, փորձագիտական հետազոտությունների անցկացման և գնահատումների եղանակներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Աշխատանքում նորույթ ենթադրող արդյունքների թվում կարևորվում են հետևյալները.

- տարածաշրջանային քաղաքականության հասցեականության ապահովման տեսանկյունից կարևորվել է երկրի տարածքային միավորների ռեսուրսներով ապահովվածության գնահատումը և առաջարկվել է այդ գնահատականների ձևավորման մեթոդաբանություն,
- առաջարկված մեթոդաբանության կիրառումով հաշվարկվել են ՀՀ մարզերի ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատականներ և դրանց հիման վրա ձևավորվել է մարզերի դասակարգում,
- պարփակող թաղանթի մեթոդի կիրառումով գնահատվել է ՀՀ մարզերի ռեսուրսների օգտագործման համեմատական արդյունավետությունը,
- աշխատանքում քննարկվել է տարածքային և ոլորտային քաղաքականությունների առաջնայնության և իրավիճակային փոխհամաձայնեցման խնդիրը, և առաջարկվել է լուծման տարբերակային մոտեցում,
- գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չմշակման պատճառների փորձագիտական տեղեկատվության վերլուծության հիման վրա հիմնավորվել է երկրում այդ հիմնախնդրի հաղթահարման նպատակով ըստ տարածքային միավորների տարբերակված մոտեցումների կիրառման

անհրաժեշտությունը, և այն իրականացնելու համար առաջարկվել է համայնքների շրջանացման գաղափարն ու ալգորիթմը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքներն ունեն ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ գործնական նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել հանրապետության գործադիր իշխանության մարմինների, մարզպետարանների և ՏԻՄ-ի կողմից՝ տարածքային զարգացման և ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով ծրագրերի մշակման գործընթացներում:

Աշխատանքի որոշ արդյունքներ հաշվի են առնվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից՝ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացքում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակվել են չորս գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 120 էջ է (առանց հավելվածի):

ԳԼՈՒԽ 1: ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1.1. Երկրի տարածքային միավորների զարգացման անհավասարաչափությունների ձևավորման և կարգավորման տեսական հիմքերը

Երկրի տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելու խնդրին առնչվել են տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող շատ երկրներ:

Տարածքային միավորների ոչ համաչափ զարգացման և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների ընդգծված անհավասարաչափությունների ձևավորման պատճառահետևանքային կապերի, երևույթի գնահատման, այդ հիմնախնդրի մեղմացման մոտեցումների և պետության մասնակցության անհրաժեշտության հարցերը բազմիցս եղել են և շարունակում են մնալ տարածաշրջանային տնտեսագիտության հարցերով զբաղվող տնտեսագետների քննարկման առարկա: Այդ հարցերի ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ հետազոտություններ, այդ թվում նաև մեր երկրում: Կուտակված է այդ հիմնախնդրի հաղթահարման մեծ թվով երկրների փորձը: Սակայն, դժվար է հավաստել, որ ներկայացված հարցերի շուրջ ձևավորված է համապարփակ տեսության և ոլորտի մասնագետների տեսակետները համընկնում են: Որոշ հարցերի շուրջ ձևավորված տեսակետներն անգամ իրարամերժ են:

Ներկայացնենք տարածքային միավորների հավասարաչափ զարգացում ապահովելու շուրջ ձևավորված տեսական մոտեցումները, առանձնացնելով հետևյալ հարցերը.

ա) որո՞նք են տարածքային զարգացման անհավասարաչափությունների առաջացման պատճառները,

բ) տարածքային միավորների հավասարաչափ զարգացում ապահովելու և/կամ արդեն ձևավորված անհավասարաչափությունների մեղմացման գործընթացին արդյո՞ք անհրաժեշտ է պետության մասնակցությունը,

գ) որո՞նք են տարածաքային միավորների համաչափ զարգացում ապահովելու և/կամ արդեն ձևավորված զարգացման մակարդակների անհավասարաչափու-

թյունները մեղմացման գործիքները և ի՞նչ հիմքի վրա է կատարվում դրանց ընտրությունը:

Նախ անդրադառնանք տարածքային միավորների զարգացման մակարդակներում անհավասարաչափությունների ձևավորման պատճառների քննարկմանը: Այս հարցի շուրջ մասնագետների մեկնաբանություններում տարբեր կարծիքներ չկան: Բոլոր տեսական մոտեցումներում տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև անհավասարաչափությունների առաջացման պատճառը համարվում է դրանցում առկա տնտեսական բնական ծագում ունեցող ռեսուրսների կառուցվածքային և որակային տարբերությունները:

Այսպես, ըստ Հեկշեր-Օհլինի մոդելի, ‚երկրի տարածաշրջաններն ունեն բնական և մարդկային ռեսուրսների առանձնահատկություններ և տնտեսական զարգացման գործընթացով պայմանավորված հիմնական ֆոնդերի տարբեր պաշարներ և ներդրումների տարբեր հնարավորություններ: Արտադրական գործոնների կատարյալ շարժունակության բացակայության պայմաններում տարածքային միավորների աճի տեմպերը տարբերվում են և այդ տարբերությունները կարող են գոյություն ունենալ երկարաժամկետե[1]:

Ըստ Հարոդ-Դոմարի մոդելի ‚տնտեսական աճի գործոնը ներդրումներն են, որոնք էլ ավելի հաճախ հոսում են ավելի հարուստ շրջաններե[2]:

Պերուի ‚Զարգացման բևեռներիե տեսության համաձայն ‚տարածաշրջանի զարգացումը պայմանավորվում է տնտեսական ուժերով, որն էլ ‚Զարգացման բևեռներիե ձևավորման պատճառն է, ինչն էլ նպաստում է ներդրումների կենտրոնացմանը հարուստ տարածաշրջաններումե: [3]

Ներկայացված տեսակետներն ամփոփելով կարելի է եզրակացնել, որ երկրի տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափու-թյունների ձևավորվելը շուկայական տնտեսության պայմաններում բնականոն երևույթ է, քանի որ երկրի վարչատարածքային բաժանումը ինչպիսի սկզբունքների վրա էլ

[1] Higgins B.H., Savoie D.J., Regional Development Theories and Their Application, Transaction Publishers; New Jersey, 1998, p 58
[2] Higgins B.H., Savoie D.J., Regional Development Theories and Their Application, Transaction Publishers; New Jersey, 1998, p 40
[3]Higgins B.H., Savoie D.J., Regional Development Theories and Their Application, Transaction Publishers; New Jersey, 1998, p 62

իրականացվի, տարածքային միավորները չեն կարող ունենալ նույնանման ներդրումային գրավչություն, տնտեսական ռեսուրսների կառուցվածք և որակային հատկանիշներ, տնտեսական զարգացմանը նպաստող այլ բնութագրեր:

Իրարամերժ տեսակետներ են ձևավորվել տարածքային զարգացման անհավասարաչափությունների մեղմացման գործընթացին պետության մասնակցության անհրաժեշտության շուրջ:

Նոր դասական դպրոցի ներկայացուցիչները (Բ. Օհլին, Ջ. Բորց և այլոք) գտնում են, որ շուկայական մեխանիզմներն են կարգավորում երկրի տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացումը և հերքում են պետության մասնակցության անհրաժեշտությունը այդ գործընթացին: [4]

Նոր դասական դպրոցի ներկայացուցիչները շուկայական մեխանիզմների միջոցով տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև անհավասարաչա-փությունների մեղմացման հնարավորությունները բացատրում են ներդրումների և աշխատանքային ռեսուրսների հակառակ ուղղությամբ տեղաշարժերի միջոցով: Ըստ նրանց, ներդրումների շահութաբերության անկումը զարգացած տարածաշրջաններում պայմանավորում է դրանց հոսքերը դեպի թույլ զարգացած տարածաշրջաններ, իսկ զարգացած տարածաշրջանների բարձր աշխատավարձերը խթանում են աշխատանքային ռեսուրսների տեղափոխումը դեպի զարգացած տարածաշրջաններ:

Ներդրումների և աշխատանքային ռեսուրսների այդ տեղաշարժերի արդյունքում է ակնկալվում տարածքային միավորների զարգացման մակարդակների համահարթեցումը:

Իսկ այն ակնհայտ փաստը, որ տարածքային զարգացման անհավասարաչափու-թյունների հիմնախնդիր ունեցող երկրներում այդ հիմնախնդիրը երկարաժամկետ պահպանվում է, շուկայական մեխանիզմներով դրա կարգավորման կողմնակիցները բացատրում են դրանց դանդաղ ազդեցությամբ:

Ըստ նոր դասականների ժամանակակից մոտեցումների տարածաշրջանային անհավասարաչափությունների մեղմացման գործընթացի արագացման նպատակով կարելի է օգտագործել մասնակի կարգավորման մեխանիզմներ: Սակայն պետք է

[4] Ohlin B, Interregional and International Trade: Revised Edition, Harvard University Press, 1967, p. 143

նկատի ունենալ, որ այդ միջամտությունները կարող են բերել երկրի ակնկալվող տնտեսական աճի նվազման: [5]

Հակառակ կարծիքի են քեյնսյան դպրոցի ներկայացուցիչները: Ըստ Ջ. Ֆրիդմանի, շուկայական մեխանիզմները չեն կարող ապահովել երկրի տարածքային միավորների համաչափ զարգացման մակարդակ, անհավասարաչափությունների առկայության պայմաններում՝ հավասարակշռություն, և տարածքային զարգացումը պետք է կարգավորվի պետության միջամտության միջոցով: [6]

Արմստրոնգը և Թեյլորը գտնում են, որ թույլ զարգացած տարածաշրջաններին պետության աջակցությունը անհրաժեշտ է և շահավետ, քանի որ այն թույլ է տալիս խուսափել սոցիալական լարումներից, ինֆլյացիոն ճնշումներից: [7]

Այսպիսով, տարածքային զարգացման անհավասարաչափությունների կարգավորմանը պետության մասնակցության անհրաժեշտության շուրջ տեսակետները կարելի է տրոհել երկու հակառակ խմբերի .

- տեսակետներ, որոնցում հիմնավորվում է շուկայական մեխանիզմների միջոցով տարածքային զարգացման հավասարակշռության հասնելու հնարավորությունը,
- տեսակետներ, որոնցում հերքվում է շուկայական մեխանիզմներով տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելու հնարավորությունը և հիմնավորվում պետության կարգավորիչ դերն ու մասնակցության անհրաժեշտությունը:

Այս երկու հակադիր ուղղություններն էլ տարածաշրջանների մրցակցությունն են դիտում որպես զարգացման շարժիչ ուժ: Առաջին մոտեցման պայմաններում մրցակցությունը առաջ է բերում արտադրական ռեսուրսների (ներդրումների և աշխատողների) տեղաշարժեր և արդյունքում ձևավորվում է հավասարակշռություն տարածքային զարգացման մակարդակների միջև:

Ըստ երկրորդ մոտեցման հեղինակների, հենց մրցակցությունն է առաջ բերում և խորացնում տարածաշրջանային անհավասարաչափությունները: Ըստ այս մոտեցման հեղինակների, պետության մասնակցությունը երկրի տարածքային միավորների

---

[5] Borts G.H., Stein J.L., Economic Growth in a Free Market, 1967, New York, Columbia University Press, p.73
[6] Friedmann J, Regional Development Policy: A Case Study of Venezuela, 1966, MIT Press, p.57
[7] Armstrong M, Taylor J, Regional Economics and Policy, 3rd edition, New Jersey, Wiley-Blackwell, 2000, p49

սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև ձևավորված անհավասարաչափությունների մեղմացմանը անհրաժեշտություն է նաև ,սոցիալական արդարության սկզբունքից ելնելով: Այս սկզբունքի տարածումը տարածքային միավորների վրա կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ երկրի քաղաքացին պետք է գործունեության հավասար հնարավորություններ ունենա բնակության վայրից անկախ:

Նկատենք, որ ,տարածքային արդարություն և ,տնտեսապես արդյունավետ հասկացությունները չի կարելի դիտել որպես հոմանիշներ և շատ հաճախ ,տնտեսապես արդյունավետ գործընթացները կարող են դառնալ տարածքային զարգացման անհավասարաչափությունների խորացման պատճառ և լինել ,տարածքային ոչ արդար:

Ակնհայտ է, որ տնտեսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում, ներդրումների կենտրոնացումը դրանց համար գրավչության ավելի բարձր աստիճան ունեցող տարածքային միավորներում երկրի տնտեսական աճի տեսանկյունից ավելի լավ արդյունք կարող է ապահովել քան ,տարածքային արդարության սկզբունքից ելնելով դրանց ուղղելը թույլ զարգացած կամ դեպրեսիվ տարածաշրջաններ: Սակայն, տարածքային համաչափ զարգացում ապահովելու գործընթացին պետության միջամտությունը պահանջում է հանրային ներդրումների համար այդ երկու սկզբունքների հիման վրա ձևավորված տարբերակները դիտել որպես այլընտրանք:

Եթե տարածքային զարգացմանը պետության մասնակցության հարցին մոտենանք տնտեսության հավասարակշռության սկզբունքի տեսանկյունից, ապա տարածքային միավորների տնտեսական զարգացման մակարդակների միջև փոքր շեղումները շուկայական տնտեսության պայմաններում օգտակար են այն առումով, որ դրանք միայն կարող են ակտիվացնել մրցակցությունը, բերելով նոր հավասարակշիռ մակարդակի՝ ավելի բարձր տնտեսության զարգացման մակարդակով:

Այսպիսի իրավիճակում տարածքային միավորները կարելի է դիտել որպես ինքնակարգավորվող համակարգեր և պետության միջամտությունը տարածքային զարգացման գործընթացին ցանկալի չէ:

Այսպիսով, ելնելով ,սոցիալական արդարության սկզբունքից և հաշվի առնելով մրցակցությունը խրախուսելու սկզբունքը, պետք է գնահատել, թե տարածքային

միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների ինչպիսի չափն է անընդունելի, և երբ է պետության միջամտությունը դառնում անհրաժեշտ:

Այս հարցին դիպուկ պատասխան է տվել տարածաշրջանային հայտնի տնտեսագետ Ա. Լեկսինը, նշելով, որ ժողովուրդն ինքն է որոշում տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև անթույլատրելի անհավասարաչափությունների չափը իր համապատասխան վարքագծով: [8]

Տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների գնահատման նպատակով մասնագիտական գրականությունում առաջարկվում և գործնականում կիրառվում են տարբեր մոտեցումներ և դրանց վրա հիմնված տարբեր բանաձևեր: Օրինակ, այդ նպատակով օգտագործվում են Ջինի գործակիցը, Լորենցի կորը (ի սկզբանե դրանք նախատեսված են եկամուտների անհավասարաչափ բաշխումը գնահատելու համար), Ատկինսոնի և Թեյլի գործակիցները, վիճակագրական ցուցանիշների միջև շեղումները բնութագրող տարբեր ցուցանիշներ (վարիացիայի գործակից, վարիացիայի թափ, գծային շեղում և այլն), որոնք բնութագրում են ընտրված ցուցանիշի կամ ցուցանիշների միջև ըստ տարածքային միավորների ստատիկ և/կամ դինամիկ շեղում: [9, 10, 11]

Անհավասարաչափությունների գնահատման թվարկված բանաձևերը չեն կարող պատասխանել այն հարցին, թե որն է անհավասարաչափությունների արդեն անթույլատրելի մակարդակը և պետության միջամտությունը դառնում է անհրաժեշտություն: Այդպիսի շեմային մեծությունների ընտրությունը, ինչից կախված է առաջադրված հարցի պատասխանը, պայմանավորվում է երկրի տնտեսական զարգացման մակարդակով և տնտեսական քաղաքականության նպատակներով:

Այսպիսով, երկրի տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների մեղմացման նպատակով անհավասարաչափությունների գնահատման

---

[8] Лексин В.Н., Швецов А.Н., Государство и регионы. Теория и практика государственного регулирования территориального развития, УРСС, Москва, 2002, стр. 32

[9] Milanovic B.: The Gini-Type Functions: An Alternative Derivation, Bulletin of Economic Research, N01, 1994, p. 81-90

[10] Atkinson, A. B., Social Exclusion, Poverty and Unemployment, 1998, Hills, J. (ed.) Exclusion, Employment and Opportunity, Centre for Analysis of Social Exclusion (CASE), London School of Economics and Political Science, London, pp 1-20.

[11] Theil H., Statistical Decomposition Analysis: With Application in the Social and Administrative Sciences, North-Holland Pub. Co, 1972, p. 28

խնդիրը տեսականորեն բարդանում է երկու գործոններով պայմանավորված՝ ցուցանիշների ընտրության և դրանց շեմային արժեքների սահմանման:

Եվրամիությունը, լինելով պետությունների համագործակցության միասնական կառույց և որի անդամ երկրների ու դրանց տարածքային միավորների տնտեսական զարգացման մակարդակների միջև ևս առկա են նկատելի անհավասարաչափություններ, իր տարածաշրջանային քաղաքականության հասցեականությունն ապահովելու նպատակով ստեղծել է կենտրոնացված վիճակագրական համակարգ (Nomenclature of Territorial Units for Statistics – NUTS), ըստ որի թիրախային (օժանդակության կարիք ունեցող) երկրների և դրանց տարածքային միավորների ընտրության համար սահմանվել են չափորոշիչներ և դրանց շեմային արժեքներ: Որպես այդպիսի ցուցանիշներ առանձնացվել են հետևյալները[12].

- մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ,
- գործազրկության մակարդակ,
- միգրացիայի մակարդակ,
- բնակչության խտություն,
- եկամուտ (կյանքի մակարդակ),
- զբաղվածության մակարդակ,
- գործարարության և արտադրության կառուցվածք,
- գյուղատնտեսության համար ոչ բարենպաստ պայմաններ,
- ծառայությունների ոլորտում աշխատողների մասնաբաժին,
- արտադրության ոլորտում աշխատողների մասնաբաժին:

Հաջորդ կարևոր հարցը վերաբերվում է երկրի տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման նպատակ հետապնդող տարածաշրջանային քաղաքականության մեխանիզմների ընտրությանն ու կիրառությանը:

Ա. Հիրշմանի տեսության համաձայն տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելու նպատակով երկրում իրականացվող տարածաշրջանային քաղաքականությունը պետք է միտված լինի տնտեսական աճի բևեռների ստեղծմանը: Ըստ այս մոդելի ներդրումները նախ պետք է կենտրոնացվեն այդ աճի բևեռներում, իսկ

---
[12] Гранберг А.Г., Основы региональной экономики, ГУ ВШЭ, Москва, 2004, стр. 433-435

այնուհետ անհրաժեշտ կլինի իրականացնել այդ կենտրոնների զարգացումը մյուս տարածաշրջաններին փոխանցելու քաղաքականություն: [13]

Այս մոդելի կիրառման բարդությունները կապված են այդ ,աճի կենտրոններիե ընտրության և դրանց զարգացումը մյուս տարածաշրջաններին փոխանցելու հետ: Նկատենք, որ չնայած այդ բարդություններին, այն նախորդ դարի կեսերին արդյունավետ կիրառություն է գտել Եվրոպական երկրներում (օրինակ՝ Նիդեռլանդներում):

Մեկ այլ մոտեցում է առաջարկվում Ջ. Ֆրիդմանի կողմից: Ըստ Ֆրիդմանի մոդելի ներդրումների խրախուսման միջոցով պետք է նպաստել ծայրամասերում ,հենակետայինե տարածաշրջանների զարգացմանը ի հակակշիռ զարգացած կենտրոնների և օժանդակել աշխատանքային ռեսուրսների տեղաշարժին դեպի հենակետային տարածաշրջաններ: [14]

Ֆրիդմանի մոդելը ևս հաջող կիրառություն է գտել, օրինակ ԱՄՆ-ում տարածաշրջանային ծրագրերի իրականացման գործընթացում:

Տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելու խնդիրն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել պլանային կառավարման համակարգից շուկայական հարաբերությունների անցած երկրներում: Այդ երկրների մեծ մասը կառավարման սկզբունքների փոփոխությունները բերեցին շուկայական հարաբերությունների գերակայության սկզբունքների կիրառմանը նաև տարածքային կառավարման համակարգում: Սակայն, մրցակցության տեսանկյունից, տնտեսական զարգացման տարբեր հնարավորություններ ունեցող տարածքային միավորները չկարողացան ապահովել տնտեսական աճի նույնանման տեմպեր և այն երկրներում, որտեղ կառավարման ապակենտրոնացման գործընթացը չուղեկցվեց տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամաչա-փությունների ձևավորմանը խոչընդոտող նպատակաուղղված տարածաշրջանային քաղաքականությամբ, պայմաններ ստեղծվեցին տարածքային միավորների անհամաչափ զարգացման, դեպրեսիվ տարածքային միավորների և տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափությունների ձևավորման համար:

---

[13] Hirschman A.O., The Strategy of Economic Development, Yale University Press, 1958, p. 20

[14] Friedmann J, Regional Development Policy: A Case Study of Venezuela, 1966, MIT Press, p.78

Այդ երկրների ցանկը բավականին մեծ է և դրանց թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը, որի տարածքային միավորները ըստ ՀՀ Սահմանադրության մարզերն են և համայնքները: [15] Տարածքային միավորները տնտեսության զարգացման ներկա փուլում արդեն ունեն սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների մտահոգիչ տարբերություններ, որի մեղմումը համարվում է երկրի տարածաշրջանային քաղաքականության գլխավոր նպատակը: [16]

Նման խնդրի առջև է կանգնած նաև Ռուսաստանի Դաշնությունը: Այդ երկրում իրականացվում են դեպրեսիվ տարածաշրջանների զարգացմանն ուղղված լուրջ ծրագրեր ֆեդերալ և մունիցիպալ մակարդակներով: [17]

Տարածաշրջանային զարգացման անհավասարաչափության խնդիր ունեցող պլանային համակարգից շուկայական հարաբերությունների անցած երկրների զգալի մասում դրա մեղմացման ուղղությամբ ծրագրեր են իրականացվում ոչ միայն երկրների հանրային միջոցներից, այլ նաև տարբեր միջազգային կառույցների աջակցությամբ և այդ միջոցները հիմականում ուղղվում են ենթակառուցվածքների զարգացմանը՝ զարգացած ենթակառուցվածքների առկայությունը դիտելով որպես մասնավոր ներդրումների համար տարածքային միավորների գրավչության բարձրացման ուղի:

Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, այդպիսի մոդելները (ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը) տարածքային տնտեսական զարգացման անհավասարաչափությունների մեղմացման վրա շոշափելի ազդեցություն չեն թողնում:

Տարածքային զարգացման և համագործակցության կազմակերպության մասնագետները անցումային տնտեսություններում իրականացված տարածքային զարգացման ծրագրերի վերլուծության արդյունքում եկել են այն եզրահանգմանը, որ շեշտը պետք է դնել այնպիսի միջոցառումների վրա, որոնցով կարելի է բարձրացնել առանձին տարածքային միավորների մրցունակությունը: Այդ մոտեցման համաձայն.

ա) տարածքային զարգացման հայեցակարգը և ռազմավարությունը պետք է ընդգրկի տեղական կազմակերպությունների գործունեության վրա ուղղակի կամ անուղղակի ազդող մեծ թվով գործոններ,

---

[15] ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015, հոդված 11.1,

[16] «Տարածքային զարգացման հայեցակարգ», ՀՀ կառավարության 2011թ. №25 արձանագրային որոշում

[17] Швецов Ю.Г., Миркина И.В., Федеральные целевые программы на региональном уровне. Проблемы и перспективы. Федеральные отношения и региональная социально-экономическая политика, 2005, №4, стр. 29-32

բ) ավելի շատ ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն տարածքային միավորների ներքին միջոցներն ու կարողությունները և ոչ թե դրսից ներդրումներն ու դրամական հատկացումները,

գ) պետք է կենտրոնանալ ոչ թե տարածքային միավորների թերությունների կամ թույլ կողմերի՝ այլ հնարավորությունների վրա,

դ) պետք է ավելի արդյունավետ դարձնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը: [18]

Երկրի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների ձևավորման, գնահատման, կարգավորման հարցերի շուրջ տեսագործնական մոտեցումների ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- շուկայական տնտեսության պայմաններում տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների հիմնական պատճառը դրանց արտադրական հնարավորությունների տարբերությունններն են (ռեսուրսային, աշխարհաքաղաքական, ագլոմերացիոն, ենթակառուցվածքային, դեմոգրաֆիկ և այլն) և այն կարող է ձևավորվել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում,
- այդ իրավիճակի կարգավորմանը պետության մասնակցության անհրաժեշտության հարցի շուրջ, չնայած մասնագետների հակադիր դիրքորոշումների, միջազգային փորձը ցույց է տալիս, որ տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների պետական կարգավորման տարբեր մոդելներ արդյունավետ կիրառություն են գտել շատ երկրներում,
- այս խնդիրն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել պլանային համակարգից շուկայական հարաբերությունների անցած երկրներում՝ պայմանավորված կառավարման համակարգի, տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, արտադրական ռեսուրսների սեփականատերերի փոփոխության և այլ գործոններով, որոնք բնորոշ են

[18] OECD Territorial Reviews: Poland 2008, OECD Publishing, 2008, p.2

միայն անցումային տնտեսությամբ երկրներին: Դա խոսում է այն մասին, որ այս երկրներում տարածքային միավորների անհամաչափությունների մեղմացմանն ուղղված տարածաշրջանային քաղաքականությունը ևս պետք է ունենա առանձնահատկություններ և արդեն ձևավորված ու զարգացած երկրներում արդյունավետ կիրառություն գտած մոդելների կիրառումը այս երկրներում կարող է շոշափելի արդյունք չապահովել, եթե հաշվի չառնվեն ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները:

1.2. ՀՀ մարզերում առկա արտադրական ռեսուրսների և ստեղծված արդյունքի համեմատական վերլուծություն

ՀՀ ներկա վարչատարածքային կառուցվածքը ձևավորվել է ՀՀ Սահմանադրության և ,ՀՀ վարչատարածքային բաժանման մասինե ՀՀ օրենքի իրավական հիմքի վրա և անցած 20 տարիների ընթացքում այն ենթարկվել է որոշ փոփոխությունների (Երևան քաղաքը, որին ըստ օրենքի տրվել էր մարզի կարգավիճակ, Սահմանադրական փոփոխություններով դարձել է համայնք, համայնքների թիվը կրճատվել է հիմնականում Երևանի թաղային համայնքների կարգավիճակի փոփոխման հետևանքով)[19]:

Այժմ ՀՀ-ում վարչատարածքային միավորներ են ճանաչվել 10 մարզեր, դրանց կազմում ներառված 49 քաղաքային, 864 գյուղական համայնքներ և Երևանը որպես համայնք իր վարչական 12 շրջաններով:

Տարածքային կառուցվածքի փոփոխությունները ներկա փուլում շարունակվում են՝ համայնքների խոշորացման ճանապարհով:

Չանդրադառնալով հանրապետության վարչատարածքային կառուցվածքի վերլուծությանը, նշենք, որ մասնագետների կողմից այն բազմիցս ենթարկվել է քննադատությունների այն առումով, որ առանձնացված համայնքների որոշակի մասը (հիմնականում փոքր համայնքները) որպես տեղական ինքնակառավարման միավորներ ի զորու չեն իրականացնելու «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները:[20]

Մարզերը, որտեղ իրականացվում է հանրային կառավորում, առանձնացվել են հետևյալ սկզբունքների հիման վրա.

- նախկին ՀԽՍՀ վարչատարածքային բաժանման շրջանները չպետք է տրոհվեին տարբեր մարզերի միջև,
- առավելագույնս պետք է հաշվի առնվեր նախկին շրջանների առանձնահատկությունները,
- յուրաքանչյուր մարզում վերարտադրության հիմքում ունենալ այնպիսի

[19] «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, 1995թ.
[20] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002թ.

ռեսուրսային համալիր, որը հիմք դառնար հանրապետության սոցիալ-տնտեսական ընդհանուր համակարգում առանձին մարզերի նպատակահարմար մասնագիտացման համար: [21]

ՀՀ մարզերը և առավել ևս համայնքները խիստ տարբերվում են ոչ միայն ֆիզիկաաշխարհագրական և բնակլիմայական պայմաններով, այլ նաև արդյունք ստեղծելու հնարավորություններով, խոցելիության մակարդակով, կյանքի պայմաններով և դրանցով պայմանավորված սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

Տարածաշրջանային զարգացման անհավասարաչափությունների մեղմացման հիմնախնդրի լուծումը առաջին հերթին ենթադրում է այդ հիմնախնդրի ձևավորման պատճառների ուսումնասիրություն: Նկատի ունենալով, որ շուկայական տնտեսության պայմաններում որպես այդ հիմնախնդրի առաջացման պատճառ մասնագիտական գրականությունում շեշտադրվում է տարածքային միավորներում արդյունք ստեղծելու հնարավորությունների տարբերությունները, ինչը պետք է դիտել որպես բազմագործոն երևույթ, այն մանրամասնեցման կարիք ունի:

Տարածաշրջանային անհավասարաչափություններին նվիրված մասնագիտական գրականությունում որպես արտադրական հնարավորությունները պայմանավորող գործոններ առանձնացվում են հետևյալները.

- բնակչության կյանքի պայմանների և արտադրական գործունեության վրա ազդող բնակլիմայական պայմանները,
- տարածքային միավորների բնական (բնահումքային) ռեսուրսների առկայությունը, օգտագործման աստիճանը, կառուցվածքը, որակը, դրանց նկատմամբ պահանջարկը, դեֆիցիտության աստիճանը,
- տարածքային միավորների աշխարհագրական դիրքը, ինչը հիմնականում ազդում է տրանսպորտային ծախսերի և իրացման շուկաներ ապրանքը հասցնելու վրա,
- տարածքային միավորներում արդեն ձևավորված արտադրական կառուցվածքի անհամապատասխանությունը ժամանակակից շուկայի

---

[21] Ազգային ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, Ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 21

պահանջներին,

- աշխատանքային ռեսուրսները (կառուցվածքը, քանակը, կրթությունը, զբաղվածությունը),
- ենթակառուցվածքների զարգացման մակարդակը,
- տարածքային միավորներում տնտեսական գործունեության վրա ազդող դրական և բացասական արտաքին էֆեկտները,
- երկրի տնտեսական քաղաքականությունը,
- արտադրական ռիսկեր պայմանավորող այլ գործոններ:

Թվարկված գործոնների տեսանկյունից ներկայացնենք ՀՀ մարզերի համեմատական ուժեղ և թույլ կողմերը:

Արագածոտնի մարզը ներառում է նախկին ՀԽՍՀ չորս վարչական շրջաններ (Աշտարակի, Ապարանի, Արագածի, Թալինի), զբաղեցնում է հանրապետության ընդհանուր տարածքի 9.3%-ը (2756 քառ. կմ): Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 218,225.4 հա :

Մարզը ներառում է 114 համայնքներ, որից 111-ը՝ գյուղական:

Ըստ ԱՎԾ պաշտոնական տեղեկատվության մարզի բնակչությունը 131.3 հազար մարդ է[22], որի 77.2%-ը գյուղաբնակ:

Արագածոտնի մարզը հարուստ է շինանյութային ռեսուրսներով: Այստեղ է տեղաբաշխված հանրապետության շինարարական ռեսուրսների 26.9%-ը՝ տուֆերի, հրաբխային խարամների, պեռլիտների, բազալտի, ավազների տեսքով:

Մարզը աղքատ է հանքային ջրերի պաշարներով և չունի մետաղային ռեսուրսներ:

Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների, մարզի աղքատության մակարդակը 2014 թվականին գնահատվել է 18.7%, որն իր նախորդ երկու տարիների (2013, 2012թթ.) համեմատությամբ նվազման միտում է ցուցաբերել: Մարզի աղքատության ցուցանիշը հանրապետության աղքատության միջին մակարդակի համեմատությամբ (30.0%) մոտ տասնմեկ տոկոսային կետով ցածր է: [23]

---

[22] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 241

[23] Աղքատության մակարդակը ներկայացվել է ըստ 2013, 2014 և 2015 թթ. հրապարակված Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը վիճակագրական-վերլուծական զեկույցի (2013: էջ 61, 2014: էջ 63, 2015 էջ 70)

Համայնքային կտրվածքով ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ ,աղքատության մոդիֆիկացված համաթվի, մարզի համայնքների միջև կան ընդգված տարբերություններ: [24] Այդ ընդգծված շեղումները վերաբերվում են և՛ եկամուտ ստեղծելու հնարավորություններին, և՛ ենթակառուցվածքներով ապահովվածությանն ու կյանքի պայմաններին:

Մարզի համար արդյունաբերական արտադրանքում պրոֆիլային են սննդամթերքի արտադրությունն ու հանքավայրերի շահագործումը: 2014 թվականին մարզում արտադրվել է հանրապետության արդյունաբերական արտադրանքի 2.3%-ը:

Արագածոտնի մարզի բնակլիմայական և ֆիզիկաաշխարհագրական բնութագրերը նպաստավոր պայմաններ են ապահովում բուսաբուծության ճյուղում կարտոֆիլ, հացահատիկ, կերային մշակաբույսեր աճեցնելու, ինչպես նաև անասնաբուծության զարգացման համար:

Արարատի մարզն ընդգրկում է նախկին ՀԽՍՀ երեք վարչական շրջանների (Արարատի, Արտաշատի, Մասիսի) տարածքները, այն կազմում է 2090 քառ. կմ, որը հանրապետության ընդհանուր տարածքի 7.0%-ն է: Գյուղատնտեսական նշանակության հողերը 156,916.2 հա են: Մարզի համայնքների թիվը 97 է , որից 93-ը՝ գյուղական: Մարզի բնակչությունը ըստ ԱՎԾ տվյալների 260.1 հազար մարդ է, որից 186.1 հազարը գյուղաբնակ[25]:

Արարատի մարզի բնահումքային ռեսուրսների պաշարները կազմում են հանրապետության պաշարների 7.8%-ը: Մարզը հարուստ է հանքային ջրերի պաշարներով (հանրապետության պաշարների 24.4%-ը), շինանյութերով և հատկապես՝ մարմարի պաշարներով (հանրապետության պաշարների 72%-ը):

Արարատի մարզի աղքատության մակարդակը 2014թ. գնահատվել է 28.5%, որն ըստ ներկայացված տվյալների Արագածոտնի նույն ցուցանիշին գերազանցում է տաս տոկոսային կետով: Այս ցուցանիշը 2013 և 2012 թվականների համապատասխան ցուցանիշի համեմատությամբ նվազել է:

---

[24] ,Տարածքային զարգացման հայեցակարգե, ՀՀ կառավարության 2011թ. №25 արձանագրային որոշում, էջ 33

[25] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 249

Արարատի մարզում աղքատության ցուցանիշը մոտ է հանրապետության միջինին, ինչը կարելի է բացատրել տնային տնտեսությունների եկամտային և համայնքների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությամբ։

Մարզի համար պրոֆիլային են սննդամթերքի և խմիչքի արտադրությունը, ծխախոտի ֆերմենտացիան, ցեմենտի, կրի, քարի վերամշակման արտադրությունները։

Մարզի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է։ Բնակլիմայական պայմանները թույլ են տալիս գյուղատնտեսության ոլորտում զարգացնել խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարեղենի արտադրությունը:

Արմավիրի մարզը ձևավորվել է նախկին ՀԽՍՀ Հոկտեմբերյան, Բաղրամյան, Էջմիածին տարածաշրջանների հիմքի վրա, զբաղեցրած տարածքը 1242 քառ. կմ է, որը հանրապետության տարածքի 4.2%-ն է կազմում։ Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը 97,025.8 հա է։ Մարզը իր զբաղեցրած տարածքով հանրապետության մարզերից ամենափոքրն է, բնակչությունը՝ 267.0 հազար մարդ, որից 182.0 հազարը գյուղաբնակ։ Մարզն ունի 97 համայնք, որից 94-ը՝ գյուղական: [26]

Արմավիրի մարզը աղքատ է հանքահումքային ռեսուրսներով։ Այստեղ կան խիստ սահմանափակ քանակով շինանյութեր տուֆերի և ավազների տեսքով։

Մարզում զարգացած է գյուղատնտեսությունը։ Բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական դիրքը նպաստավոր են և՛ անասնապահության, և՛ բուսաբուծության զարգացման համար։

Արմավիրի մարզում զարգացած է էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ պայմանավորված Մեծամորի ատոմակայանի տեղաբաշխվածությամբ։ Վերամշակող արդյունաբերության ճյուղերից զարգացած է սննդամթերքի և խմիչքի արտադրությունը։

Մարզի աղքատության մակարդակը 2014թ.-ին գնահատվել է 29.0%, որը մոտ է հանրապետության միջին ցուցանիշին։ 2013, 2012 թվականների համեմատությամբ այն ցուցաբերում է նվազման միտում։

Գեղարքունիքի մարզը իր զբաղեցրած տարածքով ամենամեծն է և զբաղեցնում է 5349 քառ. կմ տարածք (հանրապետության տարածքի 18.0%-ը) և ունի 345,573.8 հա

---

[26] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 256

գյուղատնտեսական նշանակության հողեր: [27]

Մարզի տարածքում են գտնվում նախկին ՀԽՍՀ Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանները: 2014թ.-ին մարզի բնակչությունը կազմել է 233.0 հազար մարդ, որից 162.8 հազարը՝ գյուղաբնակ:

Մարզը հարուստ է հանքահումքային ռեսուրսներով: Այստեղ են կենտրոնացված ոսկու պաշարների 35.6%-ը: Մարզը հարուստ է հրակայուն ապարներով, հանքային ջրերով:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքահումքային և սննդի արտադրություններն են:

Մարզի տնտեսությունում գերակայող ճյուղ է համարվում գյուղատնտեսությունը: Բնակլիմայական պայմանները թույլ են տալիս մարզում զարգացնել հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքների արտադրությունը:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության երկու մայրուղիներ՝ Երևան-Սևան-Դիլիջան և ,Հարավ-Հյուսիս:

Սևանի լիճը լայն հնարավորություններ է ստեղծում մարզում ձկնարտադրության և տուրիզմի զարգացման համար:

2014 թվականին Գեղարքունիքի մարզի աղքատության մակարդակը գնահատվել է 32.3%, որը 2013 և 2012 թվականներին գնահատված (համապատասխանաբար 35.8% և 36.5%) աղքատության մակարդակից չնչին չափով է տարբերվում:

Լոռու մարզը զբաղեցնում է 3799 քառ. կմ տարածք, այն հանրապետության տարածքի 12.8%-ն է: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը 251,139.3 հա է: Այն ներառում է նախկին ՀԽՍՀ Գուգարքի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Սպիտակի տարածաշրջանները: Բնակչության թվաքանակը 228.0 հազար մարդ է, որից քաղաքաբնակ են 134.3 հազարը: [28] Համայնքների թիվը 112 է, որից 9-ը՝ քաղաքային:

Մարզը հարուստ է հանքահումքային ռեսուրսներով: Հանրապետության մետաղային ռեսուրսների 28%-ը կենտրոնացված է այս մարզում: Մարզի տարածքում են գտնվում պղնձի (28.7%), ցինկի (52.5%), մոլիբդենի (12.4%), արծաթի (10.6%), ոսկու

[27] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 263
[28] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 271

(5.4%) պաշարներ: Մարզն ունի նաև հանքային ջրերի, շինանյութի, հանքաքարերի զգալի պաշարներ:

Մարզում բավականին բարձր է աղքատության մակարդակը՝ 36.4%, որը 2013 և 2012 թվականների համեմատությամբ նվազման միտում է ցուցաբերել:

Մարզի բնակլիմայական և աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ նպաստավոր պայմաններ կան անասնապահության և բուսաբուծության համար:

Արդյունաբերության ճյուղերից մարզում զարգացած է պղնձի, սննդի, ոչ ոգելից խմիչքների արտադրությունը: Այս մարզում է գտնվում Հայաստանի խոշոր քաղաքներից Վանաձորը, որը պլանային տնտեսության օրոք համարվում էր զարգացած արդյունաբերությամբ միութենական նշանակություն ունեցող հետազոտական կենտրոններով քաղաք: Ներկա պայմաններում այն կարելի է համարել դեպրեսիվ: Մարզը և՛ գործազրկության, և՛ աղքատության ցուցանիշներով հանրապետության միջինից բարձր ցուցանիշ ունի:

Կոտայքի մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 7.0%-ը (2086 քառ. կմ), մարզի բնակչությունը կազմում է 255.0 հազար մարդ, որից 54%-ը քաղաքաբնակ է: Մարզն ունի 67 համայնք, որից 60-ը գյուղական: [29]

Կոտայքի մարզն ընդգրկում է նախկին ՀԽՍՀ երեք տարածաշրջաններ՝ Հրազդանի, Կոտայքի և Եղվարդի:

Մարզում է տեղաբաշխված հանրապետության ընդերքի ռեսուրսների 10%-ը: Այդ տարածքում կան մետաղների, շինանյութերի հանքեր, հանքային ջրեր: Մարզն ունի հանրապետության մարմարների (70%) և գրանիտի (60%) ամենամեծ պաշարները:

Մարզն իր ունեցած ռեսուրսներին համապատասխան տնտեսապես զարգացած է: Հանրապետությունում աչքի է ընկնում էլեկտրաէներգիայի, քարերի, ցեմենտի, մետաղագործության, կահույքի արտադրությամբ, թանկարժեք քարերի մշակմամբ:

Թեթև արդյունաբերության ոլորտում հատկապես զարգացած է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Մարզում կան կաթնամթերքի և մսամթերքի վերամշակման, ալյուրի, ըմպելիքի արտադրություններ:

Մարզի տնտեսությունը զգալի դերակատարում ունի հանրապետության տնտեսական զարգացման գործընթացում:

---

[29] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 280

Մարզի ֆիզիկաաշխարհագրական և մեղմ բնակլիմայական պայմանները նպաստավոր են գյուղատնտեսության զարգացման համար: Մարզում զարգացած են և՛ անասնապահության, և՛ բուսաբուծության ճյուղերը:

Այս ամենին զուգահեռ ուշագրավ է այն, որ ըստ պաշտոնական տեղեկատվության մարզն ունի աղքատության միջինից զգալի բարձր ցուցանիշ: Այն 2014 թվականին գնահատվել է 37.2%, իսկ 2013-ին՝ 42.5%:

Շիրակի մարզը ձևավորվել է նախկին ՀԽՍՀ Արթիկի, Ախուրյանի, Անիի, Ամասիայի, Աշոցքի տարածաշրջանների ընդգրկումով:

Մարզի զբաղեցրած տարածքը 2680 քառ. կմ է, որը հանրապետության ընդհանուր տարածքի 9.0%-ն է կազմում, բնակչությունը 246.4 հազար մարդ, որից 102.9 հազարը գյուղաբնակ: Մարզը համայնքների թվով ամենամեծն է: Այն ներառում է 116 գյուղական և 3 քաղաքային համայնքներ: [30]

Մարզի ընդերքի ռեսուրսները շինանյութերի և հանքային ջրերի տեսքով են: Մարզում շինանյութերից մեծ տեսակարար կշիռ ունեն տուֆերը, բազալտները, որոնք կազմում են հանրապետության համապատասխան ռեսուրսների մոտ 20%-ը: Ըստ մասնագետների կարծիքի մարզի ընդերքը լիովին հետազոտված չէ և դեռևս խորհրդային տարիներին իրականացված հետազոտությունները վկայում են, որ մարզի ընդերքը լրացուցիչ հետազոտությունների կարիք ունի:

Մարզի առավելություններից մեկն էլ այն է, որ ունի օդանավակայան, որտեղից թռիչքներ կարող են իրականացնել տարբեր տիպի ինքնաթիռներ:

Մարզի խոցելի կողմերից է այն, որ պլանային տնտեսության օրոք զարգացած թեթև արդյունաբերություն ունեցող, իր զբաղեցրած դիրքով հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը՝ Գյումրին հայտնվել է դեպրեսիվ վիճակում: Մարզում բարձր է գործազրկության մակարդակը, արտագնա աշխատանքի մեկնողների մասնաբաժինը աշխատանքային ռեսուրսների թվաքանակում:

Մարզի բնակլիմայական պայմանները նպաստավոր պայմաններ են ապահովում անասնապահության, բուսաբուծության ոլորտում՝ հացահատիկի և կարտոֆիլի արտադրության համար:

---

[30] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 287

Մարզի աղքատության մակարդակը բավականին բարձր է գրանցվել դիտարկված 2012–2014 թթ., համապատասխանաբար կազմելով 46.0%, 45.9% և 44.2%: Ներկայացված փոփոխման դինամիկան ևս հուսադրող չէ:

Սյունիքի մարզը զբաղեցնում է 4506 քառ. կմ տարածք, որը հանրապետության ընդհանուր տարածքի 15.1%-ն է: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 306,914.4 հա: Այն ներառում է նախկին ՀԽՍՀ Գորիսի, Կապանի, Մեղրու, Սիսիանի վարչական շրջանները:

Ներկայումս ունի 109 համայնք, որից 102-ը գյուղական: Բնակչությունը 2014 թվականի տարեվերջին կազմել է 140.2 հազար մարդ, որից 94.4 հազարը քաղաքաբնակ: [31]

Մարզը համարվում է հանրապետության ընդերքի ռեսուրսներով ամենահարուստը: Այստեղ են գտնվում հանրապետության մետաղային ռեսուրսների կեսից ավելին (58.6%-ը), ունի զգալի քանակով շինանյութեր (14.3%), հանքային ջրեր (22.9%): Մարզն ունի մոլիբդենի, արծաթի, պղնձի, երկաթաքարի մեծ պաշարներ: Հարուստ է նաև շինանյութերով՝ հիմնականում կրաքարերի և բազալտների տեսքով:

Սյունիքի մարզը հարուստ է նաև հանքային ջրերով: Մարզը, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, մասնագիտացված է հանքահումքային արտադրությունում և ունի արտադրական կառուցվածքային փոփոխություններ պահանջող խնդիրներ: Մարզի հիմնական արդյունաբերական արտադրանքը հանքարդյունաբերությունն ու էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է Որոտանի ՀԷԿ-ի, իսկ հանքարդյունաբերությունը՝ պղնձի և մոլիբդենի հանքահումքի միջոցով:

Սյունիքի մարզում արտադրանքի կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտության մասին է խոսում նաև այն փաստը, որ 2008-2009 թվականներին, երբ միջազգային շուկայում ֆինանսական ճգնաժամի հետ կապված գունավոր մետաղների գների կտրուկ անկում տեղի ունեցավ, Սյունիքի մարզը կորցրեց իր առաջատար դիրքը տնտեսության արդյունաբերության արտադրանքի մարզային կառուցվածքում:

Մարզի դերակատարումը մեծ է նաև հանրապետության արտադրանքի արտահանման գործընթացում (դարձյալ շնորհիվ հանքահումքային ռեսուրսների):

[31] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 295

Սյունիքի մարզն ունի հանրապետության համար ստրատեգիական նշանակություն: Այն սահմանամերձ է Իրանին, Ադրբեջանին:

Մարզն ունենալով արդյունաբերության զարգացման համար ռեսուրսային մեծ ներուժ, համարվելով հանրապետության կարևոր տնտեսական տարածաշրջաններից մեկը, ունի դեմոգրաֆիկ խնդիրներ՝ կապված բնակչության խտության հետ: Այն քիչ բնակեցված է, ունի գերփոքր համայնքներ, որոնք ունեն լուրջ խնդիրներ կապված բնակչության աճի, կենսապայմանների ապահովման, եկամուտ ստեղծելու հնարավորությունների հետ:

Գյուղատնտեսության զարգացման համար, ըստ մարզում ներառված տարածաշրջանների, առկա են դիվերսիֆիկացման լայն հնարավորություններ: Մարզն ունի նպաստավոր պայմաններ և՛ անասնապահության, և՛ բուսաբուծության ճյուղերի զարգացման համար:

Մարզում աղքատության մակարդակը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է (24.2%) և 2012-2013 թվականներին ցուցաբերել է նվազման միտում:

Վայոց ձորի մարզը զբաղեցնում է 2308 քառ. կմ տարածք, որը հանրապետության ընդհանուր տարածքի 7.8%-ն է, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 190,337.6 հա: Բնակչության թվաքանակով մարզը ամենափոքրն է հանրապետությունում (51.4 հազար մարդ, որից 18.1 հազարը քաղաքաբնակ)։ Ընդհանուր համայնքների թիվը 44 է, որից 3-ը՝ քաղաքային: [32]

Մարզի կազմում են ներգրավվել նախկին ՀԽՍՀ Վայքի և Եղեգնաձորի տարածաշրջանները:

Վայոց ձորի մարզը հարուստ չէ ընդերքի ռեսուրսներով: Այն առանձնանում է միայն հանքային ջրերի պաշարներով: Մասնագետների կողմից այդ պաշարները գնահատվում են հանրապետության պաշարների նկատմամբ 13.6%:

Մարզի տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի Հայաստան-Իրան մայրուղին, որն անցնում է մարզի տարածքով:

Մարզում զարգացած է հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունը:

Մարզն ունի գյուղատնտեսության զարգացման համար բավականին նպաստավոր պայմաններ: Որպես գյուղատնտեսության հիմնական ճյուղ կարելի է առանձնացնել

[32] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 304

անասնապահությունը: Բուսաբուծության ոլորտում մարզում աճեցվում է խաղող, պտուղ, բանջարեղեն:

Մարզում աղքատության մակարդակը հանրապետության միջին ցուցանշից ցածր է: 2014 թվականին ԱՎԾ-ի կողմից գնահատվել է 18.2%, 2013-ին՝ 21.0%, 2012-ին՝ 20.7%:

Տավուշի մարզը զբաղեցնում է 2704 քառ. կմ տարածք, որը հանրապետության ընդհանուր տարածքի 9.1%-ն է: Մարզում ներառված են նախկին վարչատարածքային բաժանման Իջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Դիլիջանի տարածաշրջանները: Մարզն ունի 62 համայնք, որից 57-ը գյուղական: [33] Մարզը հարուստ չէ ընդերքի ռեսուրսներով, այն ունի շինանյութերի քիչ պաշարներ հիմնականում ավազների և կրաքարերի տեսականիով: Մարզում կան հանքային ջրերի աղբյուրներ, որն էլ պայմանավորում է մարզի արտադրության կառուցվածքում հանքային ջրերի արտադրության մեծ մասնաբաժինը:

Գյուղատնտեսության զարգացման համար մարզն ունի նպաստանվոր պայմաններ, եթե հաշվի չառնենք Ադրբեջանին սահմանամերձ լինելու պատճառով հողերի որոշակի մասի ականապատված և հրետակոծությունների ենթակա լինելը: Մարզն ունի բուսաբուծությամբ և անասնապահությամբ զբաղվելու պայմաններ:

Բուսաբուծության ոլորտում արտադրվում է խաղող, մրգեր, ծխախոտ, հացահատիկային կուլտուրաներ: Զարգացած է գինու արտադրությունը:

Աղքատության մակարդակը 2012 – 2014 թվականներին ցուցաբերել է աճի միտում, համապատասխանաբար կազմելով՝ 27.5%, 27.7%, 30.6%:

ՀՀ մարզերի ընդհանուր բնութագրերը ներկայացված են հավելված 1-ում:

Մարզերի համեմատական ուժեղ և թույլ կողմերի նկարագիրը ամբողջական չի կարող լինել առանց մարզերի մասնագիտացման հարցի քննարկման:

Մասնագիտական գրականությունում տարածաշրջանի մասնագիտացման աստիճանի որոշման շուրջ առաջարկվում են երկու տարբեր մոտեցումներ: Տնտեսագետների մի մասը գտնում է, որ դա պետք է որոշվի տվյալ տարածաշրջանում ստեղծված ամբողջական արդյունքում կոնկրետ ճյուղի արտադրանքի մասնաբաժնի մեծությունից ելնելով:

---

[33] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, էջ 312

Տնտեսագետների մյուս խումբը գտնում է, որ տարածաշրջանի մասնագիտացումը պետք է գնահատել հաշվի առնելով ըստ ճյուղի արտահանման ծավալները, հաշվի առնելով նաև արտահանման վրա կատարվող տրանսպորտային ծախսերը: Այս մոտեցման կողմնակիցները այն հիմնավորում են հետևյալ ձևով. ,եթե տարածաշրջանում այնտեղ բնակվող բնակչության սեփական կարիքները բավարարելու համար արտադրվում է համապատասխան քանակի որոշակի տեսակի արտադրանք, այն չի կարելի դիտել որպես մասնագիտացում, քանի որ վերջինս պետք է հենվի տարածաշրջանի համեմատական առավելությունների վրա և թույլ տա առավել ճիշտ արտադրանքի արտահանումըե: [34]

Առաջին մոդելի կողմնակիցները տարածաշրջանի մասնագիտացման աստիճանը որոշելու նպատակով առաջարկում են օգտագործել հետևյալ բանաձևը.

$$C_{ij} = \frac{a_{ij}}{a_j} \Big/ \frac{A_i}{A} \qquad (1.2.1)^{35}$$

որտեղ՝

C_{ij} – ն i ճյուղի մասնագիտացման գործակիցն է j տարածաշրջանում,

a_{ij} – ն i ճյուղի արտադրանքի քանակն է j տարածաշրջանում,

a_j – ն j տարածաշրջանի համախառն արտադրանքն է,

A_i – ն i ճյուղի արտադրանքի քանակն է երկրում,

A– ն երկրի համախառն արտադրանքն է:

j տարածաշրջանը համարվում է մասնագիտացված տվյալ ճյուղի արտադրությունում, եթե $C_{ij} > 1$:

Մակմիլանի բացատրական բառարանում որպես տարածքային միավորների մասնագիտացման գործակից առաջարկվում է օգտագործել հետևյալ բանաձևը.

$$\Sigma |S_{ij} - S_{in}| \qquad (1.2.2)^{36}$$

[34] Пробст, А. Е., Проблемы размещения социалистической промышленности Москва, Экономика, 1982, стр 87
[35] Пробст, А. Е., Проблемы размещения социалистической промышленности Москва, Экономика, 1982, стр 85
[36] Словарь современной экономической теории Макмиллана. М. 1997г., стр. 464

որտեղ՝

S_{ij} – ն i ճյուղի մասնաբաժինն է j տարածքային միավորում, S_{in} – ը՝ երկրում:

Ըստ երկրորդ մոտեցման, մասնագիտացման աստիճանը պետք է որոշել հետևյալ ծախսային առնչություններից ելնելով:

Տարածաշրջանը մասնագիտացած է տվյալ ճյուղի առումով, եթե ճյուղի արտադրական ծախքի և տրանսպորտային ծախսերի գումարը չի գերազանցում սպառման վայրում տվյալ արտադրանքի արտադրության ծախքին.

$$TC_{ij} + CT_{ij}^{k} < TC_{i}^{k} \qquad (1.2.3)^{37}$$

որտեղ՝

TC_{ij} – ն i ճյուղի արտադրանքի վրա կատարված ծախսերն են j տարածաշրջանում,

CT_{ij}^{k} – ն i ճյուղի արտադրանքի j տարածաշրջանից k տարածաշրջան տեղափոխության ծախսն է,

TC_{i}^{k} – ն i արտադրանքի արտադրական ծախսերն են k տարածաշրջանում:

Այս բանաձևը անթերի չէ այն առումով, որ այստեղ հաշվի չի առնվում մասշտաբի էֆեկտը: ՀՀ մարզերի մասնագիտացման գործակիցներ հաշվարկելու նպատակով մեր կողմից առաջարկվել է հետևյալ բանաձևը.

$$C_{ij} = \frac{b_{ij}}{b_j} \Big/ \frac{B_i}{B} \qquad (1.2.4)$$

որտեղ՝

j – ն մարզերի համթիվն է,

i – ն տնտեսության հիմնական ճյուղերի համաթիվն է,

b_{ij} – ն i ճյուղի արտադրանքի քանակն է j մարզում,

$b_j = \sum_i b_{ij}$, տնտեսության հիմնական ճյուղերում արտադրված արտադրանքների գումարն է,

B_i – ն i ճյուղի արտադրանքի քանակն է երկրում,

---

37 Пробст, А. Е., Проблемы размещения социалистической промышленности Москва, Экономика, 1982, стр 89

B– ն դիտարկվող ճյուղերի արտադրանքների գումարն է երկրում:

Մարզերի մասնագիտացումը գնահատվել է երեք հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտի դիտարկումով, որի համար հիմք ենք ընդունել հետևյալ գործոնները.

- մարզերի վերը ներկայացված սոցիալ-տնտեսական իրավիճակի զարգացման ուղղությունների և ռեսուրսներով ապահովվածության նկարագիրը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ տարածքային միավորների մասնագիտացումը ներկա իրավիճակում կարելի է դիտարկել միայն նշված ճյուղերում,
- մարզերից որևէ մեկը ներկա պահին մյուսների նկատմամբ չունի այլ ճյուղերում (օրինակ, տուրիզմի ոլորտում) զարգացման առավելություններ, և քանի որ գնահատվում է մարզի մասնագիտացումը առկա վիճակում, կարելի է սահմանափակվել առաջարկված ճյուղերով,
- քանի որ մարզային կտրվածքով ՀՆԱ ցուցանիշ չի հաշվարկվում, մարզերի մասնագիտացումը գնահատելու նպատակով օգտագործվել է բանաձև 1.2.4-ը, ներառելով թվարկված ճյուղերի արտադրանքը:

Որպես մարզի ընդհանուր արտադրանք դիտարկելով արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ճյուղերում արտադրությունների գումարը, իսկ երկրի համար ՀՆԱ-ն, մարզային մասնագիտացման գործակիցները ներկայացված են աղյուսակ 1.2.1 - ում:

Աղյուսակ 1.2.1

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մասնագիտացման գործակիցները (2014թ.)[38]

Մարզը	Մասնագիտացման գործակիցներ			
	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Ծառայություններ
ք.Երևան	0.83	0.02	1.12	1.69

[38] Գործակիցները հաշվարկվել են մեր կողմից օգտագործելով Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ պաշտոնական տեղեկատվությունը

Արագածոտն	0.52	2.27	0.71	0.18
Արարատ	1.17	1.60	0.41	0.17
Արմավիր	0.70	2.37	0.27	0.22
Գեղարքունիք	0.25	2.82	0.41	0.13
Լոռի	0.90	1.27	1.67	0.24
Կոտայք	1.55	0.71	0.61	0.44
Շիրակ	0.68	1.97	0.48	0.36
Սյունիք	1.78	0.82	0.43	0.15
Վայոց ձոր	0.72	1.30	1.93	0.35
Տավուշ	0.24	1.71	2.60	0.26

Աղյուսակ 1.2.1-ում ներկայացված արդյունքային տվյալներից հետևում է, որ ՀՀ մարզերից արդյունաբերության ոլորտում մասնագիտացած կարելի է համարել Սյունիքի, Կոտայքի և Արարատի մարզերը, ընդ որում Արարատի մարզի գյուղատնտեսության ոլորտի մասնագիտացման գործակիցը ավելի բարձր է արդյունաբերության մեջ մասնագիտացման գործակցից:

Հանրապետության բոլոր մարզերի համար, բացառությամբ Սյունիքի և Կոտայքի մարզերի, գյուղատնտեսության ոլորտում մասնագիտացման աստիճանը 1-ից բարձր է: Իհարկե, եթե հաշվարկներն իրականցվեին առանց Երևան քաղաքի, գործակիցները կփոխվեին: Այս ոլորտում իրենց մասնագիտացման բարձր աստիճանով առանձնանում են Գեղարքունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերը: Փոքր ինչ ցածր մասնագիտացման աստիճան ունեն Արարատի, Շիրակի և Տավուշի մարզերը:

Շինարարության ոլորտին վերաբերվող տեղեկատվությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականին շինարարական աշխատանքների ծավալները հանրապետության միջին ցուցանիշի համեմատությամբ բարձր են եղել Տավուշի, Վայոց ձորի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում:

Ծառայությունների մատուցման ոլորտում առկա է խիստ անհավասարաչափություն Երևան քաղաքի և հանրապետության բոլոր մարզերի միջև: Ըստ մեկ բնակչի հաշվով մատուցված ծառայությունների համադրելի ցուցանիշի

անհավասարաչափությունների վերլուծությունը կներկայացնենք սույն աշխատանքի 1.3 բաժնում:

1.3. Միջմարզային տնտեսական զարգացման անհավասարաչափությունների դրսևորումներն ու դրանց փոփոխման դինամիկան

ՀՀ մարզերի և համայնքների զարգացման մակարդակների անհավասարաչափությունները տարբեր նպատակներով (ճանաչողական, գնահատման, պատճառա-հետևանքային կապերի ուսումնասիրության և այլ նպատակներով) հետազոտվել են հանրապետության տարածաշրջանային զարգացման հարցերով զբաղվող տնտեսագետների կողմից:

Սույն աշխատանքի այս բաժնում մարզային անհավասարաչափությունների վերլուծությունը կկատարենք դինամիկ կտրվածքով՝ նպատակ ունենալով գնահատել աշխատանքի նախորդ բաժնում ներկայացված մարզերի ռեսուրսային հնարավորությունների օգտագործման դինամիկան ևս:

Տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչա-փությունների գնահատման նպատակով օգտագործվում են տարբեր ցուցանիշներ (դրանց մի մասի թվարկումը ներկայացված է աշխատանքի 1.1 բաժնում), որոնցից առավել կիրառություն ունեն հետևյալները.[39]

1. բացարձակ միջին շեղումը՝

$$d = \frac{\sum_{i=1}^{n}(y_i - \bar{y})}{n} \qquad (1.3.1)$$

որտեղ՝

y_i-ն ցուցանիշի արժեքն է i տարածքային միավորում,

$\bar{y}$-ն ցուցանիշի միջին արժեքն է երկրում,

n-ը տարածքային միավորների թիվն է,

2. վարիացիայի թափը, որը ցույց է տալիս տվյալ ցուցնիշի փոփոխման միջակայքը՝

$$K = y_{\max_i} - y_{\min_i} \qquad (1.3.2)$$

[39] Теория статистики под редакцией Г.А. Громова, М.: 2005, стр. 444

3. վարիացիայի թափի գործակիցը՝

$$R = \frac{y_{\max_i}}{y_{\min_i}} \qquad (1.3.3)$$

որտեղ՝

$y_{\max_i}$ -ն և $y_{\min_i}$ –ն ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքներն են ըստ i տարածքային միավորների,

4. միջին քառակուսային շեղումը.

$$\sigma = \sqrt{\frac{\Sigma(y_i - \bar{y})^2}{n}} \qquad (1.3.4)$$

5. վարիացայի գործակիցը.

$$V = \frac{\sigma}{\bar{y}} \qquad (1.3.5)$$

6. վիճակագրական դինամիկ շարքերը բնութագրող այլ ցուցանիշներ:

Մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների վերլուծության նպատակով կօգտագործենք անհավասարաչափությունների վարիացիայի թափի գործակիցը (բանաձև 1.3.3), իսկ մարզի վարկանիշը ըստ տվյալ ցուցանիշի գնահատելու նպատակով այն կհամեմատենք հանրապետության համապատասխան ցուցանիշի միջին արժեքի հետ ($R = \frac{y_i}{\bar{y}}$):

Եթե անհավասարաչափության մակարդակը գնահատելու նպատակով ցուցանիշների ընտրության հարցում մասնագետների մոտ մեծ տարակարծիքություն չի առաջանում, ապա այդ անհավասարաչափությունները գնահատելու համար բնութագրերի ընտրությունը վիճահարույց է:

Սովորաբար, տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների ընդհանուր պատկերը ստանալու համար օգտագործվում է ըստ տարածքային միավորների մակրոտնտեսական ցուցանիշների այն համակարգը, որով գնահատվում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը:

ՀՀ ներկա պարագայում այս մոտցումը հնարավոր չէ կիրառել, քանի որ այդ ցուցանիշները մարզային կտրվածքով չեն հաշվարկվում:

Սույն աշխատանքում, հետազոտության նպատակից ելնելով, տարածքային զարգացման անհավասարաչափությունների վերլուծության համար կօգտագործենք հետևյալ ցուցանիշները.

- մեկ բնակչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը,
- մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը,
- մեկ բնակչի հաշվով ծառայությունների ծավալը,
- մեկ բնակչի հաշվով շինարարության ծավալը,
- ըստ վերը ներկայացված ճյուղերի համախառն արդյունքը:

Ներկայացված բոլոր ցուցանիշները դիտարկվել են համապատասխան տարվա գներով, հետևաբար զարգացման մակարդակների մարզային անհավասարաչա-փությունների դինամիկայի վրա իր ազդեցության մասնաբաժինն ունի նաև գների մակարդակների փոփոխման դինամիկան:

Թվարկված ցուցանիշների մեկ բնակչի հաշվով արժեքները և անհավասարաչափությունների բնութագրերը ներկայացված են հավելվածներ 2, 4, 6 և 8-ում, իսկ 2014թ. մարզային կառուցվածքը հավելվածներ 3, 5, 7 և 9-ում: [40]

Մեկ բնակչի հաշվով **արդյունաբերական արտադրանքի** փոփոխման դինամիկան 2004-2014 թվականների ընթացքում ներկայացված է գծապատկեր 1.3.1-ում: [41]

Ինչպես երևում է գծապատկեր 1.3.1-ից, մեկ բնակչի հաշվով արդյունաբերական արտադրանքի հանրապետության միջին ցուցանիշից, ըստ մարզերի այդ ցուցանիշի շեղումները նվազման միտում չեն ցուցաբերում:

---

[40] Հաշվարկները և վերլուծության համար օգտագործված տեղեկատվությունը վերցրվել է Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2005-2015 թթ. վիճակագրական հրապարակումներից

[41] Վերլուծությունը կատարվել է Ա. Դարբինյան, Լ. Սարդարյան, Մ. Հաիրյան ,Տնտեսական զարգացման անհամաչափությունների դրսևորումները ՀՀ մարզերումե հոդվածում ներկայացված մեթոդաբանության հիման վրա: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրները. գիտական աշխատանքների ժողովածու, գիրք 2, Երևան 2011, էջ 4-13



Գծապատկեր 1.3.1. Ըստ մարզերի մեկ բնակչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալի փոփոխման դիամիկան 2004-2014թթ.

Դիտարկված ժամանակահատվածում այդ ցուցանիշի հանրապետության միջինից ընդգծված բարձր է Սյունիքի մարզի ցուցանիշը ի հաշիվ երկու գործոնների՝ պղնձի և մոլիբդենի հանքահումքի արտադրության և բնակչության փոքր թվաքանակի։ Սյունիքի մարզի համախառն արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը դիտարկված տարիներին գրեթե չի փոխվել և այդ արդյունքի մոտ 85%-ը միշտ բաժին է ընկել հանքահումքային արդյունաբերությանը։ Վերամշակող արդյունաբերության բաժինը միջինում կազմել է 6%:

Արտադրության այսպիսի միապրոֆիլ կառուցվածքը մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալները կախվածության մեջ է պահում միջազգային շուկայում այդ արտադրանքի պահանջարկից և դրա տատանումները կտրուկ ազդեցություն են թողնում մարզում ստեղծված արտադրանքի և գործազրկության մակարդակի վրա: Դրա վառ օրինակն է 2008-2009թթ. ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը հանրապե-

տության արդյունաբերական արտադրանքի միջին ցուցանիշի վրա, որը համապատասխանում է Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի անկմանը (ինչը պարզ երևում է նաև գծապատկերից):

Սյունիքի մարզը պատմականորեն եղել է հանքահումքային արտադրության տեսանկյունից զարգացած և իր մետաղային ռեսուրսներով գրավել օտարերկրյա ներդրումներ:

Ըստ մեկ բնակչին բաժին ընկնող արդյունաբերական արտադրանքի ծավալների հանրապետության միջին ցուցանիշից բարձր ցուցանիշ ունի Կոտայքի մարզը, որտեղ արտադրությունը բազմապրոֆիլ է: Զարգացած է վերամշակող արտադրությունը, որպես նեղ մասնագիտացման ուղղություններից կարելի է առանձնացնել թանկարժեք քարերի մշակումը, սննդամթերքի արտադրությունը, հանքային ջրերի և ոչ ոգելից խմիչքների արտադրությունը:

Ըստ դիտարկվող ցուցանիշի հանրապետության միջինից բարձր արդյունք ունեցող երրորդ մարզը Արարատն է, ի շնորհիվ ցեմենտի և խմիչքի արտադրության:

Հանրապետության մյուս յոթ մարզերում մեկ բնակչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալները հանրապետության միջին ցուցանիշից ցածր են:

Ըստ այս ցուցանիշի մարզերի վարկանիշային գնահատականները ներկայացված են գծապատկեր 1.3.2-ում, իսկ անհավասարաչափության թափի գործակցի փոփոխման դինամիկան՝ գծապատկեր 1.3.3-ում:

Ինչպես երևում է գծապատկերից, Սյունիքի մարզի վարկանիշային գնահատականն արդյունաբերության ոլորտում գերազանցում է Տավուշի մարզի այդ ցուցնիշին մոտ 19 անգամ, իսկ առանց հանրապետության միջինի հետ համեմատություններ կատարելու՝ մոտ 21 անգամ (հավելված 2):



Գծապատկեր 1.3.2. Մեկ բնակչի հաշվով արդյունաբերական արտադրանքի վարկանիշային գնահատականներն ըստ մարզերի 2014թ.

Ըստ մեկ շնչին բաժին ընկնող արդյունաբերական արտադրանքի մարզերն էապես տարբերվում են, և անհավասարաչափությունները նվազման միտում չեն ցուցաբերում:



Գծապատկեր 1.3.3. Ըստ մարզերի արդյունաբերական արտադրանքի արտադրության անհավասարաչափության թափի դինամիկան 2004-2014թթ.

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մարզային կտրվածքով վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի կեսից ավելին (50.6%-ը) բաժին է ընկնում երեք մարզերի՝ Գեղարքունիքի (19.0%), Արմավիրի (17.4%) և Արարատի (14.2%): Ամենացածր մասնաբաժինն ունեն Վայոց ձորի (2.2%) և Տավուշի (4.7%) մարզերը: Մյուս մարզերի մասնաբաժինը

ընդհանուր գյուղատնտեսական համախառն արդյունքում տատանվում է 6-14%-ի սահմաններում (հավելված 5):

Այլ է պատկերը մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական համախառն արտադրանքի պարագայում (հավելված 4):

Գեղարքունիքի մարզն առանձնանում է այդ ցուցանիշի բարձր արժեքով, որն արդյունք է մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական նշանակության հողերի հանրապետության միջինից բարձր մակերեսով:

Մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական համախառն արտադրանքի շեղումները հանրապետության միջինից ըստ մարզերի 2004-2014թթ.-ի համար ներկայացված են գծապատկեր 1.3.4-ում:



Գծապատկեր 1.3.4. Մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի (առանց ք.Երևանի) փոփոխության դինամիկան 2004-2014 թթ.

Ինչպես երևում է գծապատկեր 1.3.4-ից, մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական համախառն արտադրանքում, դիտարկված բոլոր տարիներին, հանրապետության միջին ցուցանիշից ցածր արդյունք ունեն Լոռու, Կոտայքի, Շիրակի և Տավուշի մարզերը, իսկ 2008թ.-ից սկսած՝ նաև Սյունիքի և Վայոց ձորի մարզերը: 2008թ.ից սկսած

դիտարկվող ցուցնիշը աճի միտում է ցուցաբերում բոլոր մարզերում, սակայն զարգացումն ընթանում է շատ փոքր աճի տեմպերով, ըստ մարզերի գրեթե համաչափ, ինչը ցույց է տալիս, որ այս ոլորտում զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացում չի նկատվում:

Ըստ մեկ բնակչին բաժին ընկնող գյուղատնտեսական համախառն արտադրանքի մարզերի անհավասարաչափությունների թափի գործակցի դինամիկան ներկայացված է գծապատկեր 1.3.5-ում:



Գծապատկեր 1.3.5. Ըստ մարզերի 1 բնակչի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի (առանց ք.Երևանի) անհավասարաչափության թափի դինամիկան 2004-2014թթ.

Մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ամենաբարձր ցուցանիշ ունեցող Գեղարքունիքի մարզը 2014 թվականին Կոտայքի մարզի համապատասխան ցուցանիշին գերազանցել է 3.45 անգամ:

Ըստ այս ցուցանիշի հաշվարկած վարկանիշային գնահատականները 2014թ.-ին ըստ մարզերի ներկայացված են գծապատկեր 1.3.6-ում:



Գծապատկեր 1.3.6

Մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի (առանց ք.Երևանի) վարկանիշային գնահատականներն ըստ մարզերի 2014թ.

ՀՀ մարզերը ըստ մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրության հաշվարկած վարկանիշային գնահատականների ունեն հետևյալ դասավորվածությունը՝ Գեղարքունիք, Արագածոտն, Արմավիր, Արարատ, Սյունիք, Շիրակ, Վայող ձոր, Տավուշ, Լոռի և Կոտայք:

Այս ոլորտի վերլուծության ժամանակ կարևոր է հաշվի առնել նաև մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի չափերը, քանի որ մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքը խիստ կորելացված է մեկ բնակչին բաժին ընկնող գյուղատնտեսական նշանակության հողերի հետ: Մեր կողմից դիտարկվել է ,մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքե ցուցանիշը՝ մյուս ճյուղերում դիտարկված ցուցանիշների հետ համադրելու հնարավորություն ունենալու նպատակով:

Հանրապետության շինարարության ոլորտը ներկայացնող տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկված տարիներին միջինում Երևան քաղաքի մասնաբաժինը կազմել է 50-60%: Մարզերում մեկ բնակչի հաշվով շինարարական արտադրանքի ծավալների փոփոխման դինամիկան որևէ օրինաչափության չի ենթարկվում:

Մեկ բնակչի հաշվով շինարարական արտադրանքի փոփոխման դինամիկան 2004-2014 տարիների համար ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 1.3.7-ում:



Գծապատկեր 1.3.7. Մեկ բնակչի հաշվով շինարարության ծավալի դինամիկան 2004-2014թթ.

Ինչպես երևում է գծապատկերից, հանրապետության միջին ցուցանիշի և Երևան քաղաքի ցուցանիշի դինամիկան ներկայացնող պրոֆիլները շատ նման են, ինչը խոսում է այն մասին, որ դիտարկված բոլոր տարիներին հանրապետության միջին ցուցանիշը ձևավորվել է Երևան քաղաքի ցուցանիշի ճնշման տակ:

2014 թվականին, ըստ մեկ բնակչի հաշվով շինարարական արտադրանքի, մարզերից միջինից բարձր ցուցանիշ են ունեցել Վայոց ձորի և Տավուշի մարզերը:

Ծառայությունների ոլորտի դինամիկայի ուսումնասիրությունը ուշագրավ է այն առումով, որ մի կողմից այն ստեղծված համախառն արդյունքում ունի բավականին մեծ (մոտ 28%) տեսակարար կշիռ, մյուս կողմից՝ այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ըստ տարածքային միավորների բնակչության կենսամակարդակի մասին:

Ծառայությունների ոլորտում ստեղծված արդյունքի 85.4%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին (հավելված 9): Ընդ որում, մեկ բնակչի հաշվով ծառայությունների

ոլորտի արտադրանքը բոլոր մարզերում դիտարկված տարիներին (2004-2014թթ.) ցուցաբերում է գրեթե կայուն մակարդակ, իսկ Երևան քաղաքում այն ունի աճի միտում (գծապատկեր 1.3.8)։



Գծապատկեր 1.3.8. Մեկ բնակչի հաշվով ծառայությունների ծավալի դինամիկան 2004-2014 թթ.

Ըստ դիտարկված տարիների մեկ բնակչի հաշվով ծառայությունների ծավալների անհավասարաչափությունների թափի գործակիցը աճի միտում է ցուցաբերում: Ամենաբարձր ցուցանիշն (առանց Երևան քաղաքի) ունեցող Կոտայքի մարզի ցուցանիշը ամենացածր ցուցնիշի (Գեղարքունիքի մարզ) նկատմամբ գնալով մեծանում է: Այս ոլորտում անհավասարաչափությունների թափի գործակցի փոփոխման դինամիկան ներկայացված է գծապատկեր 1.3.9-ում:



Գծապատկեր 1.3.9. Ըստ մարզերի ծառայությունների մեկ բնակչի հաշվով ծավալների (առանց ք.Երևանի) անհավասարաչափության թափի դինամիկան 2004-2014թթ.

Ըստ 2014 թվականի տվյալների հաշվարկած վարկանիշային գնահատականները թույլ են տալիս մարզերը ըստ մեկ բնակչին բաժին ընկնող ծառայությունների ծավալների ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ Կոտայք, Վայոց ձոր, Սյունիք, Շիրակ, Լոռի, Արագածոտն, Արմավիր, Արարատ, Տավուշ, Գեղարքունիք:

Ճյուղային կտրվածքով մարզերի զարգացման մակարդակների վերը ներկայացված անհավասարաչափությունները մտահոգիչ չէր կարող լինել այն պարագայում, եթե այն պայմանավորված լիներ զուտ մարզերում առկա տնտեսական ռեսուրսներով պայմանավորված համեմատական առավելությունների և մասնագիտացման ուղղությամբ: Այլ կերպ ասած, եթե մարզն ունի հանքահումքային արտադրության համար համեմատական առավելություն (օրինակ, Սյունիքի մարզը), իսկ մյուս մարզը գյուղատնտեսության (օրինակ, Գեղաքունիքի մարզը), ապա բնականոն է, որ դրանք էականորեն պետք է տարբերվեն մեկ բնակչի հաշվով արդյունաբերական և գյուղատնտեսական համախառն արտադրության ծավալներով:

Մարզերի տնտեսական զարգացման մակարդակների միջև անհավասարաչափությունների առկայությունը և փոփոխման դինամիկան գնահատելու նպատակով համատեղ դիտարկենք վերը ներկայացված չորս ոլորտները: Նկատենք, որ այդ ոլորտները ներկայացնող ցուցանիշները համեմատելի են՝ դրանք բոլորը հաշվարկված են դրամով և մեկ բնակչի հաշվով:

Մեկ բնակչի հաշվով համախառն արտադրանքի փոփոխման դինամիկան ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 1.3.10-ում:



Գծապատկեր 1.3.10. Մեկ բնակչի հաշվով համախառն արտադրանքի ցուցանիշի դինամիկան 2004-2014թթ.

Ըստ այս ցուցանիշի ևս Երևան քաղաքը հանրապետության միջին ցուցանիշի վրա ունի ընդգծված ազդեցություն, ինչը երևում է հանրապետության միջին և Երևան քաղաքի մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքի գծապատկերների համեմատությունից: Առանց Երևան քաղաքի դիտարկման ըստ մարզերի դիտարկումները ցույց են տալիս, որ ողջ ժամանակահատվածում հանրապետության մարզերի միջին ցուցանիշից բարձր է Սյունիքի մարզի ցուցանիշը, ցածր՝ Գեղարքունիքի մարզի մեկ բնակչի հաշվով համախառն արտադրանքը:

Առանց Երևան քաղաքի դիտարկման անհավասարաչափությունների թափի գործակցի դինամիկան ներկայացած է գծապատկեր 1.3.11-ում:



Գծապատկեր 1.3.11.Ըստ մարզերի մեկ բնակչի հաշվով համախառն արտադրանքի ցուցանիշի անհավասարաչափության թափի դինամիկան 2004-2014թթ.

Սյունիքի մարզում ստեղծված համախառն արտադրանքը մեկ բնակչի հաշվով Տավուշի մարզի նույն ցուցանիշին 2014 թվականին գերազանցում է մոտ երեք անգամ: Ընդ որում, այն փոքր չափով նվազման միտում է ցուցաբերում:

Ըստ մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքի մարզային վարկանիշային գնահատականները 2014թ. համար ներկայացված են գծապատկեր 1.3.12-ում:



Գծապատկեր 1.3.12. Մեկ բնակչի հաշվով համախառն արտադրանքի ցուցանիշի վարկանիշային գնահատականներն ըստ մարզերի 2014թ.

Ըստ ստեղծված համախառն արտադրանքի 2014 թվականին մարզերը ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ՝ Սյունիք, Արարատ, Արագածոտն, Կոտայք, Վայոց ձոր, Գեղարքունիք, Արմավիր, Լոռի, Շիրակ, Տավուշ:

Վերը ներկայացված վերլուծության արդյունքների ամփոփումը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների, շինարարության ոլորտներում մեկ բնակչի հաշվով մարզային կառուցվածքի վերաբերյալ թույլ է տալիս որոշել մարզերի զբաղեցրած դիրքերը ըստ հաշվարկված վարկանիշային գնահատականների (աղյուսակ 1.3.1):

Աղյուսակ 1.3.1

ՀՀ մարզերի դասակարգումներն ըստ ոլորտների մեկ բնակչի հաշվով ստեղծած արտադրանքի (2014 թ.)[42]

Ոլորտները / *Մարզերը*	*արդյունա-բերություն*	*գյուղատնտե-սություն*	*շինարա-րություն*	*ծառայու-թյուններ*	*համախառն արտադրանքի ցուցանիշ*
	մարզի զբաղեցրած դիրքը				
ք.Երևան	IV	XI	III	I	II
Արարագածոտն	VII	II	VI	VII	IV
Արարատ	III	IV	VIII	IX	III
Արմավիր	VIII	III	XI	VIII	VIII
Գեղարքունիք	X	I	IX	XI	VII
Լոռի	V	IX	IV	VI	IX
Կոտայք	II	X	VII	II	V
Շիրակ	IX	VI	X	V	X
Սյունիք	I	V	V	IV	I
Վայոց ձոր	VI	VII	I	III	VI
Տավուշ	XI	VIII	II	X	XI

[42] Աղյուսակը ձևավորվել է մեր կողմից կատարված վերլուծությունների արդյունքում

ՀՀ մարզերի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող հիմնական ոլորտներում ստեղծված արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել.

- ՀՀ մարզերի տնտեսական զարգացման մակարդակների միջև առկա է զգալի չափերի հասնող անհավասարաչափություն, ինչը չի կարող չանդրադառնալ այդ մարզերի բնակչության կենսապայմանների և կյանքի մակարդակի վրա: Հաշվի առնելով, որ ներկայացված վերլուծությունը կատարվել է մարզային կտրվածքով՝ ըստ մարզերի միջինացված ցուցանիշների հիման վրա, ակնհայտ է, որ այդ անհավասարաչափություններն ավելի մեծ չափերի կարող են հասնել համայնքների միջև համեմատությունների պարագայում,
- այդ անհավասարաչափությունների վերջին տարիների (2009-2014թթ.) փոփոխման դինամիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ այն չի կարելի դիտել որպես շուկայական մեխանիզմներով ինքնակարգավորվող երևույթ և պետության միջամտությունը անհավասարաչափությունների կարգավորման գործընթացի համար անհրաժեշտություն է,
- ՀՀ մարզերում ստեղծված արդյունքի և սույն աշխատանքի 1.2 բաժնում ներկայացված մարզերի ռեսուրսային հնարավորությունների հպանցիկ համեմատությունն (այս հարցին հանգամանորեն կանդրադառնանք սույն աշխատանքի հաջորդ բաժիններում) իսկ ցուցում է, որ որպես այդ անհավասարաչափությունների մեղմացման հիմնական ուղղություն կարելի է դիտել մարզերում առկա տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը՝ այն համարելով երկրի տարածաշրջանային քաղաքականության գլխավոր ուղղություն:

ԳԼՈՒԽ 2: ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՀՀ մարզերի արտադրական ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատման մեթոդաբանությունը և մարզերի դասակարգումն ըստ այդ ցուցանիշի

ՀՀ մարզերի տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացմանն ուղղված գործընթացների շարքում առանձնահատուկ նշանակություն և առաջնահերթություն պետք է տալ այն ծրագրերին, որոնք նպատակ են հետապնդում այս հիմնախնդիրը լուծել մարզերում առկա տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ճանապարհով: Այս մոտեցումը, որը չի կարող առարկություն առաջացնել, պահանջում է որոշ խնդիրների տեսամեթոդական պարզորոշում: Այդ խնդրների շարքին պետք է դասել տարածքային միավորների տնտեսական ռեսուրսներով ապահովվածության և դրանց արդյունավետ օգտագործման մակարդակների գնահատման մեթադական ապահովվածությունը: Այսպիսի գնահատականները թույլ կտան ընտրել թիրախային տարածքային միավորները, հիմնավորել իրականացվող ծրագրերը, դրանք դարձնել հասցեական, տարածքային միավորների կտրվածքով համեմատություններ կատարել ռեսուրս-արդյունք համապատասխանությունների միջև: Այստեղ խոսքը վերաբերվում է մարզերի տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության և/կամ դրանցում առկա տնտեսական ռեսուրսներով ակնկալվելիք հնարավոր արդյունքի գնահատմանը: Տարածքային միավորների զարգացման հնարավորությունների գնահատման խնդիրը բարդանում է մի շարք գործոններով պայմանավորված: Նախ, այդ հասկացությունը մասնագիտական գրականությունում տարբեր կերպ է մեկնաբանվում: Շատ հաճախ, այն դիտարկվում է որպես կարողություններ, ներուժ հասկացությունների հոմանիշ: [43]

Ըստ Մակմիլանի բացատրական բառարանի տնտեսական ներուժը ֆիրմայի, ճյուղի, տնտեսության հատվածի կամ ամբողջ տնտեսության առավելագույն արտադրանքն է, որը որոշվում է արտադրական գործոններով ապահովվածության

---

[43] Горбунов Э., Экономический потенциал развитого социализма. Вопросы экономики, N9, 1981г., стр. 16-51

մակարդակով: [44] Այսպիսով, ներուժ հասկացության մեկնաբանություններից մեկում ռեսուրսներն անկախ մեծություններ են, իսկ ներուժը՝ կախյալ և պայմանավորված այդ անկախ մեծություններով, իսկ մյուսում՝ ներուժը հենց այդ անկախ մեծությունն է:

Սույն աշխատանքի շրջանակներում, թյուրըմբռնումից խուսափելու նպատակով, կօգտագործենք «ռեսուրսներով ապահովվածություն» հասկացությունը, որի տակ կհասկանանք ժամանակի ներկա պահին մարզում առկա տնտեսական ռեսուրսների ծավալները կամ մասնաբաժինները հանրապետության համապատասխան ռեսուրսի ծավալում:

Մարզերի ռեսուրսաապահովվածության ամփոփ վարկանիշային գնահատականների ձևավորման խնդիրը բարդացնող մյուս գործոնը «ռեսուրս» հասկացության տակ մտնող արտադրական գործոնների բազմության տարրերի մեծ թիվն է: Մասնագիտական գրականությունում լայն իմաստով ռեսուրսը մեկնաբանվում է որպես բարիքներ ստեղծելու և պահանջմունքներ բավարարելու հնարավորություններ: [45] Ըստ այս սահմանման, դրանք ներառում են տարածքային միավորների բնական, աշխատանքային, ֆինանսական, ստեղծված և կուտակված, տեխնոլոգիական և այլ տիպի ռեսուրսներ, որոնց հիման վրա որևէ ամփոփ ցուցանիշի ձևավորումը դառնում է անհնարին և անիմաստ:

Այս բազմությունը կարելի է փոքրացնել հետևյալ տրամաբանությամբ: ՀՀ մարզերը թվարկված ռեսուրսների որոշ մասի առումով էական տարբերություններ չունեն, և դրանք նույն ազդեցությունը կունենան ռեսուրսաապահովվածության վարկանիշային գնահատականների վրա: Այս առումով, ռեսուրսների բազմությունը նեղանում է:

Մյուս կողմից, այս բարդությունը կարելի է շրջանցել, եթե բացարձակ վարկանիշային գնահատականներ ձևավորելու խնդիրը փոխարինենք նպատակային վարկանիշային գնահատականներ ձևավորելու խնդրով: Այս պարագայում կարելի է հաշվարկել ռեսուրսներով ապահովվածության բազմաթիվ մասնակի և ամփոփ վարկանիշային գնահատականներ, որոնք առաջադրված նպատակից ելնելով կունենան տարբեր ռեսուրսային բաղադրիչներ:

[44] Словарь современной экономической теории Макмиллана. М. 1997г., стр. 393
[45] Курс экономической теории. Под ред. Сидоровича А.В., М. 2001, стр. 21

Տարածաշրջանային համաչափ զարգացում ապահովվելու նպատակից ելնելով՝ առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում երեք հիմնական տնտեսական ռեսուրսները՝ գյուղատնտեսական նշանակության հողերը, ընդերքի հարստությունը և աշխատանքային ռեսուրսները, ուստի մարզերի ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատականները կարելի է ձևավորել այդ ռեսուրսների հիման վրա, իսկ մյուս ռեսուրսների առկայությունը մարզերում դիտարկել որպես համեմատական առավելություններ:

Թվարկված երեք ռեսուրսներից բացի նշված նպատակի տեսանկյունից պետք է կարևորել նաև ֆինանսական ռեսուրսներ բաղադրիչը, սակայն մարզը, որտեղ իրականացվում է պետական կառավարում, որպես սեփական ռեսուրս ֆինանսական միջոցների աղբյուր չունի, իսկ դրա կազմ ներառված համայնքների սեփական ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը դա հողի հարկն է, որը պայմանավորող երկու գործոններն էլ (հողերի առկայություն և դրանց կադաստրային զուտ եկամուտի գնահատականները) սույն աշխատանքում առաջարկված մեթոդաբանությունում կիրառվում են:

Վարկանիշային կամ այլ տիպի ամփոփ ցուցանիշի ձևավորումը բարդացնող հաջորդ խնդիրը տարբեր չափողականություն և համեմատական կարևորություն ունեցող մասնակի ցուցանիշների միավորումն է: Այս խնդրի լուծման նպատակով մասնագիտական գրականությունում առաջարկվում են տարբեր մոտեցումներ, որոնց հիմնական տարբերությունը մասնակի ցուցանիշների կազմի և դրանց նորմավորման մեթոդաբանության ընտրությունն է: Այս խնդրի լուծման նպատակով նախորդ դարի 90-ական թվականներից սկսած ամփոփ ցուցանիշներ հաշվարկելու նպատակով հաճախ կիրառվում է մարդկային զարգացման համաթվի ձևավորման մոտեցումը, որի համաձայն նախ ցուցանիշի կազմ ներառվող մասնակի ցուցանիշների համար հաշվարկում են նորմավորված համաթվեր հետևյալ բանաձևով.

$$I_j = \frac{X_{ij} - minX_j}{maxX_j - minX_j}, \ j = 1,2,\dots,n \qquad (2.1.1)$$

որտեղ՝

i-ն և j-ն համապատասխանաբար տարածքային միավորների և ցուցանիշների համարթվերն են,

$maxX_j$-ն և $minX_j$-ն j ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքներն են, ըստ երկրների (տարածքային միավորների),

X_{ij}-ն j ցուցանիշի փաստացի մեծությունն է i-րդ երկրում (տարածքային միավորում):

Այնուհետ այս մասնակի համարթվերի կշռված միջին թվաբանականով հաշվարկվում է համապատասխան ամփոփ ցուցանիշի մեծությունը[46].

$$I = \frac{\sum_{j=1}^{n} \alpha_j I_j}{n} \qquad (2.1.2)$$

որտեղ՝

n-ը մասնակի ցուցանիշների թիվն է,

α_j-ն j ցուցանիշի համեմատական կարևորության գնահատականը։ Սովորաբար այդ գնահատականները հաշվարկվում են փորձագիտական եղանակով:

Տարածքային միավորները ըստ տնտեսական զարգացման մակարդակի դասակարգելու նպատակով կիրառվում է նաև մեկ այլ մոտեցում: [47] Նախ հաշվարկվում են վարկանիշային գնահատականներ տարածքային միավորների դասկարգման նպատակով ընտրված մասնակի ցուցանիշների և երկրի միջին ցուցանիշի արժեքների հարաբերությամբ (վարիացիայի գործակիցներ) հետևյալ բնաձևով.

$$K_{ij} = \frac{x_{ij}}{\bar{x}_j}, j = 1,2,\dots,n \qquad (2.1.3)$$

որտեղ՝

i-ն և j-ն համապատասխանաբար տարածքային միավորների և ընտրված ցուցանիշների համարթվերն են,

x_{ij}-ն j ցուցանիշի արժեքն է i տարածքային միավորում,

$\bar{x}_j$-ն j ցուցանիշի միջին մեծությունն է ըստ բոլոր տարածքային միավորների։

---

[46] Mahbub ul Haq, Reflection on Human Development. New York: Oxford University Press. 1995

[47] Complex estimation of socio-economic development of regions. The Economist N2, 2004

Ամփոփ վարկանիշային գնահատականը հաշվարկվում է որպես կշռված միջին մասնակի ամփոփ համաթվերից հետևյալ բանաձևով.

$$K_i = \frac{\sum_{j=1}^{n} \alpha_j k_{ij}}{n}, i = 1,2,\dots,m \qquad (2.1.4)$$

որտեղ՝

K_i-ն i տարածքային միավորի վարկանիշային գնահատականն է ըստ տնտեսական զարգացման մակարդակի,

α_j-ն j ցուցանիշի համեմատական կարևորության գնահատականն է,

n -ը՝ ամփոփ ցուցանիշ ներառված մասնակի ցուցանիշների թիվը։

Ներկայացնենք ըստ ռեսուրսներով ապահովվածության մակարդակի ՀՀ մարզերը դասակարգելու նպատակով վարկանիշային գնահատականներ ձևավորելու մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությունը, որի հիմքում դրվել են ըստ տնտեսական զարգացման մակարդակի երկրների (տարածաշրջանների) վարկանիշային գնահատականներ հաշվարկելու վերը ներկայացված մոտեցումները։

<u>Մասնակի ցուցանիշների ընտրությունը:</u> Մարզի ռեսուրսներով ապահովվածության ամփոփ գնահատական ստանալու նպատակով մասնակի ցուցանիշների ընտրությունը կատարվել է հետևյալ պահանջներից ելնելով։

Հաշվի առնելով, որ վարկանիշային ամփոփ գնահատականը ձևավորվում է մարզերը ըստ ռեսուրսներով ապահովվածության մակարդակի դասակարգելու նպատակով, այդ մասնակի ցուցանիշները պետք է .

- լինեն ընդհանրական,
- ըստ մարզերի ունենան էական տարբերություններ,
- դրանց արդյունավետ օգտագործումը դիտվի որպես մարզի և երկրի տնտեսական աճի կարևոր գործոն։

Այդ պայմաններին բավարարող ռեսուրսներն են՝

- գյուղատնտեսական նշանակության հողերը,
- աշխատանքային ռեսուրսները,
- ընդերքի ռեսուրսները։

Ըստ մարզերի մասնակի ցուցանիշների համեմատելիությունը: Ընտրված ռեսուրսներից երկուսը՝ գյուղատնտեսական նշանակության հողերը և ընդերքի ռեսուրսները, ըստ մարզերի որակային հատկություններով համեմատելի չեն, ուստի մասնակի և ամփոփ ցուցանիշներ ձևավորելու նպատակով նախ անհրաժեշտ է դրանք բերել համեմատելի տեսքի: ՀՀ ընդերքի ռեսուրսների տարածաշրջանային բաշխմանը նվիրված հետազոտություններում մարզերի՝ այս ռեսուրսով ապահովվածության վարկանիշային գնահատականներ հաշվարկված են, և սույն աշխատանքում կօգտագործվեն այդ հետազոտությունների արդյունքները: [48]

Գյուղատնտեսական նշանակության հողերը ըստ մարզերի ունեն տարբերություններ ոչ միայն զբաղեցրած տարածքների և հողատեսքերի կառուցվածքի առումով, այլ տարբեր գործոններով (բնակլիմայական պայմաններ, հողերի որակ և այլն)՝ պայմանավորված եկամուտ ստեղծելու հնարավորություններով: Դա անհրաժեշտություն է առաջացնում այդ ռեսուրսը (գյուղատնտեսական նշանակության հողեր) բերել ըստ մարզերի համեմատելի տեսքի, որի համար առաջարկում ենք հետևյալ երկքայլ մոտեցումը:

1. Մարզերի գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ համապատասխան հողատեսքերի (վարելահող, պտղատու այգիներ, խաղողի այգիներ, խոտհարկներ, արոտներ) նորմավորել յուրաքանչյուր հողատարածքին համապատասխան զուտ եկամտի կադաստրային գնահատականների նվազագույն արժեքի նկատմամբ.

$$\bar{l}_{jk} = \frac{O_{jk}}{\min_j O_{jk}} l_{jk}, \quad j = 1,2,\ldots,10, \; k = 1,2,\ldots,5 \qquad (2.1.5)$$ [49]

որտեղ՝

K-ն հողատեսքի համարթիվն է,

j-ն մարզերի համարթիվն է,

$\bar{l}_{jk}$-ն k հողատեսքի նորմավորված մեծությունն է,

l_{jk}-ն k հողատեսքի զբաղեցրած տարածքն է j մարզում,

O_{jk}-ն k հողատեսքի զուտ եկամտի կադաստրային գնահատականն է j մարզում,

---

[48] Ա.Ավագյան, «ՀՀ ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականները», Երևան, 2000
[49] 2.1.5 – 2.1.8 բանաձևերը առաջարկվել են մեր կողմից

$\min_j O_{jk}$-ն k հողատեսքի զուտ եկամտի նվազագույն արժեքն է ըստ մարզերի:

Այս մոտեցումով գյուղատնտեսական նշանակության յուրաքանչյուր հողատեսքի համար ստանում ենք համեմատելի հողատարածքներ՝ հաշվի առնելով ըստ մարզերի նվազագույն կադաստրային գնահատականի համեմատությամբ քանի անգամ է թանկ j մարզում k հողատեսքը:

2. Ամփոփ վարկանիշային գնահատականի կազմ հողային ռեսուրսները մեկ ցուցանիշով ներկայացնելու նպատակով ըստ հողատեսքերի նորմավորված հողային ռեսուրսների հիման վրա հաշվարկել գյուղատնտեսական նշանակության հողերի միասնական ,բերված տարածք, օգտագործելով կշռված միջինի բանաձևը: Այն կարելի է հաշվարկել երկու տարբեր մոտեցումներով.

ա) որպես կշիռներ ընդունելով յուրաքանչյուր հողտեսքի հողերի մասնաբաժինը մարզի գյուղատնտեսական նշանակության հողերում.

$$\bar{l}_j = \sum_k \alpha_{jk}\, l_{jk} \qquad (2.1.6)$$

որտեղ՝

$\bar{l}_j$-ն j մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի զբաղեցրած տարածքի ,բերվածե արժեքն է,

α_{jk}–ն k հողատեսքի հողերի մասնաբաժինն է j մարզի գյուղատնտեսական նշանակության հողերում,

բ) որպես կշիռներ կարելի է վերցնել յուրաքանչյուր հողատեսքի կադաստրային գնահատականը մարզում (հավելված 10): Այս բանաձևով հաշվարկված մեծությունները ցույց են տալիս մարզի միավոր կադաստրային գնահատականին բաժին ընկնող հողատարածքները.

$$\bar{l}_j = \frac{\sum_{k=1}^{5} l_{jk} O_{jk}}{\sum_{k=1}^{5} O_{jk}}\, l_{jk}, j = 1,2,\dots,10 \qquad (2.1.7)$$

որտեղ՝

$\bar{l}_j$-ն j մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի զբաղեցրած տարածքի ,բերվածե արժեքն է:

Մասնակի վարկանիշային գնահատականների ձևավորումը: Ըստ ընտրված ցուցանիշների մարզերի ռեսուրսներով ապահովվածության մասնակի վարկանիշային գնահատականներ հաշվարկելու նպատակով, վերը նշված (2.1.1) և (2.1.3) բանաձևերից բացի, կարելի է կիրառել նաև հետևյալ բանաձևը.

$$r_{jm} = \frac{R_{jm}}{\sum_{j=1}^{10} R_{jm}}, j = 1,2, \dots ,10, m = 1,2,3 \qquad (2.1.8)$$

որտեղ՝

R_{jm}-ը m տեսակի ռեսուրսի մեծությունն է j մարզում,

r_{jm}-ը j մարզի վարկանիշային գնահատականն է ըստ m տեսակի ռեսուրսի:

Այս մոտեցումով վարկանիշային գնահատականներ հաշվարկելը նպատակահարմար է այն առումով, որ այն թույլ է տալիս ոչ միայն մարզերը դասակարգել ըստ ռեսուրսաապահովվածության, այլ նաև կատարել մարզերի համեմատական վերլուծություն ռեսուրսներով ապահովվածություն–արտադրված արդյունք կտրվածքով:

Ամփոփ վարկանիշային գնահատականի հաշվարկը: Մարզի ռեսուրսներով ապահովվածության ամփոփ վարկանիշային գնահատականը հաշվարկվել է որպես մասնակի վարկանիշային գնահատականների կշռված միջին թվաբանական ըստ բանաձև (2.1.2)-ի:

Ներկայացված մեթոդաբանությունը մեր կողմից կիրառվել է մարզերի ռեսուրսներով ապահովվածության մասնակի և ամփոփ վարկանիշային գնահատականներ հաշվարկելու, մարզերն ըստ այդ ցուցանիշի դասակարգելու և համեմատական վերլուծություն կատարելու նպատակով:

Մասնակի վարկանիշային գնահատականները ձևավորման համար օգտագործվել են վերը ներկայացված երեք մոտեցումները՝ բանաձև (2.1.1), (2.1.3) և (2.1.8), իսկ հողային ռեսուրսների ,բերվածե արժեքները հաշվարկվել են (2.1.5) և (2.1.7) բանաձևերով:

ՀՀ մարզերի հողային ռեսուրսներով ապահովվածության մասնակի վարկանիշային գնահատականները և գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռները ներկայացված են աղյուսակ 2.1.1-ում :

Աղյուսակ 2.1.1[50]

ՀՀ մարզերի գուղատնտեսական նշանակության հողերի ,բերվածե արժեքները, մասնակի վարկանիշային գնահատականները, գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինները:

№	Մարզերը	Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների բերված արժեքը	Վարկանիշային գնահատականները			Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը
			$R1^1$ ըստ բանաձև 2.1.7-ի	$R1^2$ ըստ բանաձև 2.1.1-ի	$R1^3$ ըստ բանաձև 2.1.3-ի	
1	Արագածոտն	30,849.98	6.06	0.19	0.61	0.15
2	Արարատ	27,331.25	5.37	0.16	0.54	0.11
3	Արմավիր	37,484.37	7.36	0.26	0.74	0.13
4	Գեղարքունիք	108,179.30	21.25	1.00	2.12	0.16
5	Լոռի	86,355.22	16.96	0.77	1.70	0.06
6	Կոտայք	25,663.19	5.04	0.14	0.50	0.05
7	Շիրակ	66,417.25	13.05	0.56	1.30	0.09
8	Սյունիք	63,214.69	12.42	0.53	1.24	0.10
9	Վայոց ձոր	12,483.83	2.45	-	0.25	0.08
10	Տավուշ	51,141.30	10.05	0.40	1.00	0.07

Չնայայծ իմաստային առումով մասնակի վարկանիշային ցուցանիշներ հաշվարկելու ներկայացված երեք մոտեցումները տարբերվում են, ինչպես երևում է աղյուսակ 2.1.1-ից դրանք համարժեք են և նույն արդյունքն են ապահովում մարզերի դասակարգման առումով:

ՀՀ մարզերի գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսներով ապահովվածության ինչպես բացարձակ, այնպես և նորմավորված մեծությամբ ամենաբարձր վարկանիշային գնահատականն ունի Գեղարքունիքի մարզը: Դրան համապատասխան մարզն ունի նաև մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի՝ ըստ մարզերի առավելագույն մեծությունը (809.44 հազ.դրամ)։ Այլ է պատկերը Լոռու և Շիրակի մարզերի պարագայում: Այդ մարզերը, ըստ

[50] Հողային ռեսուրսների ,բերվածե արժեքները հաշվարկվել են օգտագործելով ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվետվությունը ,Հողային ֆոնդի առկայության և բաշխմանե առ 01.07.2015թ.: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինները հաշվարկվել են ըստ ,Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015թ.ե ԱՎԾ պաշտոնական տեղեկագրի:

գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսներով ապահովվածության մակարդակի, լինելով երկրորդը և երրորդը ըստ մեկ բնակչի հաշվով ստեղծված գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանաբար զբաղեցնում են իններորդ (323.25 հազ. դրամ) և վեցերորդ (441.9 հազ. դրամ) դիրքերը:

Ամփոփ վարկանիշային գնահատականները հաշվարկելիս առանձնացված երեք ռեսուրսների համեմատական կարևորության գնահատականները փորձագիտորեն գնահատվել են հավասար:

Ըստ ընդերքի և աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության մասնակի վարկանիշային գնահատականները և ռեսուրսաապահովվածության ամփոփ վարկանիշային գնահատականները ներկայացված են աղյուսակ 2.1.2-ում:

Ռեսուրսաապահովվածության ամփոփ վարկանիշային գնահատականները հաշվարկվել են հետևյալ բանաձևով.

$$I_j = \frac{\sum_{m=1}^{3} R_{jm}}{3} \qquad (2.1.9)$$

Ըստ մարզերի մասնակի և ամփոփ վարկանիշային գնահատականները և մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունաբերության ճյուղի արտադրանքը և համախառն ամբողջական արդյունքը ներկայացված են աղյուսակ 2.1.2-ում:

Ըստ ընդերքի ռեսուրսներով ապահովվածության առաջատար դիրք է զբաղեցնում Սյունիքի մարզը, որն էլ մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունաբերական արտադրանքի ծավալով ևս առաջատարն է (1404.94 հազ. դրամ): Լոռու մարզը, որն ըստ այս ցուցանիշի հաջորդն է, ըստ արտադրված արդյունաբերական արտադրանքի զբաղեցնում է չորրորդ դիրքը:

Աղյուսակ 2.1.2[51]

ՀՀ մարզերի ընդերքի և աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատականները, և մեկ բնակչի հաշվով արդյունաբերության և արտադրված ընդհանուր արդյունքի ցուցանիշները

[51] Աղյուսակ 2.1.2-ում ներկայացված հաշվարկների համար հիմք է ծառայել ,ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015թ ԱՎԾ պաշտոնական տեղեկագիրը

№	Մարզերը	Ըստ ընդերքի ռեսուրսների վարկա-նիշային գնահատա-կանները	1 բնակչի հաշվով արդյունա-բերական արտադրանք հազ. դրամ	Մարզերի վարկա-նիշային գնահա-տականները ըստ արդյունա-բերական արտադրանքի	Աշխատան-քային ռեսուրսների վարկա-նիշային գնահա-տականները	1 բնակչի հաշվով ստեղծված արդյունք, հազ.դրամ	Մարզերի վարկա-նիշային գնահա-տականները ըստ համախառն արդյունքի ցուցանիշի
1	Արագածոտն	8.17	228.03	0.57	6.48	1,152.22	1.04
2	Արարատ	7.87	516.38	1.30	10.27	1,186.05	1.07
3	Արմավիր	1.87	202.33	0.51	13.20	950.99	0.86
4	Գեղարքունիք	5.15	96.88	0.24	10.79	998.97	0.90
5	Լոռի	15.34	306.75	0.77	14.13	884.55	0.80
6	Կոտայք	10.19	656.30	1.65	14.30	1,139.48	1.03
7	Շիրակ	7.64	198.43	0.50	15.39	777.32	0.70
8	Սյունիք	36.87	1,404.94	3.53	6.26	2,123.58	1.92
9	Վայոց ձոր	4.54	300.70	0.75	2.47	1,118.56	1.01
10	Տավուշ	2.36	74.84	0.19	6.70	748.92	0.68

Ուշագրավ են աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության վարկանիշային գնահատականների և ստեղծված ամբողջ արտադրանքի համեմատության արդյունքները: Շիրակի մարզը, որտեղ կենտրոնացված են աշխատանքային ռեսուրսների 15.39%-ը (առանց Երևան քաղաքի ներառման), ըստ ստեղծված արդյունքի զբաղեցնում է իններորդ դիրքը, իսկ Լոռու մարզը, որի վարկանիշային գնահատականը ըստ այդ ռեսուրսով ապահովվածության երկրորդն է, ըստ մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքի ութերորդն է:

Ներկայացված արդյունքները թույլ են տալիս կատարել մարզերի դասակարգում ըստ ռեսուրսներով ապահովվածության և մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքի ցուցանիշների (աղյուսակ 2.1.3):

Աղյուսակ 2.1.3

ՀՀ մարզերի դասակարգումը ըստ ռեսուրսներով ապահովվածության և մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքի վարկանիշային գնահատականների[52]

[52] Աղյուսակը ձևավորվել է մեր կողմից կատարված վերլուծության արդյունքում

№	Մարզը	Մարզերի զբաղեցրած դիրքերը					
		ռեսուրսաապահովվածություն	ստեղծված արդյունք	արդյունաբերություն	գյուղատնտեսություն	շինարարություն	ծառայություններ
1	Արագածոտն	VIII	III	VI	II	V	VI
2	Արարատ	VI	II	III	IV	VII	VIII
3	Արմավիր	VII	VII	VII	III	X	VII
4	Գեղարքունիք	III	VI	IX	I	VIII	X
5	Լոռի	II	VIII	IV	IX	III	V
6	Կոտայք	V	IV	II	X	VI	I
7	Շիրակ	IV	IX	VIII	VI	IX	IV
8	Սյունիք	I	I	I	V	IV	III
9	Վայոց ձոր	X	V	V	VII	I	II
10	Տավուշ	IX	X	X	VIII	II	IX

Ինչպես երևում է աղյուսակ 2.1.3-ից ՀՀ մարզերի միջև առկա են անհավասարաչափություններ ոչ միայն ըստ մեկ բնակչի հաշվով ստեղծված արդյունքի, այլ նաև ռեսուրսներով ապահովվածության և ստեղծված արդյունքի համապատասխանությունների միջև:

2.2.ՀՀ մարզերի տնտեսական ռեսուրսների օգտագործման համեմատական արդյունավետության գնահատումը տվյալների պարփակման մեթոդով

Սոցիալ-տնտեսական համակարգի (ինչպիսին են նաև տարածքային միավորները) ընդգրկումով ռեսուրսների արդյունավետության գնահատման հարցերը դասվում են տնտեսագիտության բարդ խնդիրների շարքին, և գործնականում դրանք գնահատելու համար միանշանակ ընդունված մեթոդաբանություններ չկան: Խնդրի բարդությունները պայմանավորված են տարաբնույթ ռեսուրսների և բազմաբաղադրիչ արդյունքի չափման, գնահատման և ամփոփ ցուցանիշներ ձևավորելու հնարավորությունների սահմանափակությամբ: Այս բարդություններից խուսափելու նպատակով շատ հաճախ բացարձակ ընդհանուր արդյունավետության գնահատականների փոխարեն հաշվարկվում են առանձին ռեսուրսների համար հաշվարկված մասնակի ցուցանիշներ (օրինակ, ռեսուրսի սահմանային արդյունք, միջին արդյունք, աշխատանքի արտադրողականություն և այլն), իսկ որպես արդյունք դիտարկվում է համախառն ներքին արդյունքը:

ՀՀ մարզերի պարագայում այդպիսի մասնակի ցուցանիշներ հաշվարկելու հնարավորությունները նույնպես սահմանափակ են, քանի որ մարզային կտրվածքով ստեղծված արդյունքի (ՀՆԱ) ամփոփ ցուցանիշ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) չի հաշվարկում:

Առանձին հետազոտողների կողմից այդ բացը լրացվում է տարբեր սուբյեկտիվ մոտեցումներով, օրինակ՝ մարզերի տնտեսական գործունեության գնահատման նպատակով որպես ամփոփ ցուցանիշ դիտարկվում է տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված համախառն արդյունքների գումարը: [53]

Այս ցուցանիշն է օգտագործվում նաև ,Տարածքային զարգացման հայեցակարգումե: [54]

---

[53]Դարբինյան Ա., Սարդարյան Լ., Հայրիյան Մ.. Տնտեսական զարգացման անհավասարաչափությունների դրսևորումները ՀՀ մարզերում //Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ/ (Գիտական աշխատանքների ժողովածու) – Գիրք 2, Եր.: ,Օր-Դարե հրատ., 2010, էջ 81:

[54] ,Տարածքային զարգացման հայեցակարգե, ՀՀ կառավարության 2011թ. №25 արձանագրային որոշում, էջ 19

Վերոնշյալ բարդությունները բերում են նրան, որ մարզային կտրվածքով իրականացվող տնտեսական ռեսուրսների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի հիմնավորումը, այլընտրանքային տարբերակներից ընտրությունը, հասցեականության ապահովումը կատարվում է սուբյեկտիվ գնահատականների հիման վրա:

Ծախսերի և արդյունքի ամփոփ ցուցանիշներ ձևավորելու բարդություններից կարելի է խուսափել՝ բացարձակ արդյունավետության գնահատումը փոխարինելով ՀՀ մարզերի ռեսուրսների համեմատական արդյունավետությունը գնահատելու խնդրով: Վերջին շրջանում համեմատական արդյունավետություն գնահատելու նպատակով լայն կիրառություն է գտել ,պարփակող թաղանթի վերլուծության մեթոդը (DEA)[55]: Այս մեթոդը թույլ է տալիս ստեղծված արդյունքի և օգտագործվող ռեսուրսների առումով համասեռ (նույն տեսակի և համեմատելի մուտքային և ելքային բնութագրերով) համակարգերի համար գնահատել համեմատական արդյունավետությունը, դրանցում իրականացվող գործընթացները դիտարկելով որպես ,սև արկղ:

Իհարկե, համեմատական արդյունավետության գնահատականները չեն կարող փոխարինել բացարձակ արդյունավետության ցուցանիշին, քանի որ դրանք ընդամենը համեմատում են օբյեկտները միմյանց հետ ռեսուրների արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Սակայն որոշ նպատակի (նպատակների)՝ մարզերի ռեսուրսների օգտագործման մակարդակի համեմատություններ կատարելու տեսանկյունից դրանք կարող են օգտակար լինել ռեսուրսների և դրանցից ստացվող արդյունքների ճիշտ ընտրության պայմաններում:

Մեթոդի տեսական հիմքը գծային ծրագրման երկակիության տեսությունն է և Պարետոյի արդյունավետության սկզբունքը: Մեթոդը թույլ է տալիս ստանալ համեմատական արդյունավետության գնահատականները հետևյալ մոտեցումով.

$$E_j = \frac{\sum_i \mu_i y_{ij}}{\sum_k \alpha_k x_{kj}} \qquad (2.2.1)$$

որտեղ՝

[55] Մեթոդին մանրամասն կարելի է ծանոթանալ .Entani, T., Maeda, Y. (2002). .Dual Models of Interval DEA and Its Extension to Interval Data.. European J. Oper. Res. 136: 32-45. հոդվածում:

E_j-ն համեմատական արդյունավետության գնահատականն է,

i-ն և k-ն համապատասխանաբար արդյունքների և ռեսուրսների համաթվերն են,

j-ն օբյեկտի համաթիվն է,

y_{ij}-ն j օբյեկտում i արդյունքի մասնաբաժինն է,

x_{kj}–ն j օբյեկտում k ռեսուրսի մասնաբաժինն է,

μ_i-ն և α_k-ն համապատասխանաբար ստեղծված արդյունքների և ծախսված ռեսուրսների համեմատական կարևորության կշիռներն են, որոնք ստացվում են խնդրի լուծման արդյունքում:

DEA մեթոդը թույլ է տալիս կառուցել համեմատական արդյունավետ եզրագիծ և օբյեկտները գնահատել այդ եզրագծի հետ համեմատության միջոցով:

Այս մեթոդը օգտակար կիրառություն կարող է ունենալ ՀՀ մարզերի տնտեսական գործունեության համեմատական արդյունավետությունը գնահատելու նպատակով: Այն թույլ կտա առանձնացնել ,խոցելիե մարզերը, որոնցում տնտեսական ռեսուրսների արդյունավետությունը համեմատաբար ցածր է:

DEA մեթոդաը մեր կողմից կիրառվել է հետևյալ տրամաբանությամբ.

- որպես օբյեկտներ դիտարկվել են ՀՀ բոլոր մարզերը ($j = 1 \div 10$),
- հաշվի առնելով, որ մարզային կտրվածքով ՀՆԱ չի հաշվարկվում, որպես յուրաքանչյուր մարզի տնտեսական գործունեության ամփոփ ցուցանիշ ընտրվել է արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ու մանրածախ առևտրի ոլորտներում ստեղծված համախառն արդյունքների գումարը տվյալ տարվա գներով: Իհարկե այդ ցուցանիշը չի փոխարինում ՀՆԱ-ին, այն մի կողմից չի ներառում տնտեսական գործունեության բոլոր ոլորտները, իսկ մյուս կողմից ներառված ճյուղերի համախառն արդյունքները պարունակում են կրկնահաշվարկ: Սակայն, քանի որ որպես տնտեսական գործունեության արդյունք այն դիտարկվում է բոլոր մարզերի համար, համեմատական արդյունավետություն գնահատման նպատակով այն կիրառելի է,
- որպես տնտեսական ռեսուրսներ դիտարկվել են մարզերի աշխատանքային, հողային և ընդերքի ռեսուրսները,

- ըստ մարզերի, աշխատանքային և ընդերքի ռեսուրսները ներկայացնող ցուցանիշները համեմատելի են, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերը, համադրելի դարձնելու նպատակով, նորմավորվել են՝ օգտագործելով աշխատանքի 2.1 բաժնում առաջարկված մեթոդաբանությունը:

Ըստ մարզերի համադրելի տեսքի բերված տնտեսական ռեսուրսները և դրանց միջոցով ստացված համախառն արտադրանքը ներկայացված են Աղյուսակ 2.2.1-ում:

Աղյուսակ 2.2.1[56]

Ըստ մարզերի տնտեսական ռեսուրսները և արտադրված համախառն արտադրանքը

№	Մարզը	Ծախսված ռեսուրսներ			Ստացված արդյունք (արդյունաբերություն, շինարարություն, գյուղատնտեսություն, ծառայություններ և մանրածախ առևտուր), մլն. դրամ
		Նորմավորված հողային ռեսուրսներ	Աշխատան-քային ռեսուրսներ, հազ. մարդ	Ընդերքի ռեսուրսների տեսակարար կշիռներ, %	
1.	Արագածոտն	30,849.98	95.6	8.10	133,581.0
2.	Արարատ	27,331.25	151.5	7.80	290,064.2
3.	Արմավիր	37,484.37	194.7	1.85	242,861.6
4.	Գեղարքունիք	108,179.30	159.2	5.10	208,246.0
5.	Լոռի	86,355.22	208.4	15.20	181,703.3
6.	Կոտայք	25,663.19	210.9	10.10	281,495
7.	Շիրակ	66,417.25	227.0	8.27	181,486.1
8.	Սյունիք	63,214.69	92.4	36.54	303,009.2
9.	Վայոց ձոր	12,483.83	36.5	4.50	41,279.5
10.	Տավուշ	51,141.30	98.9	2.34	84,157.9

DEA մեթոդի կիրառումով ՀՀ մարզերի ռեսուրսների օգտագործման համեմատական արդյունավետության գնահատականները և կշռային

[56] Աղյուսակը կազմված է մեր կողմից՝ օգտագործելով.
1. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ պաշտոնական տեղեկատվությունը,
2.ընդերքի ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը՝ Ա.Ավագյան, .ՀՀ ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականներըե, Երևան, 2000,
3.հողային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ,Համայնքային զարգացումե ծրագրի շրջանակներում ձևավորված տվյալները բազան:

բազմապատկիչները ներկայացված են աղյուսակ 2.2.2-ում: Իսկ առանձնացված ռեսուրսների օգտագործման արդյունավետության եզրագիծը՝ գծապատկեր 2.2.1-ում:

Աղյուսակ 2.2.2

ՀՀ մարզերի տնտեսական ռեսուրսների օգտագործման համեմատական արդյունավետության գնահատականները և կշռային բազմապատկիչները

№	Մարզ	Համեմատական արդյունա-վետության գնահատական	Կշիռներ			
			μ	α_1	α_2	α_3
1.	Արագածոտն	1.000	0.000007	0.000080	0.0	0.0
2.	Արարատ	1.000	0.000003	0.000102	0.0	0.0
3.	Արմավիր	1.000	0.000004	0.000076	0.0	0.0
4.	Գեղարքունիք	0.942	0.000005	0.000039	0.0	0.0
5.	Լոռի	0.503	0.000006	0.000047	0.0	0.0
6.	Կոտայք	0.979	0.000004	0.000102	0.0	0.0
7.	Շիրակ	0.645	0.000006	0.000036	0.0	0.0
8.	Սյունիք	1.000	0.000003	0.000066	0.0	0.0
9.	Վայոց ձոր	1.000	0.000024	0.000187	0.0	0.0
10.	Տավուշ	1.000	0.000012	0.000148	0.0	0.0



Գծապատկեր 2.2.1. *ՀՀ մարզերի տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության եզրագիծը*

Աղյուսակ 2.2.2-ում ստացված արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

- դիտարկված տնտեսական ռեսուրսները առավել ոչ արդյունավետ են օգտագործում հետևյալ մարզերը՝ Լոռի (0.503), Շիրակ (0.645), Գեղարքունիք (0.942) և Կոտայք (0.979)։ Իհարկե, դրանից չի հետևում, որ մյուս մարզերում ռեսուրսներն օգտագործվում են բացարձակ արդյունավետ, խոսքը վերաբերվում է միայն համեմատական արդյունավետությանը,
- տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերը առավել կարևոր նշանակություն ունեն վերոնշյալ մարզերում, քանի որ այդ մարզերը առանձնանում են նաև 1 բնակչի հաշվով ստեղծված արդյունքի ցածր ցուցանիշներով ևս,
- α_2, α_3 կշռային գործակիցների զրո լինելը արդյունք է այն բանի, որ այդ գործակիցները ստացվում են երկակի գնահատականների հիման վրա, որոնք ցույց են տալիս ռեսուրսի դեֆիցիտության աստիճանը ևս և զրո են դառնում,

եթե այդ ռեսուրսը ամբողջովին չի օգտագործվում տվյալ արդյունքի ստեղծման նպատակով: Մեր պարագայում, գործազրկության բնական մակարդակից բարձր մակարդակի պայմաններում ակնհայտ է, որ աշխատանքային ռեսուրսների թվաքանակի աճը չի կարող բերել արդյունքի ավելացման: Պատկերը էապես փոխվում է, եթե աշխատանքային ռեսուրսների փոխարեն դիտարկվում է զբաղվածության մակարդակը: Սակայն, քանի որ խնդիր էր դրվել ռեսուրսի արդյունավետության գնահատում, մեր կողմից դիտարկվել են աշխատանքային ռեսուրսները:

Ընդերքի ռեսուրսների հարաբերական կարևորության գործակիցները էապես կփոխվեն, եթե ընդերքի ռեսուրսների կշռային գործակիցները փոխարինվեն հարստությունը ներկայացնող ցուցանիշներով:

DEA մեթոդը արդյունավետ կիրառություն կարող է ունենալ նաև որոշակի ռեսուրսի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի այլընտրանքային տարբերակներից ընտրություն կատարելու գործընթացներում:

2.3. Մարզային կտրվածքով հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը խոչընդոտող հիմնախնդիրների փորձագիտական հետազոտության վերլուծություն

Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ոչ միայն ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման կարևոր գործոն է, այլ նաև այն պետք է դիտել որպես տնտեսության զարգացման ներկա փուլի արդիական խնդիրներից մեկի՝ տարածքային զարգացման անհավասարաչափությունների մեղմացման կարևոր ուղղություն:

Այդ արժեքավոր սահմանափակ ռեսուրսը հանրապետությունում օգտագործվում է ոչ արդյունավետ, ինչի մասին վկայում է այն, որ գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների զգալի հատվածը (միջինում 350 հազ. հա) հողի սեփականաշնորհման գործընթացից հետո ընկած ժամանակահատվածում նպատակային չի օգտագործվում կամ ընդհանրապես դուրս է մնացել շրջանառությունից՝ բացասաբար անդրադառնալով ոչ միայն գյուղատնտեսության ու գյուղի ներկա, այլև հողերի դեգրադացման պատճառ դառնալով, նաև ապագա զարգացման մակարդակների վրա:[57] Ստեղծված իրավիճակը մտահոգում է հանրապետության կառավարությանը, հասարակական գործիչներին, գիտության ոլորտի աշխատողներին:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացումը համարելով ՀՀ տնտեսության զարգացման հիմնական ուղղություն՝ այդ ոլորտի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների շուրջ լուրջ վերլուծություններ են կատարվել ՀՀ հայտնի տնտեսագետների կողմից, և դրանց արդյունքները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել և հիմք դառնալ երկրի տնտեսական քաղաքականության մշակման, բարեփոխման և այն իրողություն դարձնելու գործընթացում:[58]

Գյուղի և գյուղատնտեսության զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր են

---

[57] Ատենախոսության այս ենթագլխում բերված և հաշվարկված քանակական տվյալների աղբյուրը ՀՀ ՏԿԶ նախարարության ,Համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակը ներկայացնող տեղեկատվական բազանե է:

[58] Հ.Սարգսյան, Ա.Մակրոսյան. Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014:

իրականացվել ՀՀ կառավարության և տարբեր միջազգային կառույցների կողմից, որոնցում ընդգրկված ոլորտները խիստ բազմազան են (սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների բարեփոխումներ, գյուղատնտեսական տեխնիկայով և էլիտար սերմերով ապահովելու, արտոնյալ վարկեր տրամադրելու և այլ ուղղություններով):

Կանգ չառնելով իրականացված ծրագրերի արդյունավետության գնահատման և արդյունքների վերլուծության վրա, նկատենք, որ գյուղատնտեսական նշանակության հողերի մշակվող տարածքի ընդլայնման վրա, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, դրանց ազդեցությունները զգալի չեն, և գյուղատնտեսության զարգացման էքստենսիվ աճի գործոնի չօգտագործման հիմնախնդիրը հանրապետությունում շարունակվում է պահպանվել:

Մարզային կտրվածքով գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործվող հատվածի վերաբերյալ վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 2.3.1-ում, իսկ փոփոխման դինամիկան՝ գծապատկեր 2.3.1-ում:

Աղյուսակ 2.3.1-ից երևում է, որ այն մարզերում, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողերում գերակշռում են վարելահողերը, չօգտագործվող հողերի մասնաբաժինն ավելի մեծ է: Չօգտագործվող հողերի մասնաբաժինը ընդգծված բարձր է Արագածոտնի (47%), Արարատի (մոտ 38%) և Արմավիրի (26.25%) մարզերում: Չմշակված գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների զբաղեցրած տարածքի փոփոխման դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն որևէ օրինաչափություն չի ցուցաբերում:

Աղյուսակ 2.3.1[59]

[59] Աղյուսակում ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողերը ներառում են հետևյալ հողատեսքերը՝ վարելահող, արոտավայր, այգիներ և խոտհարքներ:

Ըստ մարզերի չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսները և դրանց մասնաբաժինը մարզի գյուղատնտեսական նշանակության հողերում 2014թ.

№	*Մարզը*	*Գյուղատնտեսական նշանակության հողեր, հա*	*Չօգտագործվող հողատարածքներ, հա*	*Չօգտագործվող հողատարածքների մասնաբաժինը մարզի գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում, %*
1.	Արագածոտն	209 481.31	98 496.27	47.02
2.	Արարատ	151 500.19	57 242.92	37.78
3.	Արմավիր	91 954.47	24 136.87	26.25
4.	Գեղարքունիք	304 581.24	54 045.13	17.74
5.	Լոռի	234 285.45	19 020.55	8.12
6.	Կոտայք	137 765.47	19 105.80	13.87
7.	Շիրակ	208 428.48	28 927.07	13.88
8.	Սյունիք	269 824.52	17 288.85	6.41
9.	Վայոց ձոր	183 265.99	23 852.71	13.02
10.	Տավուշ	88 871.40	19 168.80	21.57
	Ընդամենը	***1 879 958.52***	***453 333.16***	***24.11***

Շուկայական տնտեսության պայմաններում այդպիսի սահմանափակ և չփոխարինվող ռեսուրսի չօգտագործման պատճառները կարող են լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր հիմնախնդիրներ, որոնց թվարկումն ու հիմնավորումը տեսականորեն բարդություն չի ներկայացնում: Դրանք հիմնականում կարելի է կապել գյուղացիական տնտեսությունների ֆիզիկական, ֆինանսական, արտադրական կարողությունների սահմանափակությամբ, իրացման հետ կապված բարդությունների, եկամտի այլընտրանքային տարբերակներ ունենալու և այլ գործոնների հետ: Այդ պատճառները, եթե խոսքը վերաբերվում է հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված տնտեսական քաղաքականության հասցեական ապահովմանը, առնվազն մարզային կտրվածքով որոշակիացման կարիք ունեն:



Գծապատկեր 2.3.1. Ըստ մարզերի գյուղատնտեսական չօգտագործվող հողերի փոփոխման դինամիկան 2006-2014թթ.

Աշխատանքի այս բաժնում ներկայացված են մարզային կտրվածքով գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման հիմնախնդրի առաջացման պատճառներ և դրանց խորության գնահատման նպատակով մեր կողմից կատարված վերլուծության արդյունքները:

Վերլուծությունը կատարվել է ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրության տակ գտնվող ,Համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակըե ներկայացնող փորձագիտական հարցման մեթոդով ձևավորված տեղեկատվական բազաի հիման վրա, որում ընդգրկված են բոլոր գյուղական համայնքները: Բազան ներառում է նաև համայնքների ղեկավարների կողմից տրված փորձագիտական գնահատականների բաժին գյուղական համայնքներում չօգտագործված հողերի մակերեսների և դրանց չօգտագործման պատճառների

վերաբերյալ: Նշված տեղեկատվական բազան ձևավորելու համար որպես գործիք օգտագործվել է հարցաթերթը, որում փորձագիտորեն գնահատելու համար առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները (պատճառները)[60].

- ականապատված/բռնազավթված,
- աղակալված/ճահճակալված և/կամ դեգրադացված,
- ոչ եկամտաբեր,
- բնակավայրից հեռու հողեր,
- չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող,
- սեփականատերը բացակա է,
- սեփականատերը նյութական միջոցներ չունի,
- սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել,
- այլ պատճառներ:

Նշված աղբյուրի տեղեկատվության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2014 թվականին հանրապետությունում տարբեր հիմնախնդիրների պատճառով չի մշակվել 453,333.16 հա հողատարածք:

Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների չօգտագործվող տարածքների և չօգտագործման պատճառների՝ համայնքների ղեկավարների կողմից տրված փորձագիտական գնահատականների վերլուծության ամփոփ արդյունքները ներկայացված են Աղյուսակ 2.3.2-ում:

---

[60] Տեղեկատվական բազան ձևավորվել է ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացված ,Համայնքային զարգացումե ծրագրի շրջանակներում և այն յուրաքանչյուր տարի արդիականացվում է ՀՀ ՏԿԶՆ նախաձեռնությամբ:

Աղյուսակ 2.3.2

Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողատարածքները և չմշակման պատճառները

Չմշակման պատճառները	*հա*	*%*
Ականապատված, բռնազավթված	24,933.32	5.5
Աղակալված/ճահճակալված և/կամ դեգրադացված	4,986.66	1.1
Ոչ եկամտաբեր	127,839.95	28.2
Բնակավայրից հեռու հողեր	36,266.65	8.0
Չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող	67,999.97	15.0
Սեփականատերը բացակա է	49,866.65	11.0
Սեփականատերը նյութական միջոցներ չունի	109,706.62	24.2
Սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել	22,666.66	5.0
Այլ	9,066.66	2.0
Ընդամենը	***453 333.16***	***100.00***

Ինչպես երևում է Աղյուսակ 2.3.2-ից, հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ նպատակային օգտագործման և/կամ չօգտագործման պատճառներից առավել կարևորվել են հողերի ոչ եկամտաբեր լինելը (28.2%), սեփականատիրոջ նյութական միջոցներ չունենալը (24.2%): Երրորդ կարևոր պատճառը ոռոգման հիմնախնդիրն է (15%): Թվարկված հիմնախնդիրների 2006թ.-ին համայնքների ղեկավարների կողմից տրված փորձագիտական գնահատականների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջին 10 տարիներին ոռոգման հիմնախնդիրը մեղմացել է (2006թ.-ին այդ հիմնախնդրի պատճառով չէր մշակվում հողատարածքների մոտ 25%-ը), իսկ հողերի ոչ եկամտաբեր լինելու պատճառով չմշակվող հողերի մասնաբաժինը մեծացել է մոտ 3.5 անգամ: Սեփականատիրոջ բացակայության պատճառով չի մշակվում միջինում մոտ 30 հազ. հա հողատարածք:

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման հիմնախնդրի

պատճառների մարզային կտրվածքով վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ մարզերի մեծ տարբերություններ կան ինչպես չմշակվող հողերի տարածքների, ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում դրանց մասնաբաժինների, այնպես էլ այդ հիմնախնդրի պատճառների միջև:

Ըստ ուսումնասիրվող գործոնների մարզային կտրվածքով վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 2.3.3-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 2.3.3-ից, հողերի չմշակման պատճառներից հիմնականում ոչ եկամտաբեր լինելը կարևորվել է Շիրակի մարզում, որտեղ ըստ փորձագետների գնահատականների չմշակվող հողերի մոտ 93%-ի պատճառն է:

Լոռու մարզում այդ հիմնախնդրի պատճառով չեն մշակվում մարզի չմշակվող հողատարածքների 65.7%-ը:

Արագածոտնի մարզում հողերի չմշակման հիմնախնդրի ձևավորման պատճառներից առավել կարևորվում են սեփականատիրոջ սեփական միջոցներ չունենալը (30.1%), հողերի ոչ եկամտաբեր լինելը (21.1%), իսկ սեփականատիրոջ բացակա լինելու պատճառով չի մշակվում չմշակվող հողերի 15.6%-ը:

Արարատի և Արմավիրի մարզերում հիմնականում երկու հիմնախնդիր է կարևորվում՝ ոչ եկամտաբեր լինելը (համապատասխանաբար 27.94% և 27.18%) և ոռոգման անմատչելիությունը (համապատասխանաբար 20.2% և 21.87%):

Գեղարքունիքի մարզում լուրջ հիմնախնդիր է սեփականատիրոջ բացակայությունը (12.9%), սեփականատիրոջ միջոցներ չունենալը (13.6%), հողերի բնակավայրից ունեցած հեռավորությունը (19.0%) և դարձյալ ոչ եկամտաբեր լինելը (17.0%):

Սյունիքի մարզում կարևորվում է սեփականատիրոջ նյութական միջոցներ չունենալը (12%), սեփականատիրոջ բացակայությունը (11.2%) և բնակավայրից հողերի ունեցած հեռավորությունը (12.0%):

Վայոց ձորի մարզում առանձնացված գրեթե բոլոր հիմնախնդիրները որոշակի մասնաբաժին ունեն հողերի չմշակման պատճառների շարքում:

Տավուշի մարզում հողերի չմշակման հիմնական պատճառը ականապատված և բռնազավթված լինելն է (37.15%) և սեփականատիրոջ բացակայությունը (16.2%):

Աղյուսակ 2.3.3

Ըստ տարբեր պատճառների չմշակվող հողերի մասնաբաժինները մարզային կտրվածքով

(% մարզի չմշակվող հողերի մեջ)

Չմշակման պատճառներ	*Արագածոտն*	*Արարատ*	*Արմավիր*	*Գեղարքունիք*	*Լոռի*	*Կոտայք*	*Շիրակ*	*Սյունիք*	*Վայոց ձոր*	*Տավուշ*
Ականապատված, բռնազավթված	0.00	5.27	0.00	5.00	0.00	0.00	0.00	0.20	1.22	37.15
Աղակալված/ճահճակալված և/կամ դեգրադացված	1.27	2.30	2.10	9.00	0.83	0.28	0.08	0.12	0.00	0.00
Ոչ եկամտաբեր	21.10	27.94	27.18	17.00	65.73	12.00	93.08	7.65	8.20	7.20
Բնակավայրից հեռու հողեր	3.51	0.00	18.26	19.00	11.60	14.40	0.00	12.00	9.10	0.00
Չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող	2.03	20.20	21.87	6.67	2.41	24.24	0.00	0.00	0.00	0.00
Սեփականատերը բացակա է	15.60	2.10	10.15	22.90	13.20	2.60	4.20	11.20	8.40	16.20
Սեփականատերը նյութական միջոցներ չունի	30.10	9.70	5.00	13.60	1.20	0.00	0.00	12.00	11.20	2.10
Սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել	2.30	3.20	1.10	4.50	2.20	2.50	0.08	5.20	2.40	7.20
Այլ պատճառներ	24.09	29.29	14.34	2.33	2.83	43.98	2.56	51.63	59.48	30.15

Շուկայական տնտեսության պայմաններում, երբ գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում տնային տնտեսությունների սեփականությունն են, այդ ռեսուրսի արդյունավետ օգտագործմանն ուղղված պետության միջամտությունը և նպատակային քաղաքականություն իրականցնելու խնդիրը բարդացնող հանգամանքներից մեկն էլ այն է, որ մարզերում ներառված համայնքներում այդ հիմնախնդրի (հողերի չմշակման) ձևավորման պատճառները էապես տարբերվում են իրենց բնութագրերով, խորության աստիճանով և բնականաբար, համընդհանուր՝ բոլոր համայնքների ներառումով ցանկացած պետական միջամտություն չի կարող ցանկալի արդյունք ապահովել:

Քանի որ ըստ համայնքների, նշված գործոնների համեմատական կարևորությունը և ազդեցության չափը գյուղատնտեսության էքստենսիվ աճի վրա չի կարող նույնը լինել, խնդրի պետական կարգավորման մեխանիզմները նույնպես պետք է լինեն տարբերակված: Խնդրի այսպիսի դրվածքը բարդանում է ինչպես գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների բազմազանության, այնպես էլ հանրապետությունում գյուղական համայնքների մեծ թվի պատճառով:

Այս բարդություններից կարելի է խուսափել, եթե հաշվի առնենք, որ տարածքային միավորները բնութագրող գործոնների խիստ տարբերությունների առկայության դեպքում կոնկրետ նպատակի ձեռք բերմանն (հիմնախնդրի լուծմանն) ուղղված տնտեսական քաղաքականությունը հասցեական կարելի է դարձնել երկրի նույնանման բնութագրերով տարածքային միավորների շրջանացման ճանապարհով:

Այսպիսով գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված քաղաքականության շրջանակներում լուծվող խնդիրների բաղադրիչ պետք է համարել երկրի շրջանացումը ըստ այն բնութագրիչների, որոնք խոչընդոտում կամ նպաստում են առաջադրված նպատակի ձեռք բերմանը: Ասվածից հետևում է, որ երկրի տարածքը կարելի է շրջանացնել ըստ տարբեր հատկանիշների: Ուստի այն կարելի է շրջանացնել նաև ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման վրա ազդող հիմնախնդիրների ևս:

Երկրի տարածքային շրջանացումը գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ (լրիվ) օգտագործման նպատակից ելնելով նպատակահարմար է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ:

Նախ անհրաժեշտ է ըստ համայնքների հստակեցնել այն հիմնախնդիրները, որոնք հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառ, և գնահատել դրանցից յուրաքանչյուրի խորության աստիճանը։ Որպես հիմնախնդրի խորության աստիճանը բնութագրող ցուցանիշ, կարծում ենք, կարելի է դիտարկել կոնկրետ պատճառով չմշակվող հողերի մասնաբաժինը համայնքում չմշակվող հողատարածքների նկատմամբ դիտարկվող տարում.

$$C_{ij} = \frac{x_{ij}}{x_i} \qquad (2.3.1)$$

որտեղ,

i – ն համայնքի համարթիվն է,

j – ն հողերի մշակմանը խոչընդոտող գործոնի համարթիվն է,

C_{ij}– ն հողերի չմշակման պատճառ հանդիսացող j գործոնի գնահատականն է i համայնքում,

x_i – ն i համայնքում չմշակվող հողերի մակերեսն է,

x_{ij} – ն i համայնքում j գործոնի պատճառող չմշակվող հողերի մակերեսն է։

Այնուհետ, որպես շրջանացման գործընթացի երկրորդ քայլ, անհրաժեշտ է հստակեցնել յուրաքանչյուր տարածքային միավորի (համայնքի) գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող տարածքները և չմշակման պատճառները։

Հաջորդ փուլում, առանձնացված յուրաքանչյուր հիմնախնդրի համար պետք է ձևավորել փոփոխման միջակայքի սանդղակ, և դրա հիման վրա դասակարգել համայնքները։

Վերջին փուլում, ձևավորված դասակարգման հիման վրա, երկրի գյուղական համայնքները կարելի է շրջանացնել ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների խորության աստիճանի։

Այս մոտեցումը, կարծում ենք, օգտակար կարող է լինել գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանն ուղղված տարբերակված տարածաշրջանային քաղաքականություն մշակելու և այն իրողություն դարձնելու գործընթացի համար։ Այն նաև հնարավորություն կտա ապահովել այդ քաղաքականության հասցեականությունը։

Այսպես, օրինակ, եթե համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերի

չմշակման պատճառը ականապատված/բռնազավթված լինելն է, այս հիմնախնդրի լուծման մոտեցումները տնտեսական քաղաքականության շրջանակներից դուրս են:

Հողերի աղակալված/ ճահճակալված և/կամ դեգրադացված լինելու պատճառով չմշակվող հողերը շրջանառության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է իրականացնել խնդրի լուծմանն ուղղված համապատասխան նպատակային ծրագրեր:

Ըստ այս գործոնների շրջանացումը նեղացնում է գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետությանն ուղղված տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում ներառվող համայնքների ցանկը:

Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի պատճառների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող հատվածի մարզային տեղաբաշխումն անհավարաչափ է, և չմշակվող հողատարածքներում մեծ մասնաբաժին ունի Արագածոտնի մարզը (21.7%),
- գյուղատնտեսական նշանակության հողատարածքների չմշակման հիմնախնդրի պատճառներն ըստ մարզերի դիֆերենցված են, ուստի այս հիմնախնդրի հաղթահարմանը նպատակաուղղված տնտեսական քաղաքականությունը և այն իրողություն դարձնելու միջոցառումներն ու գործիքները ևս պետք է տարբերակվեն,
- վերլուծվող հիմնախնդրի առաջացման պատճառներից առավել կարևորվում է հողերի մշակումից ստացվող եկամտի ցածր մակարդակը (ոչ եկամտաբեր լինելը), ինչը հուշում է, որ շուկայական տնտեսության պայմաններում այդ հիմնախնդիրը ինքնակարգավորվող չի կարելի համարել, և պետության միջամտությունն, իր համապատասխան քաղաքականությամբ, անհրաժեշտություն է,
- գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածը չմշակելու հիմնախնդրի ձևավորման հաջորդ պատճառը (գործոնը) սեփականատիրոջ նյութական միջոցների ոչ բավարար լինելն է, որի մեղմացման ուղղությամբ հանրապետությունում իրականացվել են որոշակի ծրագրեր, օրինակ՝ այդ նպատակին է ծառայել նաև գյուղացիական տնտեսություններին արտոնյալ

վարկերի տրամադրումը: Սակայն դիտարկված 2006-2014 թվականներին այս հիմնախնդիրը հիմնականում աճի միտում է ցուցաբերել այն մարզերում, որտեղ այդ վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է: Այս ծրագրի իրականացման արդյունքում ձևավորվել են մեծ թվով ժամկետանց վարկեր: Այս հիմնախնդրի մասին որոշակի պատկերացում է տալիս նաև մարզային կտրվածքով արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը: Ըստ այս ցուցանիշի առանձնանում են Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերը, որոնցում արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը դիտարկված տարիներին տատանվում է մարզի գյուղական համայնքների տնային տնտեսությունների 1/3-ի սահմաններում[61], ինչը խոսում է նաև հանրապետության աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման մասին,

- գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի ձևավորման կարևոր պատճառներից է ոռոգման ջրի անմատչելիությունը, սակայն այս հիմնախնդիրը նվազման միտում է ցուցաբերում, ինչը պետք է վերագրել ՀՀ կառավարության և տարբեր միջազգային կառույցների կողմից այդ ոլորտում իրականացվող ծրագրերին,
- գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանն ուղղված տարածաշրջանային քաղաքականության հասցեականությունն ապահովելու գործընթացին կարող է օժանդակել ըստ առանձին գործոնների (հողերի չմշակման պատճառների) համայնքների շրջանացումը:

[61] ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրության տակ գտնվող «Համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակը» ներկայացնող փորձագիտական հարցման մեթոդով ձևավորված տեղեկատվական բազա

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ՀՀ մարզերի արտադրական ռեսուրսների արդյունավետության բարձրացումը որպես տարածաշրջանային քաղաքականության առանցքային խնդիր

Տարածաշրջանային քաղաքականությունը երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր բաղադրիչն է, քանի որ տնտեսության զարգացմանն ուղղված բոլոր գործընթացներն իրականացվում են տարածքային միավորներում՝ հաշվի առնելով դրանց հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Տարածաշրջանային քաղաքականությունը կարելի է դիտարկել որպես երկրի տարածքային միավորների համաչափ կայուն զարգացմանը նպատակաուղղված գործունեության գաղափարախոսություն:

,Տարածաշրջանային քաղաքականությունե հասկացությունը միանշանակ չի մեկնաբանվում, հետևաբար միանշանակ չեն ընկալվում նաև այդ գաղափարախոսության նպատակներն ու դրանց իրագործման մոտեցումները: Ներկայացնենք այդ հասկացության մի քանի հանրագիտարանային սահմանումներ՝ այսպես օրինակ տարածաշրջանային քաղաքականության նպատակ է համարվում ,երկրի տարբեր աշխարհագրական հատվածների միջև արդյունաբերության, բարեկեցության, զբաղվածության հավասարաչափ բաշխումըե: [62]

Տարածաշրջանային քաղաքականության նպատակի այսպիսի սահմանման մեջ, եթե բարեկեցության հավասարաչափ բաշխման տակ հասկանանք ըստ երկրի տարածաշրջանների կյանքի պայմանների և կենսամակարդակի նույնանման պայմանների ապահովումը և բնակչության եկամուտների հավասարաչափ բաշխումը, ապա անհասկանալի է մնում արդյունաբերության հավասարաչափ բաշխման նպատակն այն առումով, որ երկրի աշխարհագրական որևէ հատվածը կարող է մասնագիտացած լինել և համեմատական առավելություններ ունենալ այլ ճյուղերում,

[62] Пасс К., Лоус Б., Пендлтон Э., Чедвик Л., Большой толковый словарь бизнеса. Русско-английский, англо-русский, АСТ, М., 1998, стр. 3

օրինակ՝ գյուղատնտեսության կամ ծառայությունների ոլորտում (ինչպես հանգստի գոտիներում):

Մեկ այլ հանրագիտարանային սահմանման համաձայն ,տարածաշրջանային քաղաքականությունը դաշնային կառուցվածք ունեցող երկրներում ներառում է տնտեսական ներուժի տարածքային տարբերությունների վերացմանն ուղղված տնտեսական քաղաքականության միջոցառումներն ու պլանները: [63]

Տնտեսագիտական հանրագիտարանում տարածաշրջանային քաղաքականությունը համարվում է երկրի կառավարության և այլ կառույցների կողմից իրականացվող քաղաքականության բաղադրիչ, որի խնդիրն իրականացվող քաղաքականությունների տարածքային կազմակերպումն է: [64]

Ըստ տարածաշրջանային տնտեսագիտության ոլորտի հայտնի տնտեսագետ Վ. Կոտիլկոի. ,տարածաշրջանային քաղաքականության գլխավոր նպատակը երկրի տարածքային միավորների միջև առկա անհավասարաչափությունները նվազագույնի հասցնելն է, իսկ ներառվող խնդիրները՝ միջտարածաշրջանային և միջբյուջետային հարաբերությունները, իրականացման մեխանիզմները, տարածքային զարգացման պետական կարգավորումը, սկզբունքներն ու նորմատիվները, տնտեսական կարգավորիչ ծրագրային մեթոդներըե: [65]

,Տարածաշրջանային քաղաքականությունե հասկացության մեկնաբանությունները ներկայացվածով չեն սահմանափակվում, սակայն այսքանն էլ բավական է այդ գաղափարախոսության ընդհանրական բնույթի և ձևավորման բարդությունների մասին պատկերացում կազմելու համար։

Տարածաշրջանային քաղաքականության և այն իրողություն դարձնելու խնդիրները բարդացնող հանգամանքներից մեկն էլ այն է, որ այն ինչ-որ չափով միահյուսված է ոլորտային քաղաքականությունների հետ, և առաջանում է գործառույթների տարանջատման խնդիր։ Այս առումով տեղին է ներկայացնել նաև հայտնի տնտեսագետ Ա. Գրանբերգի կողմից տարածաշրջանային քաղաքականությանը տրված բնորոշումը. ,տարածաշրջանային քաղաքականության նպատակը, դրա տարբեր ձևակերպումների

---

[63] Экономика и право. Энциклопедический словарь Габлера, М., 1998, стр. 6

[64] Райзберг Б., Экономическая энциклопедия, М., 1995, стр. 578

[65] Котилко В.В., Региональная экономическая политика, М., стр. 25-43

գոյության պայմաններում, արտահայտում է տնտեսապես արդյունավետի և սոցիալապես արդարացիի միջև փոխզիջումը: [66]

Համաձայնվելով այն գաղափարի հետ, որ տարածաշրջանային քաղաքականությունն ուղղված է երկրի տարածքային միավորների համաչափ կայուն զարգացում ապահովելուն, և եթե տարածքային միավորների տնտեսական զարգացման մակարդակների միջև համաչափությունները արդեն խախտված են, ապա այդ գաղափարախոսությունը իրողություն դարձնելու համար գործառույթների, լուծվող խնդիրների, միջոցառումների շրջանակը հստակեցնելու կարքի ունի, որը էապես կարող է տարբերվել ըստ երկրների՝ կախված կոնկրետ երկրի առանձնահատկություններից:

Տարածաշրջանային քաղաքականության նպատակի ձևակերպման մեջ ևս պետք է հստակություն մտցնել այն առումով, որ համաչափ զարգացում ասելով չպետք է հասկանալ տնտեսության բոլոր ճյուղերի հավասարաչափ տեղաբաշխումը ըստ տարածքային միավորների: Համահարթեցումը վերաբերվում է դրանցում ապրող բնակչության կյանքի պայմաններին, կենսամակարդակին, աշխատանքային ռեսուրսների զբաղվածության ապահովմանը:

Տարածաշրջանային քաղաքականության խնդիրների և դրանց լուծման մոտեցումների շարքը հստակեցնելու նպատակով տարածքային միավորները (մեր պարագայում մարզերը) դիտարկենք որպես սոցիալ-տնտեսական համակարգ՝ նպատակաուղղված զարգացմանն ու գոյացատևմանը և այն կառուցվածքավորենք ըստ դրանցում ներառված ոլորտների և գործունեության ուղղությունների:

Տարածքային միավորների համակարգում որպես ոլորտներ պետք է տարանջատել սոցիալական, տնտեսական, ու բնական միջավայրի (բնության) ոլորտները, որոնք պայմանավորում են այդ համակարգի գոյատևումն ու զարգացումը:

Սոցիալական ոլորտը (ենթահամակարգը) ապահովում է բնակչության կյանքի պայմանները, վերարտադրությունն ու սոցիալական զարգացման տարբեր բնութագրիչներ և ձևավորում է սոցիալական ոլորտի զարգացման համար ռեսուրսների պահանջարկը:

---

[66] Гранберг А.Г., Основы региональной экономики, М., 2004. стр. 3

Տնտեսական համակարգում ստեղծվում են ապրանքների և ծառայությունների տեսքով նյութական արժեքներ՝ դարձյալ ձևավորելով ռեսուրսների նկատմամբ պահանջարկ:

Բնական միջավայրը տալիս է այդ տարածքային միավորում բնակչության կյանքի համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները, և այդ միջավայրի նպատակային արդյունավետ օգտագործումն ու պահպանումը տարածքային միավորների զարգացման ու գոյատևման անհրաժեշտ պայմանն է:

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է առանձնացնել տարածաշրջանային քաղաքականության երեք բաղադրիչներ՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական (կենսամիջավայրի պահպանման):

Թվարկված յուրաքանչյուր ոլորտում կարելի է առանձնացնել գոյատևման և զարգացման համար անհրաժեշտ հետևյալ բաղադրիչները՝ ռեսուրսային (որը ներառում է նաև աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները), կազմակերպական՝ կառավարման համակարգը:

Այսպիսով՝ երկրի տարածաշրջանային քաղաքականության խնդիրների շարքում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ, այն պետք է դիտարկել որպես տարածաշրջանային քաղաքականության առանձնացված բաղադրիչների նպատակների իրականացման միջոց: Մյուս կողմից, երկրի տնտեսական բնական ռեսուրսներն ունեն տարածաշրջանային բաշխում և այդ ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման խնդիրը դառնում է տարածքային կառավարման կարևոր գործառույթ և տարածաշրջանային քաղաքականության ,կենսամիջավայրի պահպանությանե բաղադրիչի նպատակ:

Վերը ներկայացված դատողությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ըստ տարածքային միավորների տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը պետք է համարել տարածաշրջանային քաղաքականության առանցքային խնդիր:

Ինչպես նշեցինք, խնդիրը բարդանում է նրանով, որ այդ ռեսուրսների կառավարման գործառույթը վերապահված է տարբեր գերատեսչությունների, և առաջանում է ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրի փոխհամաձայնեցման խնդիր:

Ասվածը պարզաբանելու նպատակով խնդիրը ներկայացնենք գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման օրինակով:

Հողային ռեսուրսների (որպես գյուղատնտեսության ճյուղի զարգացման հիմնական ռեսուրս) արդյունավետության բարձրացման խնդիրները բնական է, որ պետք է համարվեն երկրի ագրարային քաղաքականության բաղադրիչ և այն իր արտահայտությունն ու արժանավույն տեղը պետք է զբաղեցնի այդ քաղաքականությունն իրողություն դարձնելուն ուղղված ծրագրերում: Մյուս կողմից, հողային ռեսուրսների արդյունավետության բարձրացումը տարածաշրջանային քաղաքականության բաղադրիչ է տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելու տեսանկյունից: Եվ եթե համերկրային շահերից ելնելով սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում արդյունավետ կարող է համարվել մի տարածաշրջանում ծրագրերի իրականացումը, ապա տարածքային զարգացման տեսանկյունից գնահատելով ծրագրերի հասցեականությունը կարող է փոխվել (չհամընկնել), Այստեղ է, որ փոխհամաձայնեցման խնդիր է առաջանում ,բացարձակ արդյունավետիև և ,սոցիալապես արդարացիիե միջև:

Կարծում ենք, տարածաշրջանային և ոլորտային քաղաքականությունների փոխհամաձայնեցումը պետք է կատարել կոնկրետ իրավիճակից և լուծվող խնդիրների առանձնահատկություններից ելնելով՝ իրավիճակները առանձնացնելով հետևյալ տրամաբանությամբ.

- տնտեսության զարգացման տվյալ փուլում առաջնային նշանակություն է ստացել տարածաշրջանային սոցիալ-տնտեսական մակարդակների մեծ շեղումների մեղմացումը, կարևորվում է տարածքային միավորների (միավորի) բնակչության կենսամակարդակի և կյանքի պայմանների բարձրացման խնդիրը,
- տարածքային միավորներն ունեն ոչ արդյունավետ օգտագործվող տնտեսական ռեսուրսներ, որոնց արդյունավետության բարձրացումը կարևորվում է երկրի, տարածքային միավորների և այդ ռեսուրսն օգտագործող տնտեսական ոլորտի (ոլորտների) համար,

- երկրի տարածքային միավորները համաչափ զարգացած են, տարածաշրջանային խնդիրներն ընթացիկ են և մտահոգության տեղիք չեն տալիս,
- երկիրն ունի դեպրեսիվ վիճակում հայտնված տարածքային միավորներ, որի տնտեսական ռեսուրսներն աստիճանաբար դեգրադացիայի են ենթարկվում։

Ներկայացված իրավիճակներում տարածաշրջանային և ոլորտային քաղաքականությունների փոխհամաձայնեցման սխեմաները տարբեր կլինեն։

Առաջին իրավիճակում կարևորվում են տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում լուծվող խնդիրները, և բնականաբար, դրա հետ կապված ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը այդ քաղաքականության կողմից առաջադրված խնդիրների լուծման լավագույն տարբերակն է։

Այս առումով տնտեսական ռեսուրսների արդյունավետության բարձրացումը պետք է համարել երկրի տարածաշրջանային քաղաքականության առանցքային խնդիր։

Այսպիսի իրավիճակը համընկնում է ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլի հետ, երբ մարզերում ունենալով տնտեսական ներուժ, դրանց ոչ արդյունավետ օգտագործման պատճառով դրանց զգալի մասն ունի սոցիալ-տնտեսական զարգացման համեմատական ցածր մակարդակ։ Տնտեսական զարգացման և ռեսուրսներով ապահովվածության մակարդակների անհամապատասխանությունները ցուցադրվել են սույն աշխատանքի 2.1 և 2.2 բաժիններում։

Տարածաշրջանային քաղաքականությունը երկրի տնտեսական քաղաքականության իրականացման տարածքային կտրվածքն է, դրա դրույթների որոշակիացումն ըստ տարածքային միավորների։

Երկրի տարածքային միավորների առանձնահատկությունները, դրանցում առկա տնտեսական ռեսուրսների, զարգացման հնարավորությունների հաշվառումը ոլորտային քաղաքականությունների մշակման ժամանակ անհրաժեշտություն է։ Այս առումով, եթե դիտարկենք տարածաշրջանային և ոլորտային քաղաքականությունների փոխհամաձայնեցման խնդիրը, թելադրողը պետք է լինեն տարածաշրջանային զարգացմանն ուղղված քաղաքականության խնդիրները։

Վերը ներկայացված դատողությունները հուշում են այն խնդիրներն ու միջոցառումները, որոնք պետք է նախորդեն տարածաշրջանային քաղաքականության մշակմանն ու ոլորտային քաղաքականությունների հետ փոխհամաձայնեցմանը:

Այդ խնդիրների շարքին պետք է դասել հետևյալները.

- տարածքային միավորների սոցիալ-տնտեսական իրավիճակի համեմատական դինամիկ վերլուծություն և դրանցում առկա հիմնախնդիրների բացահայտում,
- տարածքային միավորներում առկա տնտեսական ռեսուրսների գնահատում, արդյունավետ օգտագործման ուղղությունների մշակում, ռեսուրսների օգտագործման այլընտրանքային տարբերակներից արդյունավետ տարբերակի ընտրություն,
- խնդրահարույց տարածքային միավորների առանձնացում և դրանց տիպաբանություն՝ առանձնացնելով տարածքային միավորների այն տիպատեսակները, որոնք ունեն ռեսուրսային ներուժ և դրան ոչ համապատասխան զարգացման մակարդակ,
- առանձնացված տարածքային միավորներում առկա հիմնախնդիրների հաղթահարման տարբերակների քննարկում համապատասխան ոլորտային գերատեսչությունների հետ, ոլորտային և տարածքաշրջանային քաղաքականությունների փոխհամաձայնեցում:

Թվարկված խնդիրները, որոնցից յուրաքանչյուրն առանձին մանրամասնեցման, մեթոդական ապահովվածության, բազմակողմ քննարկման կարիք ունի, կարող են հիմք դառնալ տարածաշրջանային քաղաքականության մշակման և տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Ցավոք, պետք է նկատել, որ ՀՀ տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերի և միջոցառումների ցանկը խիստ սահմանափակ է:

Նախկին ՀԽՍՀ տարածաշրջանային քաղաքականությունը, ինչպես և ողջ ԽՍՀՄ տարածքում, նպատակաուղղված էր արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխմանը և տնտեսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

Առանցքային նշանակություն էր տրվում տնտեսական ռեսուրսների լրիվ զբաղվածությանն ու օգտագործմանը։

Կենտրոնացված պլանային տնտեսության պայմաններում այս խնդիրների լուծումը բարդություն չէր ներկայացնում այն առումով, որ նյութական ռեսուրսների հանրային սեփականության պայմաններում, դրանք իրականցվում էին դիրեկտիվ բնույթ ունեցող պլանների և որոշումների հիման վրա։

Տարածաշրջանային գլոբալ խնդիրների լուծման նպատակով արդյունավետ կիրառություն էին գտնում նաև նպատակային ծրագրերի մեթոդները, որոնք ի վերջո վեր էին ածվում դիրեկիվ բնույթ ունեցող պլանների։

Բնական է, որ շուկայական տնտեսության պայմաններում, նախկին հրամայական մեթոդներն այլևս չէին կարող գործել, և պահանջվում էր անցումային տնտեսության առանձնահատկություններին համապատասխան նոր բովանդակությամբ տարածաշրջանային քաղաքականություն՝ նպատակաուղղված երկրի նոր վարչատարածքային միավորների համաչափ զարգացմանը, դրանցում առկա տնտեսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը խթանելու ճանապարհով։

Սույն աշխատանքի նախորդ բաժիններում կատարվել է ՀՀ տարածքային միավորների սոցիալ-տնտեսական իրավիճակի համեմատական, դինամիկ, վերլուծությունը: Սոցիալ-տնտեսական իրավիճակի համեմատությունը տարածքային միավորների ռեսուրսներով ապահովվածության հետ ցույց տվեց, որ տնտեսության զարգացման ներկա փուլում տարածքային կտրվածքով լուրջ հիմնախնդիրներ են ձևավորել ինչպես տարածքային միավորների ոչ համաչափ զարգացման, այնպես էլ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման ոլորտներում։ Դա խոսում է երկրում տարածաշրջանային քաղաքականության ուղղությունների վերանայման մասին։

Փաստն այն է, որ անցումային շրջանի սկզբնական փուլում տարածաշրջանային քաղաքականությունը և տարածաշրջանների խնդիրները կառավարության ուշադրությունից դուրս էին մնացել: Դրա ապացույցն է նաև այն, որ երկրի զարգացման ծրագրերում դրանք գրեթե չէին արտացոլվել։ Օրինակ՝ 2003-2007թթ. գործունեության ծրագրերում այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները ներկայացված են

երեք կետերով: [67] Դա բերեց նրան, որ տնտեսության զարգացման ներկա փուլում ՀՀ տարածաշրջանային քաղաքականությունը դեռևս սաղմնային փուլում է և հատվածային բնույթ ունի։

Երկրում իրականացվող տարածքային կտրվածքով միջոցառումներն ու ծրագրերը, չնայած 2011թ.-ին ընդունված ,Տարածքային զարգացման հայեցակարգինե, չեն բխում այդ հայեցակարգի դրույթներից, և չեն տեղավորվում միասնական հայեցակարգային պատկերում։ Երկրում իրականցված ներկա տարածաշրջանային քաղաքականությունը հիմնականում ուղղված է սոցիալական ենթակառուցվածքների խնդիրների լուծմանը։

Տարածաշրջանային քաղաքականության խնդիրների շարքում տեղ չեն գտնում տարածքային միավորներում առկա ռեսուրսների արդյունավետության բարձրացման, գործարարության զարգացման խնդիրները։ Կարևորելով ենթակառուցվածքների զարգացումը Հայաստանի Հանրապետության տարածքային միավորներում, նկատենք, որ դա կարող է բերել երկրի դրամական միջոցների ոչ արդյունավետ օգտագործմանը, եթե դրանց չծառայեն գործարար միջավայրի ակտիվացմանը։

Ասվածը հիմնավորելու նպատակով համառոտ ներկայացնենք մարզային (կամ համայնքային) կտրվածքով իրականացված ծրագրերը, որոնք կարելի է վերագրել երկրի տարածաշրջանային քաղաքականությանը։

Պետական բյուջեի միջոցներով մարզերում կատարված ներդրումների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին հինգ տարիների ընթացքում համայնքներում ծախսված պետական բյուջեի միջոցների մեծ մասը (միջինում 75%) կատարվել է կրթության ոլորտում՝ հիմնականում կրթական հաստատությունների վերանորոգման նպատակով: [68] Մյուս ծախսերը բաժին են ընկնում բնակչության սոցիալական պաշտպանությանը, հանգստի և մշակույթի ոլորտին, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին և սոցիալական այլ ոլորտներին, որոնց մասնաբաժինները դիտարկված տարիներին տարբեր են։

Մարզային և համայնքային կտրվածքով իրականացվող ծրագրերի մեջ մասնակցություն են ունեցել միջազգային տարբեր կազմակերպություններ,

---

[67] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2003-2007թթ.), Երևան, 2003
[68] Հաշվետվություններ պետական բյուջեի կատարման վերաբերյալ (2010-2014թթ)

մասնավորապես. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Ասիական զարգացման բանկը (ADB), Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի զարգացման գործակալությունը (UNDP), ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (UNFAO) և այլն:

ՀՀ մարզերում և համայնքներում միջազգային կառույցների աջակցությամբ իրականացված ծրագրերի ուղղությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ ևս մեծ մասնաբաժին ունեն սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների բարեփոխումներին և վերականգնմանը նպատակաուղղված ծրագրերը: Ծրագրեր են իրականացվել խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերականգնման և բարեփոխման, միջմարզային և միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման, տնտեսության տարբեր հատվածների զարգացմանը նպատակաուղղված խորհրդատվության, մեթոդական ապահովման և այլ ուղղություններով:

Նկատենք որ, այս ծրագրերում ևս ուշադրությունից դուրս են մնացել երկրի տարածքային միավորներում տեղաբաշված տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները:

Լիովին համաձայնվելով այն մոտեցման հետ, որ երկրի քաղաքացին, անկախ բնակության վայրից, պետք է նույնանման հնարավորություն ունենա օգտվելու կյանքի պայմաններն ապահովող ենթակառուցվածքներից և այս տեսանկյունից կարևորելով իրականցված ծրագրերը, կարծում ենք, որ դրանց արդյունավետությունն ավելի բարձր կլիներ, եթե դրանք իրականցվեին ոլորտային և տարածաշրջանային քաղաքականությունների առկայության և փոխհամաձայնեցվածության պայմաններում:

Ցանկացած երկրի տարածաշրջանային քաղաքականության հիմնական բաղադրիչներից մեկը տարածքային միավորների ֆինանսական կարողությունների համահարթեցման նպատակով տրամադրվող տրանսֆերտներն ու սուբսիդիաներն են:

ՀՀ-ում այդ գործընթացի կազմակերպան իրավական հիմքը ,ֆինանսական համահարթեցման մասինե, ,ՀՀ բյուջետային համակարգի մասինե, ,Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքների համապատասխան դրույթներն են: [69] [70] [71]

---

[69] Հայաստանի Հանրապետության օրենքը ,Ֆինանսական համահարթեցման մասինե, 1998

[70] Հայաստանի Հանրապետության օրենքը ,ՀՀ բյուջետային համակարգի մասինե, 1997

Ըստ ‚Ֆինանսական համահարթեցման մասին‛ ՀՀ օրենքի այդ տրանսֆերտների տրամադրումը նպատակ է հետապնդում ապահովել համայնքների ներդաշնակ զարգացում և վերապահված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների տարբերությունների նվազեցում (հոդված 3):

Այս օրենքը ևս մասնագետների հավանությանը չի արժանանում այն առումով, որ օրենքում ձևակերպված նպատակի (ապահովել ֆինանսական համահարթեցման ճանապարհով համայնքների ներդաշնակ զարգացումը) և այդ նպատակով տրված տրանսֆերտների հիմքում դրված բանաձևերի միջև կապը չի ապահովվում: Բանաձևերի հիմքում դրվել է բնակչության թվաքանակը, մինչդեռ համայնքներին վերապահված լիազորությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գծային կախվածության մեջ չեն բնակչության թվաքանակից: [72]

Չներկայացնելով օրենքի մանրամասն նկարագիրը և վերլուծությունը, նշենք, որ դրա փոփոխությունների անհրաժեշտությունը գտնում է նաև ՀՀ կառավարությունը և այն փոփոխությունների փուլում է:

Աշխատանքի այս բաժնում ‚տարածաշրջանային քաղաքականություն‛ հասկացության և դրա խնդիրների շուրջ ներկայացված դատողություններն ու իրականացնավող գործընթացների վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- տարածաշրջանային քաղաքականությունը միտված է երկրի տարածքային միավորների սոցիալական, տնտեսական ոլորտների համաչափ զարգացում և կենսամիջավայրի, այդ թվում նաև բնական ծագում ունեցող ռեսուրսների պահպանությունն ու զարգացումը ապահովելուն: Այդ նպատակին հասնելու կարևոր միջոց պետք է համարել առաջին հերթին դրանցում առկա տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը ուղղված և տարածքային միավորների համեմատական առավելություններն օգտագործելու միջոցառումներն ու գործիքները,

[71] Հայաստանի Հանրապետության օրենքը ‚Տեղական ինքնակառավարման մասին‛, 1996

[72] Եղիազարյան Բ., Սարդարյան Լ., Համայնքային հարկային եկամուտները և ֆինանսական համահարթեցման քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր, ԵՊՏԻ, Երևան 2004, էջ 9-13

- ՀՀ տարածաշրջանային քաղաքականության վերլուծությունից հետևում է, որ որպես այդ քաղաքականության նպատակ դիտարկվում է տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելը, այն պայմաններում, երբ արդեն ձևավորված են մտահոգիչ սահմանների հասնող անհավասարաչափություններ: Այս առումով ՀՀ տարածաշրջանային քաղաքականության հայեցակարգում ձևակերպված նպատակը վերանայման կարիք ունի,
- ՀՀ տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում ողջ անցումային շրջանում հիմնականում կիրառվել են երկու մոտեցումներ՝ համայնքներին ֆինանսական օժանդակություն և համայնքային կտրվածքով սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների զարգացմանը նպատակաուղղված ներդրումային ծրագրեր: Վերջինիս համար օգտագործվել են հանրային բյուջեի եկամուտները և միջազգային տարբեր կառույցների կողմից օժանդակության կարգով տրամադրված միջոցները:

Վերը ներկայացված եզրահանգումներից հետևում է, որ ՀՀ տարածքային քաղաքականությունում գրեթե բաց է մնում տարածքային զարգացման քաղաքականության տնտեսական հատվածը, որի զարգացմանը նպատակաուղղված տարածքաշրջանային քաղաքականությունը իրողություն դարձնելու գործընթացում առանցքային նշանակություն պետք է տալ այն միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են տարածքային միավորներում առկա տնտեսական ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը:

3.2. Նպատակային ծրագրերի ձևավորումը որպես արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություն

Տարածաշրջանային քաղաքականության մշակումը, հիմնավորումը և գնահատումը պահանջում է նաև այդ քաղաքականությունն իրողություն դարձնելու նպատակով համապատասխան մոտեցումների և մեխանիզմների հստակեցում:

Տարածքային միավորների անհավասարաչափությունների մեղմացմանն ուղղված տարբեր երկրների տարածաշրջանային քաղաքականությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս այդ խնդկիրների լուծման նպատակով կիրառված մոտեցումները խմբավորել ըստ հետևյալ տեսակների.

- ընդհանուր տնտեսական քաղաքականության մեխանիզմների և մոտեցումների կիրառում,
- միկրոտնտեսական կարգավորիչ մեխանիզմներով կարգավորում,
- նպատակային ծրագրերի իրականացում,
- տարածքային միավորի և խնդրի առանձնահատկություններով պայմանավորված ոչ ստանդարտ մոտեցումներով կարգավորում:

Ընդհանուր տնտեսական քաղաքականության գործիքներից դիտարկված նպատակի կարգավորման համար կիրառվում են հարկային արտոնությունները, արտոնյալ վարկերի տրամադրումը:

Հարկային արտոնությունների տրամադրման միջոցով տարածաշրջանային խնդիրների կարգավորումը լայն կիրառություն է ստացել Եվրոպական զարգացած երկրներում՝ որոշակի տարածքային միավորներում ներդրումներ ներգրավելու նպատակն իրագործելու համար, օրինակ՝ նախորդ դարի վերջին Գերմանիայում այդպիսի արտոնություններ են ստացել հարյուրից ավել տարածաշրջաններ:

Այս մեխանիզմը կիրառվում է նաև բնակչության ներքին միգրացիան կազմակերպելու նպատակով՝ տրամադրելով եկամտահարկի զեղչեր:

Տարածաշրջանային անհավասարաչափությունների մեղմացման գործընթացի համար ավելի արդյունավետ կիրառություն ունեն միկրոտնտեսական կարգավորիչ մեխանիզմները, որոնց կիրառման նպատակով նախ կոնկրետացվում է խնդրահարույց տարածքային միավորը (միավորները) և այդ մեխանիզմների միջոցով փորձում են

ազդել այդ տարածքային միավորում կապիտալի և/կամ աշխատուժի վրա՝ դրանցում տնտեսավարող սուբյեկտին տարբեր գործողությունների համար խրախուսելու և/կամ աշխատուժի վերապատրաստելու միջոցով: Օրինակ, ՀՀ պարագայում կարելի է սուբսիդավորել այն տնտեսավարողներին, որոնք իրենց բիզնեսը տեղափոխում են Երևանից կոնկրետ մարզ:

Նպատակային ծրագրերի միջոցով տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման խնդիրները արդյունավետ լուծում են ստացել շատ երկրներում, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ տարածքում:

Մինչ մեթոդի նկարագրությունն ու դրա կիրառման հնարավորությունները մեր երկրում գնահատելը, ներկայացնենք այս մոտեցումով տարածաշրջանային խնդիրների կարգավորման մի քանի հաջողված օրինակներ:

Այսպես, դեռևս նախորդ դարի 30-ական թվականներին այս մոտեցումով ԱՄՆ-ում իրականացվել է TVA (Թենեսի հովտի) պետական կարգավորման ծրագիրը, որի արդյունքում խնդրահարույց տարածաշրջանը վեր է ածվել արդյունաբերական զարգացած տարածաշրջանի՝ զբաղվածության և միջին եկամտի կանխատեսումային նորմատիվային մակարդակներով:

ԱՄՆ-ում հաջողությամբ իրականացված տարածաշրջանային ծրագիր է համարվում ARC (Ապալաչների զարգացման) ծրագիրը, որն ընդգրկում էր ինը ենթածրագրեր, որոնց թվում նաև ռեսուրսների արդյունավետ օգտագործման (հողօգտագործման բարելավման): Այս մոտեցումը արդյունավետ կիրառություն է գտել նաև Կանադայում և Եվրոպական մի շարք երկրներում: [73]

Քանի որ գտնում ենք, որ հենց այս մոտեցումով է կարելի լուծել հանրապետությունում տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև ձևավորված և նվազման միտում չցուցաբերող անհավասարաչափությունները, ինչպես նաև տնտեսական ռեսուրսների արդյունավետության ռեսուրսների խնդիրները, այն ներկայացնենք մանրամասնորեն:

Ըստ Վ.Լեկսինի սահմանման ,նպատակային ծրագիրը գերակա խնդիրների նպատակով մշակված համալիր միջոցառումների համախումբ է, որը ներառում է

[73] Управление региональными программами в США и Канаде. М., Наука, 1983.

քաղաքական, նորմատիվային, իրավական, ֆինանսական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, տեղեկատվական, հետազոտական այլ բնույթի բաղադրիչներ, որոնք ապահովված են կատարողներով, ռեսուրսներով և կարգավորված ժամկետներով և կատարման հաջորդականությամբ: [74]

Այս սահմանման համաձայն ծրագրանպատակային մեթոդը նպատակային ծրագրի ձևավորման տեսական և գիտամեթոդական հիմքն է: Նպատակային ծրագրի ձևավորումը ենթադրում է մի շարք աշխատանքների իրականացում, որոնցից յուրաքանչյուրը տեսամեթոդական պարզորոշման կարիք ունի: Այդ աշխատանքներից կարելի է առանձնացնել.

- նպատակների հստակեցում,
- յուրաքանչյուր ենթանպատակի համար խնդիրների ցանկի սահմանում,
- յուրաքանչյուր խնդրի լուծման համար այլընտրանքային տարբերակների ձևավորում,
- յուրաքանչյուր խնդրի համար այլընտրանքային տարբերակներից ընտրություն և որոշումների կայացում,
- առանձին խնդիրների լուծման համար պահանջվող ռեսուրսների, այդ թվում նաև կադրային և ֆինանսական պահանջարկի հստակեցում,
- յուրաքանչյուր խնդրի (ենթածրագրի) իրականացման ժամկետների հստակեցում,
- տեղեկատվական ապահովում,
- կոորդինացված ղեկավարման կազմակերպում,
- ռեսուրսների արդյունավետության գնահատում և այլ աշխատանքներ:

Այս բարդությունները չեն կարող սահմանափակել այս արդյունավետ մեթոդի կիրառությունը, ընդամենը պետք է հասկանալ, որ այն բավականին աշխատատար է և պահանջում է մեծ թվով տարբեր ոլորտների մասնագետների մասնակցություն:

Փորձենք հիմնավորել այս մեթոդի օգտակարությունը ՀՀ-ում արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու միջոցով ՀՀ-ում տարածաշրջանային զարգացման անհավասարաչափությունների մեղմացմանը

[74] Лексин В.Н., Шевцов А.Н. Региональные программы в новейшей реформационной ситуации // Рос. экон. жур., 2000. № 8. С. 23-36.

նպատակաուղղված տարածաշրջանային քաղաքականության մշակման և այն իրողություն դարձնելու գործընթացների համար.

- տարածքային միավորները սոցիալ-տնտեսական բարդ համակարգեր են, որոնք ներառում են հիմնականում երեք խոշոր ենթահամակարգեր՝ սոցիալական, տնտեսական , բնապահպանական և որոնց գործունեությունը ապահովող ենթահամակարգերն են՝ ռեսուրսայինը և կազմակերպչականը (կառավարմանը),
- թվարկված ենթահամակարգերից որևէ մեկում փոփոխությունը չի կարող իր ազդեցությունը չունենալ մյուսների վրա, ուստի՝ այս համակարգում առաջադրված խնդիրները և լուծման տարբերակները պետք է դիտարկվեն համակարգային մոտեցումով, որը ծրագրանպատակային մեթոդի հիմքն է կազմում,
- տարածքային միավորների զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներն իրենց բնույթով անպիսին են, որ դրանց հաղթահարումը չի կարելի վերագրել միայն տարածքային հարցերով զբաղվող գերատեսչություններին: Դրանք նաև ոլորտային են: Այս մեթոդի կիրառման պարագայում այն դառնում է նպատակային ծրագրերն իրականացնող մարմնի գործառույթ և տարբեր ոլորտների ու տարածաշրջանային քաղաքականության փոխհամաձայնեցման խնդիր չի առաջանում,
- որոշ դեպքերում նպատակային ծրագրերի մեթոդը միակն է դառնում տարածաշրջանային խնդիրների լուծման պարագայում,
- այս մեթոդի առավելություններից է նաև այն, որ նա, ի տարբերություն վերը ներկայացված մյուս կարգավորիչ մեխանիզմների, անմիջականորեն է ազդում կարգավորվող օբյեկտի վրա,
- մեթոդը թույլ կտա մեկ միասնական նպատակի (ռեսուրսների արդյունավետ օգտագործման ճանապարհով տարածքային միավորների անհավասարա-չափությունների մեղմացում) շուրջ համախմբել բոլոր ենթանպատակները և միասնական գնահատել այդ հիմնախնդրի հաղթահարման անհրաժեշտ միջոցները,

- ծրագրանպատակային մեթոդները ապահովում են ռեսուրսների կենտրոնացվածություն մեկ նպատակի իրականացման շուրջ և ապահովում դրանց արդյունավետ օգտագործումը,
- նպատակային ծրագրերը կառավարության կողմից արժանանում են հավանության և ստանում օրենքի ուժ, դրանով իսկ մեծացնելով դրանց իրականացման հավանականությունը,
- նպատակային ծրագրերի մեթոդը տեսականորեն լավ ուսումնասիրված է և ունի բազում արդյունավետ կիրառություններ:

Նկատենք, որ տարածքային միավորների սոցիալ-տնտեսական անհավասարաչափությունների մեղմացմանն ուղղված տարածաշրջանային քաղաքականության մշակումն ու իրագործումը ծրագրանպատակային մեթոդով բարդ և պատասխանատու աշխատանք է և այն կարող է արդյունավետ լինել միայն որոշակի պայմաններում.

1) նպատակային ծրագիրը մշակող հանձնախումբը պետք է խորը գիտելիքներ ունենա մեթոդի տեսական դրույթների և գործնականում դրանց կիրառությունների վերաբերյալ,
2) ծրագիրը մշակողները պետք է լիովին հասկանան ծրագրում ներառված տարածքային միավորների հիմնախնդիրները, դրանց առաջացման պատճառները, սոցիալ-տնտեսական իրավիճակը ներկայացնող բնութագրերը, դրանց զարգացման դինամիկան, հիմնախնդիրների խորությունն ու լուծման առաջնահերթությունը, հաջորդականությունը,
3) կարողանան հիմնավորել առանձնացված հիմախնդիրների լուծման կարևորությունը և գնահատել դրանց հաղթահարման պարագայում տարածքային միավորների սոցիալ-տնտեսական վիճակի փոփոխությունները,
4) ծրագիրը մշակողները պետք է հասկանան, որ պատասխանատու են ծրագրի համար և պատրաստ լինեն պատասխանատվությունը կրելու:

Վերը թվարկված կետերով ներկայացրեցինք նպատակային ծրագիրը մշակող հանձնախմբին ներկայացվող պահանջները, որոնց բավարարելու դեպքում կարելի է ակնկալել արդյունավետ լուծում:

Հաջորդ անհրաժեշտ պայմանը վերաբերում է այդ ծրագրի կարգավիճակին: Նման ծրագրի մշակումը, ինչպես նշեցինք, խիստ աշխատատար և բարդ գործընթաց է և, եթե այն մշակվում է, պետք է ապահովվի դրա կարգավիճակը և ունենա կազմակերպական-ինստիտուցիոնալ այնիսի հենք, որը թույլ կտա ձևավորել ծրագիրը մշակող հանձնախումբը, հստակեցնել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների աղբյուրները, ըստ առանձին աշխատանքների պատասխանատուների: Մեր կարծիքով, նպատակային ծրագրի ձևավորումը կարող է իրականացվել միայն կառավարության համապատասխան գերատեսչության (օրինակ՝ տարածքային զարգացման և կառավարման նախարարության) մակարդակում:

Մեթոդի արդյունավետ կիրառության հաջորդ պայմանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովվածությունն է: Ոչ հուսալի տեղեկատվությունը բացասաբար կանդրադառնա ինչպես ծրագրի մշակման ընթացքի, այնպես էլ ծրագրի կիրառման արդյունավետության վրա:

Փաստն այն է, որ եթե առանձին գերատեսչությունների կողմից ձևավորվում են տարածքային կտրվածքով տեղեկատվական բազաներ, ապա դրանց հուսալիությունը կասկածի տեղիք է տալիս այն առումով, որ այդ տեղեկատվությունը մասնագետների կողմից չի հավաքագրվում:

Այս մեթոդի կիրառման ցավոտ կողմերից մեկն էլ ծրագրի ֆինանսական ապահովումն է:

Այս հարցի հետ կապված դարձյալ կցանկանաինք անդրադառնալ նպատակային ծրագրերի ձևավորման և իրականացման միջազգային փորձին:

Դաշնային կառավարման համակարգ ունեցող երկրներում, ինչպիսին է ԱՄՆ-ը, նպատակային ծրագրերն իրականացվում են երկու հիմնական ֆինանսական աղբյուրների հաշվին՝ երկրի և նահանգի ֆինանսական ռեսուրսների միջոցներով: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը ֆինանսավորող կառույցների կողմից կատարվում է ըստ իրականացվող աշխատանքների:

Գրեթե Եվրոպական բոլոր երկրներում ձևավորված են տարածքային զարգացման հիմնադրամներ և այդ հիմնադրամներն են ֆինանսավորում այդ երկրներում իրականցվող նպատակային ծրագրերը, իսկ որոշ երկրներում նաև պետությունը:

Հայաստանի Հանրապետությունում, հաշվի առնելով, որ տարածքային զարգացման հիմնադրամը ձևավորման փուլում է[75], նման ծրագրերի իրականացումը կարող է ֆինանսավորվել պետական բյուջեի միջոցներից, կամ միջազգային կառույցների աջակցությամբ:

Կարծում ենք, որ նպատակային ծրագրերի ձևավորման մոտեցումը տնտեսության զարգացման ներկա փուլում միակն է, որը վերը ներկայացված պահանջների պահպանման դեպքում կարող է արդյունավետ լուծում տալ հանրապետությունում կուտակված բազմաբնույթ հիմնախնդիրներին, որոնք տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման բնութագրիչն են կամ դրա հետևանքը:

Այն, որ տարածքային քաղաքականության շրջանակներում լուծում պահանջող տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափության մեղմացման և դրանցում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները պետք է դիտարկվեն և հիմնախնդիրները հաղթահարվեն միայն նպատակային ծրագրերի իրականացման ճանապարհով կասկած չի հարուցում, սակայն հարց է առաջանում, արդյոք ավելի նպատակահարմար և արդյունավետ չի լինի այդ խնդիրները դիտարկել համայնքային կտրվածքով, և նպատակային ծրագրերը ձևավորել այդ մակարդակի հիմնախնդիրների հաշվառումով: Այս պարագայում տարածքային միավորների բնութագրերը կգնահատվեն բացարձակ այլ ոչ թե ըստ մարզերի միջինացված ցուցանիշներով:

Այս երկու մոտեցումներից առաջինի (ըստ մարզերի) առավելությունն այն է, որ ծրագիրը մշակվում է պաշտոնական վիճակագրության հիման վրա և տաս մարզերի ներառումով այս առումով այն ավելի դյուրին է: Երկրորդ մոտեցման պարագայում ծրագիրն ավելի հասցեական է և նպատակները հեշտ է հստակեցնել, սակայն համայնքների մեծ թիվը և տեղեկատվության ոչ հուսալիությունը բարդացնում են ծրագրի ձևավորումը:

[75] ՀՀ կառավարության որոշման համաձայն Հայաստանի սոցիալական ներդրումային հիմնադրամը պետք է աստիճանաբար վերակազմավորվի տարածքային զարգացման հիմնադրամի, ՀՀ կառավարության 19.03.2014 №11 նիստի արձանագրություն

Կարծում ենք, որ ներկայացված բարդությունները չպետք է պատճառ դառնան ավելի որոշակիացված ծրագիր ձևավորելու գործընթացին, առավել ևս որ դրանք հաղթահարելի են:

Տարածքային զարգացման և կառավարման նախարարությունն ունի համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակը ներկայացնող բազա, որն արդիականացվում է և կարելի է նաև բարձրացնել հուսալիության աստիճանը՝ համապատասխան ոլորտների մասնագետներ ներգրավելով:

Համայնքների մեծ թվով պայմանավորվող բարդությունը կարելի է շրջանցել, եթե այդ բազայի հիման վրա ձևավորվեն համայնքների նպատակային տիպատեսակներ կամ համայնքները դասակարգվեն ըստ խնդրահարույց լինելու բնութագրի:

Այսպես, օրինակ, եթե առաջարկվող նպատակային ծրագրում որպես ենթանպատակ սահմանում ենք տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ապա գյուղական համայնքներում կարելի է առանձնացնել հետևյալ տիպատեսակները.

- հողային ռեսուրսներով ապահովված և դրանք արդյունավետ օգտագործող,
- հողային ռեսուրսներով ապահովված և դրանք ոչ արդյունավետ օգտագործող,
- հողային ռեսուրսներ չունեցող համայնքներ:

Մարզային և համայնքային կտրվածքով նպատակային ծրագրերի ձևավորմանը մեծ օժանդակություն կարող են ցուցաբերել մարզային և համայնքային ծրագրերը: Մարզային ծրագրերի ձևավորման հիմքը դրվել է 2003 թվականին Տավուշի և Գեղարքունիքի մարզերի զարգացման ծրագրերի մշակումով՝ Հայաստանի տարածքային զարգացման շրջանականերում (ծրագրեր ձևավորվել են Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարության (DFID) ֆինանսավորման աջակցությամբ): Ներկայումս մարզային զարգացման ծրագրեր ունեն հանրապետության բոլոր մարզերը: Այդ ծրագրերը ներկայացնում են մարզի միջնաժամկետ ռազմավարությունը, որը համահունչ է երկրի կայուն զարգացման ռազմավարությանը: Այդ ծրագրերը ձևավորվել են հետևյալ կարգով.

- ոլորտային աշխատանքային խմբերը (դրանց ձևավորում և մասնակցային սկզբունքով ոլորտային ծրագրերը մշակելու նպատակով) ըստ ոլորտների նախագծերի ամփոփման հիման վրա ձևավորում են մարզային ծրագրի նախնական տարբերակ, որը քննարկվում է ոլորտային աշխատանքային խմբում,
- մարզի զարգացման ծրագրի նախագիծը ուղարկվում է մարզային զարգացման հանձնաժողով, ոլորտային աշխատանքային խմբի կողմից կատարված դիտողությունների հետ համատեղ,
- եթե մարզի խորհուրդը հավանություն է տալիս մարզային զարգացման ծրագրին, այդ նախագիծն ուղարկվում է ՀՀ Տարածքային զարգացման և կառավարման նախարարություն՝ ՀՀ կառավարությանը հաստատման ներկայացնելու նպատակով:

Այդ ծրագրերը կազմվում են եռամյա կամ քառամյա կտրվածքով; դրանցում ներառված են նաև տվյալ մարզում ներդրումներ կատարելու առաջարկները համապատասխան հիմնավորումներով:

Քառամյա ծրագրեր են մշակվում նաև համայնքային կտրվածքով, որոնք հաստատվում են համայնքների ավագանիների կողմից:

Իհարկե, այդ ծրագրերը հեռու են նպատակային ծրագրերին ներկայացվող պահանջներից, սակայն, քանի որ դրանք ներառում են տվյալ տարածքային միավորում առկա հիմնախնդիրները և սոցիալ-տնտեսական բնութագրերը, դրանք կարող են լրացուցիչ տեղեկատվության աղբյուր դառնալ նպատակային ծրագրերի մշակման պարագայում:

Սույն աշխատանքի 3.1 բաժնում ներկայացված դատողություններից և հիմնավորումներից ելնելով՝ ՀՀ տարածքային միավորների արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը պետք է դիտել որպես երկրի տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման հիմնական ուղղություն:

Այս առումով յուրաքանչյուր առանձին տեսակի արտադրական ռեսուրսի արդյունավետ օգտագործումը դառնում է երկրի տարածքային միավորների միջև

անհամաչափությունների մեղմացման ծրագրի բաղադրիչ՝ առանձին ենթանպատակ, իր կարևորության համապատասխան գնահատականով:

Ինչպես նշել ենք, այդ ռեսուրսների շարքում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման խնդիրը: Ներկայացնենք այդ ռեսուրսի արդյունավետ օգտագործմանն ուղղված նպատակային ծրագրի ձևավորման շուրջ մեր կողմից առաջարկվող հայեցակարգային մոտեցումները:

1. Ենթածրագրի կառավարումը: Յուրաքանչյուր մարզում ստեղծել ,Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանըե աջակցող կառավարման մարմին, որի հիմնական գործառույթները պետք է լինեն ծրագրի դրույթների իրականացումը, վերահսկումը, գյուղատնտեսական նշանակության հողերի մոնիտորինգը և հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց նպատակաուղղված միջոցառումների շուրջ առաջարկությունների մշակումը:
2. Ծրագրի ենթանպատակները:
   - 2.1. Ապահովել գյուղատնտեսական մթերքների արտադրության եկամտաբերության կայուն մակարդակ ,գյուղատնտեսական ռեսուրսների ձեռք բերում – արտադրություն - իրացումե շղթայում ներառված բաղադրիչներից յուրաքանչյուրի արդյունավետ իրականացման և դրանց մասնակիցների փոխշահավետ համագործակցություն ապահովելու միջոցով:
   - 2.2. Օժանդակել գյուղատնտեսության արտադրության արդյունա-վետության բարձրացմանը՝ այդ գործընթացի կառավարման գիտելիքների, արտադրության և իրացման վարման մշակույթի բարձրացման ճանապարհով:
   - 2.3. Մշակել գյուղատնտեսական մթերքների իրացման կարճաժամկետ և երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման մեխանիզմներ, այդ թվում նաև պետական կառույցների հետ, ապահովել այդպիսի պայմանագրերի իրականացման իրավական հիմքեր:

2.4. Այդպիսի պայմանագրերի հետ կապված տեղեկատվությունը հասանելի դարձնել գյուղացիական տնտեսությունների համար:

2.5. Մշակել գյուղատնտեսության ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցության մեխանիզմներ, այդ թվում նաև գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպատակաուղղված պետական պատվերների իրականացման:

2.6. Մշակել հողի շուկայի զարգացմանը նպատակաուղղված միջոցառումների փաթեթ:

3. <u>Խնդիրներ</u>: Վերը ներկայացված յուրաքանչյուր ենթանպատակ ուսումնասիրության, հետազոտության կարիք ունի և դրանցից յուրաքանչյուրի ձեռք բերմանը նպատակաուղղված խնդիրները պետք է մանրամասնեցվեն՝ ներառելով նաև դրանց լուծման մոտեցումները: Որպես գլոբալ խնդիրներ կարելի է առանձնացնել հետևյալները:

3.1. Գյուղատնտեսության ոլորտում վարկային լծակների արդյունավետության բարձրացումը:

3.2. Լիզինգային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը:

3.3. Ռիսկերի կառավարման մեխանիզմների մշակումն ու իրականացումը:

3.4. Հողի շուկայի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների գնահատումն ու դրանց հաղթահարման միջոցառումների իրականացումը:

3.5. Գյուղատնտեսության ոլորտում կոոպերատիվների ձևավորման գործընթացի արագացմանը նպաստող պետական միջամտության մեխանիզմների մշակումն ու իրականցումը:

3.6. Գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորման մեխանիզմ-ների մշակումն ու իրականացումը:

3.7. Այլ խնդիրներ:

4. Ծրագրի ֆինանսավորումը: Ծրագրի ֆինանսավորման աղյուրները կարող են տարբեր լինել: Կարծում ենք, իրատեսական է նպատակային ծրագրի իրականացման նպատակով հիմնադրամի ձևավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երկրի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների ձևավորման, գնահատման, կարգավորման հարցերի շուրջ տեսագործնական մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- շուկայական տնտեսության պայմաններում տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների հիմնական պատճառը դրանց արտադրական հնարավորությունների տարբերություններն են (ռեսուրսային, աշխարհաքաղաքական, ագլոմերացիոն, ենթակառուցվածքային, ժողովրդագրական և այլն) և այն կարող է ձևավորվել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում,
- այդ իրավիճակի կարգավորմանը պետության մասնակցության անհրաժեշտության հարցի շուրջ, չնայած մասնագետների հակադիր դիրքորոշումների, միջազգային փորձը ցույց է տալիս, որ տարածքային միավորների զարգացման մակարդակների անհավասարաչափությունների պետական կարգավորման տարբեր մոդելներ արդյունավետ կիրառություն են գտել շատ երկրներում,
- այս խնդիրն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել պլանային համակարգից շուկայական հարաբերությունների անցած երկրներում՝ պայմանավորված կառավարման համակարգի, տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, արտադրական ռեսուրսների սեփականատերերի փոփոխության և այլ գործոններով, որոնք բնորոշ են միայն անցումային տնտեսությամբ երկրներին: Դա խոսում է այն մասին, որ այս երկրներում տարածքային միավորների անհամաչափությունների մեղմացմանն ուղղված տարածաշրջանային քաղաքականությունը ևս պետք է ունենա առանձնահատկություններ և արդեն ձևավորված ու զարգացած երկրներում արդյունավետ կիրառություն գտած մոդելների կիրառումը այս երկրներում կարող է շոշափելի արդյունք չապահովել, եթե հաշվի չառնվեն ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները:

2. Հայաստանի Հանրապետությունում իրականացված տարածքային զարգացման ծրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը նպատակաուղղված ծրագրերը շոշափելի արդյունք չեն ապահովել տարածքային զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման ուղղությամբ, և շեշտը պետք է դնել այնպիսի միջոցառումների վրա, որոնցով կարելի է բարձրացնել մարզերի մրցունակությունը: Այս մոտեցման համաձայն ատենախոսությունում առաջարկվում է.

- ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգում և ռազմավարությունում ընդգրկել տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա ուղղակի կամ անուղղակի ազդող մեծ թվով գործոններ,
- ավելի շատ ուշադրության կենտրոնում պահել տարածքային միավորների ներքին միջոցներն ու կարողությունները և ոչ թե դրսից ներդրումներն ու դրամական հատկացումները,
- կենտրոնանալ ոչ թե տարածքային միավորների թերությունների կամ թույլ կողմերի՝ այլ հնարավորությունների վրա,
- ավելի արդյունավետ դարձնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը:

3. ՀՀ մարզերի միջև առկա են անհավասարաչափություններ ոչ միայն ըստ մեկ բնակչի հաշվով տնտեսական ցուցանիշների, այլ նաև ռեսուրսներով ապահովվածության-ստեղծված արդյունք համապատասխանությունների միջև:

4. Արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսամեթոդական հարցերի կարևոր բաղադրիչ է ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատումը, որը սոցիալ-տնտեսական համակարգերի համար բարդ խնդիր է: Աշխատանքում առաջարկվում է և իրականացվում ծախսերի և արդյունքի ամփոփ ցուցանիշներ ձևավորելու բարդություններից խուսափել՝ բացարձակ արդյունավետության գնահատումը փոխարինելով ՀՀ մարզերի ռեսուրսների համեմատական արդյունավետությունը գնահատելու խնդրով: DEA մեթոդով մարզերի համեմատական արդյունավետության գնահատման արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

- դիտարկված տնտեսական ռեսուրսները առավել ոչ արդյունավետ են օգտագործում հետևյալ մարզերը՝ Լոռի, Շիրակ, Գեղարքունիք և Կոտայք: Իհարկե, դրանից չի հետևում, որ մյուս մարզերում ռեսուրսներն օգտագործվում են բացարձակ արդյունավետ, խոսքը վերաբերում է միայն համեմատական արդյունավետությանը,
- տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերը առավել կարևոր նշանակություն ունեն վերոնշյալ մարզերում, քանի որ այդ մարզերը առանձնանում են նաև 1 բնակչի հաշվով ստեղծված արդյունքի ցածր ցուցանիշներով ևս:

5. Ատենախոսությունում կարևորվել է հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրը, և ուսումնասիրվել են այդ ռեսուրսի ոչ արդյունավետ օգտագործման պատճառները հանրապետության տարածքային միավորներում:

6. Մարզային կտրվածքով հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման հիմնախնդիրների վերլուծության արդյունքներից հետևում է, որ հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ նպատակային օգտագործման և/կամ չօգտագործման պատճառներից հանրապետությունում առավել կարևորվել են հողերի ոչ եկամտաբեր լինելը (28.2%), սեփականատիրոջ նյութական միջոցներ չունենալը (24.2%), ոռոգման անմատչելիության հիմնախնդիրը (15%):

7. Ըստ մարզերի մեծ տարբերություններ կան ինչպես չմշակվող հողերի տարածքների, ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում դրանց մասնաբաժինների, այնպես էլ այդ հիմնախնդրի պատճառների միջև: Հողերի չմշակման պատճառներից հիմնականում ոչ եկամտաբեր լինելը կարևորվել է Շիրակի մարզում, որտեղ ըստ փորձագետների գնահատականների չմշակվող հողերի մոտ 93%-ի պատճառն է: Լոռու մարզում այդ հիմնախնդրի պատճառով չեն մշակվում մարզի չմշակվող հողատարածքների 65.7%-ը: Արագածոտնի մարզում հողերի չմշակման հիմնախնդրի ձևավորման պատճառներից առավել կարևորվում են սեփականատիրոջ սեփական միջոցներ չունենալը (30.1%), հողերի ոչ եկամտաբեր լինելը (21.1%), իսկ սեփականատիրոջ բացակա լինելու պատճառով չի մշակվում չմշակվող հողերի 15.6%-ը: Արարատի և Արմավիրի մարզերում հիմնականում երկու հիմնախնդիր է

կարևորվում՝ ոչ եկամտաբեր լինելը (համապատասխանաբար 27.94% և 27.18%) և ոռոգման անմատչելիությունը (համապատասխանաբար 20.2% և 21.87%): Գեղարքունիքի մարզում լուրջ հիմնախնդիր է սեփականատիրոջ բացակայությունը (12.9%), սեփականատիրոջ միջոցներ չունենալը (13.6%), հողերի բնակավայրից ունեցած հեռավորությունը (19.0%) և դարձյալ ոչ եկամտաբեր լինելը (17.0%): Սյունիքի մարզում կարևորվում է սեփականատիրոջ նյութական միջոցներ չունենալը (12%), սեփականատիրոջ բացակայությունը (11.2%) և բնակավայրից հողերի ունեցած հեռավորությունը (12.0%): Վայոց ձորի մարզում առանձնացված գրեթե բոլոր հիմնախնդիրները որոշակի մասնաբաժին ունեն հողերի չմշակման պատճառների շարքում: Տավուշի մարզում հողերի չմշակման հիմնական պատճառը ականապատված և բռնազավթված լինելն է (37.15%) և սեփականատիրոջ բացակայությունը (16.2%):

8. Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի պատճառների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող հատվածի մարզային տեղաբաշխումն անհավարաչափ է, և չմշակվող հողատարածքներում մեծ մասնաբաժին ունի Արագածոտնի մարզը (41.7%),
- գյուղատնտեսական նշանակության հողատարածքների չմշակման հիմնախնդրի պատճառներն ըստ մարզերի դիֆերենցված են, ուստի այս հիմնախնդրի հաղթահարմանը նպատակաուղղված տնտեսական քաղաքականությունն ու այն իրողություն դարձնելու միջոցառումներն ու գործիքները ևս պետք է տարբերակվեն,
- վերլուծվող հիմնախնդրի առաջացման պատճառներից առավել կարևորվում է հողերի մշակումից ստացվող եկամտի ցածր մակարդակը (ոչ եկամտաբեր լինելը), ինչը հուշում է, որ շուկայական տնտեսության պայմաններում այդ հիմնախնդիրը ինքնակարգավորվող չի կարելի համարել, և պետության միջամտությունն իր համապատասխան քաղաքականությամբ անհրաժեշտություն է,
- գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածը չմշակելու հիմնախնդրի ձևավորման հաջորդ պատճառը (գործոնը) սեփականատիրոջ

նյութական միջոցների ոչ բավարար լինելն է, որի մեղմացման ուղղությամբ հանրապետությունում իրականացվել են որոշակի ծրագրեր, օրինակ՝ այդ նպատակին է ծառայել նաև գյուղացիական տնտեսություններին արտոնյալ վարկերի տրամադրումը: Սակայն դիտարկված 2006-2014 թվականներին այս հիմնախնդիրը հիմնականում աճի միտում է ցուցաբերել այն մարզերում, որտեղ այդ վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է: Այս ծրագրի իրականացման արդյունքում ձևավորվել են մեծ թվով ժամկետանց վարկեր: Այս հիմնախնդրի մասին որոշակի պատկերացում է տալիս նաև մարզային կտրվածով արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը: Ըստ այս ցուցանիշի առանձնանում են Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերը, որոնցում արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը դիտարկված տարիներին տատանվում է մարզի գյուղական համայնքների տնային տնտեսությունների 1/3-ի սահմաններում, ինչը խոսում է նաև հանրապետության աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման մասին,

- գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի ձևավորման կարևոր պատճառներից է ոռոգման ջրի անմատչելիությունը, սակայն այս հիմնախնդիրը նվազման միտում է ցուցաբերում, ինչը պետք է վերագրել ՀՀ կառավարության և տարբեր միջազգային կառույցների կողմից այդ ոլորտում իրականացվող ծրագրերին:

9. Առաջարկվել է գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման նպատակով իրականցնել տարբերակված տարածաշրջանային քաղաքականություն, որի նպատակով կատարել համայնքների շրջանացում ըստ հիմնախնդրի ձևավորման պատճառների, և այն իրականցանելու ալգորիթմ:

10. ,Տարածաշրջանային քաղաքականությունե հասկացության և դրա խնդիրների շուրջ ներկայացված դատողություններն ու իրակացնավող գործընթացների վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- տարածաշրջանային քաղաքականությունը միտված է երկրի տարածքային միավորների սոցիալական, տնտեսական ոլորտների համաչափ զարգացում և կենսամիջավայրի, այդ թվում նաև բնական ծագում ունեցող ռեսուրսների

պահպանությունն ու զարգացումը ապահովելուն: Այդ նպատակին հասնելու կարևոր միջոց պետք է համարել առաջին հերթին դրանցում առկա տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը ուղղված և տարածքային միավորների համեմատական առավելություններն օգտագործելու միջոցառումներն ու գործիքները,

- ՀՀ տարածաշրջանային քաղաքականության վերլուծությունից հետևում է, որ որպես այդ քաղաքականության նպատակ դիտարկվում է տարածքային միավորների համաչափ զարգացում ապահովելը, այն պայմաններում, երբ արդեն ձևավորված են մտահոգիչ սահմանների հասնող անհավասարաչափություններ: Այս առումով ՀՀ տարածաշրջանային քաղաքականության հայեցակարգում ձևակերպված նպատակը վերանայման կարիք ունի,
- ՀՀ տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում ողջ անցումային շրջանում հիմնականում կիրառվել են երկու մոտեցումներ՝ համայնքներին ֆինանսական օժանդակություն և համայնքային կտրվածքով սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների զարգացմանը նպատակաուղղված ներդրումային ծրագրեր: Փաստն այն է, որ այդ ծրագրերի իրականացման արդյունքում տարածքային միավորների տնտեսական զարգացման մակարդակների անհավասարաչափությունների մեղմացման և տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման միտումներ չեն արձանագրվել:

11. Աշխատանքում հիմնավորվում է, որ ՀՀ-ում տարածաշրջանային զարգացման անհավասարաչափությունների մեղմացման հիմնական ուղին տարածքային միավորների արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է, իսկ իրականացման մեխանիզմը՝ նպատակային ծրագրերի մեթոդը, քանի որ.

- տարածքային միավորները սոցիալ-տնտեսական բարդ համակարգեր են, որոնք ներառում են հիմնականում երեք խոշոր ենթահամակարգեր՝ սոցիալական, տնտեսական , բնապահպանական և որոնց գործունեությունը ապահովող ենթահամակարգերն են՝ ռեսուրսայինը և կազմակերպչականը (կառավարմանը): Թվարկված ենթահամակարգերից որևէ մեկում

փոփոխությունը չի կարող իր ազդեցությունը չունենալ մյուսների վրա, ուստի՝ այս համակարգում առաջադրված խնդիրները և լուծման տարբերակները պետք է դիտարկվեն համակարգային մոտեցումով, որը ծրագրանպատակային մեթոդի հիմքն է կազմում,

- տարածքային միավորների զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներն իրենց բնույթով անպիսին են, որ դրանց հաղթահարումը չի կարելի վերագրել միայն տարածքային հարցերով զբաղվող գերատեսչություններին: Դրանք նաև ոլորտային են: Այս մեթոդի կիրառման պարագայում այն դառնում է նպատակային ծրագրերն իրականացնող մարմնի գործառույթ, և տարբեր ոլորտների ու տարածաշրջանային քաղաքականության փոխհամաձայնեցման խնդիրներ չեն առաջանում,
- որոշ դեպքերում նպատակային ծրագրերի մեթոդը միակն է դառնում տարածաշրջանային խնդիրների լուծման պարագայում,
- այս մեթոդի առավելություններից է նաև այն, որ նա, ի տարբերություն վերը ներկայացված մյուս կարգավորիչ մեխանիզմների, անմիջականորեն է ազդում կարգավորվող օբյեկտի վրա,
- մեթոդը թույլ կտա մեկ միասնական նպատակի (տարածքային միավորների անհավասարաչափությունների մեղմացում) շուրջ համախմբել բոլոր ենթանպատակները և միասնական գնահատել այդ հիմնախնդրի հաղթահարման անհրաժեշտ միջոցները,
- ծրագրանպատակային մեթոդները ապահովում են ռեսուրսների կենտրոնացվածություն մեկ նպատակի իրականացման շուրջ և ապահովում դրանց արդյունավետ օգտագործումը,
- նպատակային ծրագրերը կառավարության կողմից արժանանում են հավանության և ստանում օրենքի ուժ, դրանով իսկ մեծացնելով դրանց իրականացման հավանականությունը,
- նպատակային ծրագրերի մեթոդը տեսականորեն լավ ուսումնասիրված է և ունի բազում արդյունավետ կիրառություններ:

12. Ատենախոսությունում առաջարկվել է գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակային ծրագրի

կառուցվածք և ձևավորման հայեցակարգային մոտեցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

<u>Իրավական ակտեր</u>

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015
2. ՀՀ օրենքը ,Ֆինանսական համահարթեցման մասինե, 1998թ.
3. ՀՀ օրենքը ,ՀՀ բյուջետային համակարգի մասինե, 1997թ.
4. ՀՀ օրենքը ,Տեղական ինքնակառավարման մասինե, 2002թ.
5. ՀՀ օրենքը ,ՀՀ վարչատարածքային բաժանման մասինե, 1995թ.
6. ՀՀ հողային օրենսգիրք, 2001թ.
7. ՀՀ նախագահի հրամանագիրը ,ՀՀ մարզերում պետական կառավարման մասինե, 1997թ.
8. «Տարածքային զարգացման հայեցակարգ», ՀՀ կառավարության 2011թ. №25 արձանագրային որոշում
9. ՀՀ կառավարության ծրագիր 2003-2007թթ., Երևան, 2003
10. ՀՀ կառավարության ծրագիր 2012-2017թթ., Երևան, 2012
11. ,ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունե, ՀՀ կառավարության №1476-Ն որոշում 2010թ.
12. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ՀՍՆՀ) վերակազմավորման հիմքի վրա տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման նպատակով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ռազմավարությանը հավանություն տալու մասին ՀՀ կառավարության 19.03.2014 №11 նիստի արձանագրություն
13. Հայաստանի Հանրապետության 2010թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն
14. Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն
15. Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն

16. Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն
17. Հայաստանի Հանրապետության 2014թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն
18. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №308 որոշում, 2012թ.
19. ՀՀ Գեղարքունիքի մարզի 2009-2011թթ. զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №505 որոշում, 2009թ.
20. ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №782 որոշում, 2009թ.
21. ՀՀ Կոտայքի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №609 որոշում, 2010թ.
22. ՀՀ Վայոց Ձորի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №1060 որոշում, 2010թ.
23. ՀՀ Տավուշի մարզի 2012-2015թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №383 որոշում, 2012թ.
24. ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության №112 որոշում, 2014թ.
25. ,ՀՀ գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգե, ՀՀ կառավարության №43 արձանագրային որոշում, 2011թ.

Մասնագիտական գրականություն և այլ աղբյուրներ

26. Ազգային ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, Ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 21
27. Ավագյան Ա., «ՀՀ ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականները», Երևան, 2000
28. Արարատի մարզի տնտեսական հետազոտություն, Հայաստանի տարածքային զարգացման եվրոպական ծրագիր (REDAM), Երևան, 2005

29. Գեղարքունիքի մարզ, Զարգացման ծրագիր, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարություն (DFID), Երևան, 2005
30. Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ. Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, Տիգրան Մեծ, 2003, 656էջ
31. Դարբինյան Ա., Սարդարյան Լ., Հայրիյան Մ., Տնտեսական զարգացման անհավասարաչափությունների դրսևորումները ՀՀ մարզերում //Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ/ (Գիտական աշխատանքների ժողովածու) – Գիրք 2, Եր.: ,Օր-Դարե հրատ., 2010, էջ 81:
32. Եղիազարյան Բ., Սարդարյան Լ., Համայնքային հարկային եկամուտները և ֆինանսական համահարթեցման քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր, ԵՊՏԻ, Երևան 2004, էջ 9-13
33. Թումանյան Դ., Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Նոյյան տապան, 2006, 124 էջ
34. Խուդավերդյան Ս. ՀՀ տարածքային կառավարման քաղաքականության հիմնադրույթները, «Պետական կառավարման արդի հիմնահարցերը (գիտաժողովի նյութերի ժողովածու)», գիրք 1, Երևան, 1999,
35. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, Երևան 2015
36. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015, ԱՎԾ, Երևան 2005 – 2014
37. Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության արդի հիմնախնդիրները (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, Ասողիկ, 2003, 404էջ,
38. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը վիճակագրական-վերլուծական զեկույց, 2013
39. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը վիճակագրական-վերլուծական զեկույց, 2014
40. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը վիճակագրական-վերլուծական զեկույց, 2015

41. ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվետվությունը «Հողային ֆոնդի առկայության և բաշխման» առ 01.07.2015թ.
42. Հարությունյան Վ., Թամազյան Ա., Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները, Երևան, 2005, 221 էջ
43. Ղազարյան Է., Տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսական և բյուջետային խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2002, 80 էջ
44. Ղազարյան Է., Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները, Երևան, 2004,
45. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) Հայաստանյան գրասենյակի կողմից ֆինանսավորված ,Համայնքային տնտեսությանե ծրագրի տվյալները
46. Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների հայեցակարգային ծրագիր: Երևան, Տիգրան Մեծ, 1999
47. Սարգսյան Հ., Մակրոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014
48. Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ (OSCE), Երևան, 2004
49. Վայոց Ձորի մարզի տնտեսական հետազոտություն, Հայաստանի տարածքային զարգացման եվրոպական ծրագիր (REDAM), Երևան, 2005
50. Տավուշի մարզ, Զարգացման ծրագիր, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարություն (DFID), Երևան, 2005
51. Большой экономический словарь. Под ред. А.Азрилияна. – М.: ИНЭ, 2002. – 1280с.,
52. Горбунов Э., Экономический потенциал развитого социализма. Вопросы экономики, N9, 1981г., стр. 16-51
53. Гранберг А.Г., Основы региональной экономики, ГУ ВШЭ, Москва, 2004, стр. 493,
54. Гранберг А., Зайцева Ю. Производство и использование валового регионального продукта: межрегиональные соотношения. Статья 3 (заключительная), Перераспределение ВРП в системе .регион-страна-мир.. .Российский экономический журнал., 2003, N 1,

55. Котилко В.В., Региональная экономическая политика, М.: Издательство РДЛ, 2001, 272 с.
56. Курс экономической теории. Под ред. Сидоровича А.В., М. 2001, стр. 832
57. Лексин В.Н., Швецов А.Н., Государство и регионы. Теория и практика государственного регулирования территориального развития, УРСС, Москва, 2002, стр. 366
58. Пасс К., Лоус Б., Пендлтон Э., Чедвик Л., Большой толковый словарь бизнеса. Русско-английский, англо-русский, АСТ, М., 1998, стр. 686
59. Пробст, А. Е., Проблемы размещения социалистической промышленности М. : Экономика, 1982, 215 с. ;
60. Райзберг Б., Экономическая энциклопедия, М. 1995, стр. 688
61. Словарь современной экономической теории Макмиллана. – М.: ИНФРА-М, 1998, 608с.,
62. Теория статистики под редакцией Г.А. Громова, М.: 2005, 474 с.
63. Управление региональными программами в США и Канаде. М., Наука, 1983.
64. Чагучиев М.Ч., Соколов М.М. Регионы, экономика и управление. – М.: ЮНИТИ-ДАНА, 2001, 271с.,
65. Швецов Ю.Г., Миркина И.В., Федеральные целевые программы на региональном уровне. Проблемы и перспективы. Федеральные отношения и региональная социально-экономическая политика, 2005, №4, стр. 29-32
66. Экономика и право. Энциклопедический словарь Габлера, М. 1998, стр. 432
67. Экономическая энциклопедия. – М.: ОАО .Экономика., 1999, 1055с.
68. Armstrong M, Taylor J: Regional Economics and Policy, 3rd edition, New Jersey, Wiley-Blackwell, 2000, 448 pages
69. Atkinson, A. B.: Social Exclusion, Poverty and Unemployment, 1998, Hills, J. (ed.) Exclusion, Employment and Opportunity, Centre for Analysis of Social Exclusion (CASE), London School of Economics and Political Science, London, pp 1-20.
70. Borts G.H., Stein J.L.: Economic Growth in a Free Market, New York, Columbia University Press, 1967, 234 pages
71. Complex estimation of socio-economic development of regions. The Economist N2, 2004
72. Entani, T., Maeda, Y., Tanaka H.: Dual Models of Interval DEA and Its Extension to Interval Data. European Journal of Operational Research 36 (1), 32-45, 2002
73. Friedmann J.: Regional Development Policy: A Case Study of Venezuela, 1966, MIT Press, 279 pages

74. Higgins B.H., Savoie D.J.: Regional Development Theories and Their Application, Transaction Publishers; Ney Jersey, January 1, 1998, 422 pages
75. Hirschman A.O.: The Strategy of Economic Development, Yale University Press, 1958, 230 pages
76. Mahbub ul Haq: Reflection on Human Development. New York: Oxford University Press. 1995
77. Martin R.L.: A Study on the Factors of Regional Competitiveness, A draft final report for The European Commission Directorate-General Regional Policy, Cambridge, 2003, 184 pages
78. Milanovic B.: The Gini-Type Functions: An Alternative Derivation, Bulletin of Economic Research, 02/1994
79. Morris L.S.: Regional Economic Development in the European Union and North America, Praeger 1999, 336 pages
80. OECD Territorial Reviews: Poland 2008, OECD Publishing, 2008, pages 252
81. Ohlin B.: Interregional and International Trade: Revised Edition, Harvard University Press, January 1, 1967, 340 pages
82. Porter M.E.: The Competitive Advantage of Nations. Free Press, 1998, 896 pages
83. Steppacher B., Regional and the EU and national interests structural policy, Konrad Adenauer Foundation, Brussels, 1996
84. Theil H.: Statistical Decomposition Analysis: With Application in the Social and Administrative Sciences, North-Holland Pub. Co, 1972, 337 pages
85. http://www.arlis.am/ Հայաստանի Իրավական Տեղեկատվական Համակարգի (ՀԻՏՀ) պաշտոնական կայքը
86. http://armstat.am/am/ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքը
87. http://gov.am/am/ ՀՀ կառավարության պաշտոնական կայքը
88. http://report.gov.am/ ՀՀ կառավարության գործունեության արդյունքների պաշտոնական կայքը
89. https://www.e-gov.am/ ՀՀ էլեկտրոնային կառավարման պաշտոնական կայքը
90. http://www.mta.gov.am/hy/ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքը

91. http://www.mineconomy.am/ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքը
92. http://www.mnp.am/ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը
93. http://www.minenergy.am/ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքը

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ մարզերի հիմնական բնութագրերը

Մարզ	Զբաղեցրած տարածք, քառ. կմ	Գյուղատնտե-սական նշանակության հողեր, հա	Բնակչություն հազ. մարդ	Համայնքների թիվ		Աշխատան-քային ռեսուրսներ, հազ. մարդ	Արդյունաբե-րական արտադրանքի ծավալ, մլն. դրամ	Գյուղատն-տեսության համախառն արտադրանքը, մլրդ. դրամ	Շինարա-րություն, մլն դրամ	Ծառայու-թյունների ծավալը, մլն դրամ
				քաղաքային	գյուղական					
ք. Երևան	223.0	3,352.1	1,071.5	1	-	705.1	543,868.8	11.3	250,028.7	957,719.9
Արագածոտն	2,756.0	218,225.4	131.3	3	111	95.6	29,939.0	98.8	13,373.9	8,872.7
Արարատ	2,090.0	156,916.2	260.1	4	93	151.5	131,971.3	141.4	16,426.7	16,928.0
Արմավիր	1,242.0	97,025.8	267.0	3	94	194.7	54,392.7	173.7	8,699.3	17,992.6
Գեղարքունիք	5,349.0	345,573.8	233.0	5	87	159.2	22,573.2	188.7	11,671.1	9,806.8
Լոռի	3,799.0	251,139.3	228.0	9	103	208.4	69,941.2	73.8	68,635.0	15,746.2
Կոտայք	2,086.0	154,627.6	255.0	7	60	210.9	167,399.6	59.8	22,306.8	41,129.4
Շիրակ	2,680.0	214,531.7	246.4	3	116	227.0	48,897.0	109.0	11,688.6	22,159.6
Սյունիք	4,506.0	306,914.4	140.2	7	102	92.4	197,631.1	70.2	16,202.7	14,581.9
Վայոց ձոր	2,308.0	190,337.6	51.4	3	41	36.5	15,420.2	21.4	13,914.1	6,644.0
Տավուշ	2,704.0	110,773.1	126.7	5	57	98.9	9,240.0	45.4	30,911.1	8,027.0
Ընդամենը	**29,743.0**	**2,049,417.0**	**3,010.6**	**50**	**864**	**2,180.2**	**1,291,274.1**	**993.5**	**463,858.0**	**1,119,608.1**

Հավելված 2

Մեկ բնակչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

2004-2014թթ., դրամ

Մարզը	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*
ք.Երևան	216,914.0	278,855.2	260,349.4	313,991.0	326,226.7	271,053.1
Արագածոտն	45,512.1	57,234.0	52,060.1	68,294.6	92,487.2	86,081.9
Արարատ	153,026.2	169,020.5	196,707.2	190,107.3	214,091.1	206,380.2
Արմավիր	96,462.6	101,486.7	103,375.4	106,220.1	117,080.7	119,707.1
Գեղարքունիք	81,113.5	62,020.9	49,311.1	39,614.0	42,958.5	50,334.6
Լոռի	113,463.4	127,503.2	162,477.9	151,068.0	150,660.6	158,931.8
Կոտայք	213,023.6	244,488.2	237,266.3	272,871.8	319,621.6	293,422.0
Շիրակ	46,108.2	47,719.5	47,565.7	57,532.9	63,383.2	63,546.0
Սյունիք	583,116.0	786,647.1	793,132.8	806,213.2	654,247.9	617,528.4
Վայոց ձոր	84,415.4	90,668.5	90,788.5	97,962.4	112,048.4	112,066.3
Տավուշ	32,502.4	34,913.0	31,315.0	34,675.1	38,627.9	38,607.1
ՀՀ միջինը	*166,541.3*	*202,616.8*	*200,199.5*	*222,082.5*	*228,317.4*	*206,000.6*
Ստանդարտ շեղումը	*156,457.8*	*215,979.9*	*217,485.4*	*223,126.2*	*182,845.9*	*167,640.9*
Max	583,116.0	786,647.1	793,132.8	806,213.2	654,247.9	617,528.4
Min	32,502.4	34,913.0	31,315.0	34,675.1	38,627.9	38,607.1
Անհավասարաչափության թափը	*17.94*	*22.53*	*25.33*	*23.25*	*16.94*	*16.00*
Max (առանց ք.Երևանի)	583,116.0	786,647.1	793,132.8	806,213.2	654,247.9	617,528.4
Min (առանց ք.Երևանի)	32,502.4	34,913.0	31,315.0	34,675.1	38,627.9	38,607.1
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*17.94*	*22.53*	*25.33*	*23.25*	*16.94*	*16.00*
Մարզը	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	
ք.Երևան	315,984.2	375,619.5	421,091.7	475,092.6	503,191.4	
Արագածոտն	101,613.8	151,419.9	146,255.8	189,816.3	228,025.1	
Արարատ	257,857.0	287,060.3	398,021.3	474,391.1	516,377.9	
Արմավիր	131,075.2	145,587.3	165,752.1	188,818.1	202,327.3	
Գեղարքունիք	49,298.3	73,877.0	91,575.9	101,091.4	96,880.3	
Լոռի	212,849.7	260,442.2	338,442.7	326,148.2	306,746.1	
Կոտայք	301,610.4	368,594.4	563,127.0	651,457.6	656,303.9	
Շիրակ	89,217.0	151,494.2	160,834.9	171,662.1	198,431.4	
Սյունիք	984,997.4	1,165,794.1	1,400,448.9	1,453,724.8	1,404,935.8	
Վայոց ձոր	129,257.1	138,413.5	173,662.2	232,268.9	300,700.4	
Տավուշ	41,681.3	46,974.0	60,632.6	82,863.6	74,838.9	
ՀՀ միջինը	*252,691.1*	*305,092.3*	*368,926.9*	*411,676.9*	*427,873.4*	
Ստանդարտ շեղումը	*265,951.9*	*311,342.6*	*380,627.1*	*393,562.0*	*377,427.0*	
Max	984,997.4	1,165,794.1	1,400,448.9	1,453,724.8	1,404,935.8	
Min	41,681.3	46,974.0	60,632.6	82,863.6	74,838.9	
Անհավասարաչափության թափը	*23.63*	*24.82*	*23.10*	*17.54*	*18.77*	
Max (առանց ք.Երևանի)	984,997.4	1,165,794.1	1,400,448.9	1,453,724.8	1,404,935.8	
Min (առանց ք.Երևանի)	41,681.3	46,974.0	60,632.6	82,863.6	74,838.9	
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*23.63*	*24.82*	*23.10*	*17.54*	*18.77*	

Հավելված 3

Արդյունաբերական արտադրանքի մարզային կառուցվածքը 2014թ.



Հավելված 4

Մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի դինամիկան 2004-2014թթ., դրամ

Մարզը	***2004***	***2005***	***2006***	***2007***	***2008***	***2009***
ք.Երևան	5,896.2	5,347.1	4,980.1	5,151.8	5,939.0	4,388.3
Արագածոտն	275,638.7	254,845.7	293,991.4	343,081.3	406,383.0	382,498.2
Արարատ	242,080.2	236,303.9	263,292.1	298,658.9	362,031.7	319,225.3
Արմավիր	261,386.1	268,844.2	298,534.1	343,304.8	424,274.6	382,963.7
Գեղարքունիք	299,832.5	290,551.8	334,029.2	375,156.3	463,677.9	389,234.0
Լոռի	194,933.1	182,651.6	206,287.5	226,709.2	139,865.1	130,681.8
Կոտայք	162,251.1	164,907.2	181,422.4	228,880.9	169,297.0	141,126.2
Շիրակ	171,661.6	175,071.0	201,492.5	225,542.5	231,425.5	198,223.8
Սյունիք	322,770.3	305,882.4	349,247.9	377,370.8	255,722.7	218,443.4
Վայոց ձոր	424,350.9	397,849.5	437,276.0	489,247.3	229,390.7	202,509.0
Տավուշ	206,177.9	201,487.0	227,848.1	264,530.6	212,528.0	180,803.6
ՀՀ միջինը (առանց ք.Երևանի)	*235,650.7*	*230,405.4*	*260,027.4*	*296,306.8*	*292,236.8*	*256,552.1*
Ստանդարտ շեղումը	*79,891.0*	*72,180.9*	*79,790.4*	*85,270.0*	*114,656.7*	*103,287.6*
Max (առանց ք.Երևանի)	424,350.9	397,849.5	437,276.0	489,247.3	463,677.9	389,234.0
Min (առանց ք.Երևանի)	162,251.1	164,907.2	181,422.4	225,542.5	139,865.1	130,681.8
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*2.62*	*2.41*	*2.41*	*2.17*	*3.32*	*2.98*

Մարզը	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	
ք.Երևան	4,813.3	57,66.0	7,671.4	7,956.6	9,705.1	
Արագածոտն	431,179.8	537,438.8	643,231.1	674,225.2	754,760.1	
Արարատ	386,947.2	414,625.5	476,063.8	523,006.1	544,021.5	
Արմավիր	365,640.3	469,728.6	553,112.2	612,649.7	648,689.1	
Գեղարքունիք	518,564.4	628,547.9	645,666.0	706,108.5	809,442.1	
Լոռի	148,174.4	202,338.8	242,706.1	292,461.0	323,245.6	
Կոտայք	141,439.2	179,188.7	205,905.2	220,784.3	234,509.8	
Շիրակ	252,127.7	329,436.8	371,248.0	428,111.2	441,964.3	
Սյունիք	237,410.1	329,411.8	406,624.4	442,553.2	501,426.5	
Վայոց ձոր	246,428.6	301,247.8	351,145.0	384,913.0	418,287.9	
Տավուշ	210,252.6	288,575.7	313,178.3	343,260.2	366,508.7	
ՀՀ միջինը (առանց ք.Երևանի)	*294,903.5*	*367,256.6*	*422,544.5*	*467,364.5*	*506,962.4*	
Ստանդարտ շեղումը	*125,517.1*	*143,740.1*	*155,488.0*	*163,141.3*	*186,819.6*	
Max (առանց ք.Երևանի)	518,564.4	628,547.9	645,666.0	706,108.5	809,442.1	
Min (առանց ք.Երևանի)	141,439.2	179,188.7	205,905.2	220,784.3	234,509.8	
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*3.67*	*3.51*	*3.14*	*3.20*	*3.45*	

Հավելված 5

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մարզային կառուցվածքը 2014թ.



Հավելված 6

Շինարարության ծավալը 1 բնակչի հաշվով 2004-2014թթ., դրամ

Մարզը	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*
ք.Երևան	200,957.9	321,553.4	480,908.2	528,765.4	677,165.5	355,816.1
Արագածոտն	24,145.4	26,188.1	85,515.0	46,419.4	47,411.3	52,151.0
Արարատ	9,577.0	13,181.2	14,548.4	25,512.9	37,395.5	63,936.9
Արմավիր	14,397.8	30,542.0	17,987.1	22,706.6	29,115.4	36,356.9
Գեղարքունիք	10,213.6	21,459.0	47,966.6	22,376.0	21,913.7	79,058.8
Լոռի	22,990.9	27,059.2	68,269.2	27,144.9	22,641.1	51,835.6
Կոտայք	32,168.8	60,840.9	64,296.1	30,130.0	59,099.7	116,201.7
Շիրակ	22,585.6	16,495.0	29,420.8	35,147.6	46,978.3	160,608.5
Սյունիք	81,261.0	137,797.4	157,030.7	156,932.6	165,847.0	145,102.7
Վայոց ձոր	57,027.8	80,878.1	81,774.2	108,888.9	177,455.2	88,510.8
Տավուշ	38,198.7	35,658.0	47,245.0	35,409.8	31,640.6	61,456.8
ՀՀ միջինը	*85,999.7*	*135,237.0*	*199,878.3*	*207,974.3*	*265,188.4*	*178,409.2*
Ստանդարտ շեղումը	*22,619.4*	*38,730.9*	*41,740.9*	*45,169.1*	*58,011.0*	*42,019.1*
Max	200,957.9	321,553.4	480,908.2	528,765.4	677,165.5	355,816.1
Min	9,577.0	13,181.2	14,548.4	22,376.0	21,913.7	36,356.9
Անհավասարաչափության թափը	*21.0*	*24.4*	*33.1*	*23.6*	*30.9*	*9.8*
ՀՀ միջինը (առանց ք.Երևանի)	*25,983.6*	*37,993.9*	*53,249.4*	*40,565.5*	*49,911.1*	*85,534.4*
Max (առանց ք.Երևանի)	81,261.0	137,797.4	157,030.7	156,932.6	177,455.2	160,608.5
Min (առանց ք.Երևանի)	9,577.0	13,181.2	14,548.4	22,376.0	21,913.7	36,356.9
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*8.49*	*10.45*	*10.79*	*7.01*	*8.10*	*4.42*

Մարզը	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	

ք.Երևան	314,729.7	244,843.1	244,449.8	247,300.1	230,284.2	
Արագածոտն	230,285.8	91,391.9	176,995.5	98,668.9	101,857.6	
Արարատ	80,188.3	74,151.6	33,883.4	51,635.7	60,572.5	
Արմավիր	51,582.9	63,699.4	60,066.3	48,105.5	32,581.6	
Գեղարքունիք	58,675.7	75,776.2	54,176.3	49,817.6	50,558.8	
Լոռի	73,934.4	87,214.0	57,820.7	162,766.0	185,492.5	
Կոտայք	130,623.2	128,057.5	171,654.6	113,738.0	87,375.7	
Շիրակ	104,884.0	100,843.4	105,060.8	67,280.3	46,989.9	
Սյունիք	278,485.9	249,086.9	199,360.1	175,156.7	113,208.3	
Վայոց ձոր	91,964.3	126,484.8	106,826.3	99,442.9	270,315.2	
Տավուշ	122,258.5	174,672.1	296,631.8	196,774.3	244,163.5	
ՀՀ միջինը	*180,471.9*	*154,177.8*	*157,650.6*	*150,293.1*	*143,894.7*	
Ստանդարտ շեղումը	*74,914.3*	*56,926.3*	*83,418.0*	*55,139.6*	*85,023.9*	
Max	314,729.7	249,086.9	296,631.8	247,300.1	270,315.2	
Min	51,582.9	63,699.4	33,883.4	48,105.5	32,581.6	
Անհավասարաչափության թափը	*6.1*	*3.9*	*8.8*	*5.1*	*8.3*	
ՀՀ միջինը (առանց ք.Երևանի)	*110,110.0*	*106,573.3*	*110,604.5*	*97,115.5*	*96,151.0*	
Max (առանց ք.Երևանի)	278,485.9	249,086.9	296,631.8	196,774.3	270,315.2	
Min (առանց ք.Երևանի)	51,582.9	63,699.4	33,883.4	48,105.5	32,581.6	
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*5.40*	*3.91*	*8.75*	*4.09*	*8.30*	

Հավելված 7

Շինարարության համախառն արտադրանքի մարզային կառուցվածքը 2014թ.



Հավելված 8

Ծառայությունների ծավալը 1 բնակչի հաշվով 2004-2014թթ., դրամ

Մարզը	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*
ք.Երևան	245,757.4	284,323.3	397,071.8	489,978.5	598,487.9	576,943.0
Արագածոտն	12,527.5	15,471.6	23,590.8	20,705.4	21,899.3	40,449.5
Արարատ	18,232.6	18,847.0	19,771.3	20,580.3	21,680.5	36,681.1
Արմավիր	17,076.5	19,236.5	23,526.6	18,850.1	21,752.3	35,822.2
Գեղարքունիք	21,741.6	20,567.7	22,573.3	19,300.5	22,367.4	27,739.5
Լոռի	18,851.9	23,199.2	32,055.5	32,926.3	35,370.6	43,722.7
Կոտայք	25,205.2	32,784.1	36,810.6	32,309.4	41,746.4	64,577.0
Շիրակ	32,571.0	31,688.9	38,357.5	39,520.8	48,896.9	52,622.7
Սյունիք	18,098.7	20,983.0	27,266.2	30,485.9	35,972.5	47,150.4
Վայոց ձոր	16,818.3	22,555.6	32,820.8	30,930.1	36,935.5	49,292.1
Տավուշ	19,510.2	18,771.0	23,936.0	22,934.4	24,925.4	31,154.0
ՀՀ միջինը	*98,116.4*	*112,764.4*	*154,751.1*	*185,785.1*	*226,066.3*	*226,632.4*
Ստանդարտ շեղումը	*68,248.1*	*79,149.3*	*111,427.8*	*139,805.6*	*171,314.8*	*161,350.7*
Max	245,757.4	284,323.3	397,071.8	489,978.5	598,487.9	576,943.0
Min	12,527.5	15,471.6	19,771.3	18,850.1	21,680.5	27,739.5
Անհավասարաչափության թափը	*19.62*	*18.38*	*20.08*	*25.99*	*27.60*	*20.80*
Max (առանց ք.Երևանի)	32,571.0	32,784.1	38,357.5	39,520.8	48,896.9	64,577.0
Min (առանց ք.Երևանի)	12,527.5	15,471.6	19,771.3	18,850.1	21,680.5	27,739.5
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*2.60*	*2.12*	*1.94*	*2.10*	*2.26*	*2.33*

Մարզը	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	
ք.Երևան	611,326.2	661,996.0	791,125.3	812,840.3	884,949.8	
Արագածոտն	51,912.9	51,879.6	61,100.2	70,622.1	67,575.8	
Արարատ	39,957.6	42,532.5	50,205.5	64,355.8	65,082.7	
Արմավիր	45,948.2	53,468.0	62,455.5	75,239.5	67,388.0	
Գեղարքունիք	30,781.4	31,796.4	33,583.1	41,322.5	42,089.3	
Լոռի	50,977.3	52,914.6	62,182.7	68,648.2	69,062.3	
Կոտայք	83,654.7	93,688.9	109,662.0	139,242.0	161,291.8	
Շիրակ	57,087.6	57,465.5	73,032.8	83,736.2	89,933.4	
Սյունիք	56,366.9	61,603.9	82,534.2	96,466.7	104,007.8	
Վայոց ձոր	62,321.4	63,336.9	83,456.1	126,717.6	129,260.7	
Տավուշ	40,633.7	44,696.6	41,872.9	57,003.1	63,404.4	
ՀՀ միջինը	*244,189.6*	*264,324.9*	*320,495.8*	*339,342.8*	*368,763.8*	
Ստանդարտ շեղումը	*169,221.0*	*183,577.6*	*219,650.3*	*222,161.4*	*243,341.7*	
Max	611,326.2	661,996.0	791,125.3	812,840.3	884,949.8	
Min	30,781.4	31,796.4	33,583.1	41,322.5	42,089.3	
Անհավասարաչափության թափը	*19.86*	*20.82*	*23.56*	*19.67*	*21.03*	
Max (առանց ք.Երևանի)	83,654.7	93,688.9	109,662.0	139,242.0	161,291.8	
Min (առանց ք.Երևանի)	30,781.4	31,796.4	33,583.1	41,322.5	42,089.3	
Անհավասարաչափության թափը (առանց ք.Երևանի)	*2.72*	*2.95*	*3.27*	*3.37*	*3.83*	

Հավելված 9

Ծառայությունների ծավալի մարզային կառուցվածքը 2014թ.



Հավելված 10

ՀՀ-ում գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային միջին զուտ եկամուտը՝ըստ մարզեր և հողի գնահատման խմբերի

№	Մարզը	Վարելահողեր, հա					Պտղատու այգիներ, հա					Խաղողի այգիներ, հա			
		գյուղ	քաղաք	ընդ.	հազ.դրամ/հա		գյուղ	քաղաք	ընդ.	հազ.դրամ/հա		գյուղ	քաղաք	ընդ.	հազ.դր./ հա
					ջրովի	անջրդի				հնդավոր	կորիզավոր				
1.	Արագածոտն	51,272.7	2,817.5	54,090.2	49.0	21.2	2,636.4	272.8	2,909.3	143.9	62.8	1,474.0	336.0	1,810.0	118.6
2.	Արարատ	79,072.1	1,978.8	81,050.9	86.7	9.9	78,309.3	86.0	78,395.2	119.7	131.1	167,593.4	308.5	167,901.9	222.0
3.	Արմավիր	37,812.8	2,130.4	39,943.2	89.4	10.4	6,138.9	168.8	6,307.7	143.4	127.9	4,736.0	333.0	5,069.0	176.7
4.	Գեղարքունիք	70,348.3	10,218.0	80,566.3	61.4	28.3	15.2	670.0	685.2	150.0	-	-	-	-	
5.	Լոռի	37,667.2	4,431.8	42,098.9	69.7	33.3	302.5	37.0	339.4	130.4	161.0	78.6	-	78.6	98.3
6.	Կոտայք	36,120.6	7,819.8	43,940.4	59.2	22.5	2,202.6	148.3	2,350.9	128.5	61.1	409.6	12.0	421.6	104.2
7.	Շիրակ	76,083.6	2,603.8	78,687.4	54.6	21.8	45.3	1.3	46.6	137.3		-	-	-	
8.	Սյունիք	38,767.8	92,698.6	131,466.3	45.8	19.8	852.6	240.5	1,093.1	72.0	40.4	157.0	20.0	177.0	60.7
9.	Վայոց ձոր	15,183.0	1,026.0	16,209.0	29.6	10.2	941.2	49.2	990.4	101.9	53.2	715.0	30.0	745.0	61.1
10.	Տավուշ	23,624.4	1,995.5	25,619.9	65.7	29.2	706.0	113.0	819.0	106.0	183.4	1,145.4	58.5	1,203.9	144.2
	Ընդամենը	465,952.3	127,720.2	593,672.4	67.7		92,149.8	1,786.9	93,936.7			176,309.0	1,098.0	177,407.0	

№	Մարզը	Խոտհարքներ, հա					Արոտներ, հա				
		գյուղ	քաղաք	ընդ.	հազ.դրամ/հա		գյուղ	քաղաք	ընդ.	հազ.դրամ/հա	
					գյուղամերձ	հեռագնաց				գյուղամերձ	հեռագնաց
1.	Արագածոտն	3,557.6	133.9	3,691.5	28.1	24.6	126,627.8	2,193.9	128,821.7	11.3	10.8
2.	Արարատ	328,786.2	34.9	328,821.1	12.3	7.7	44,613.6	1,103.7	45,717.3	7.3	6.8
3.	Արմավիր	177.8	143.9	321.7	11.8		20,686.6	458.0	21,144.6	3.4	5.2
4.	Գեղարքունիք	29,752.2	5,108.1	34,860.3	25.4	21.1	162,512.1	16,741.0	179,253.1	16.8	13.0
5.	Լոռի	31,387.9	3,749.8	35,137.8	36.6	30.0	138,619.7	7,089.9	145,709.6	21.5	24.6
6.	Կոտայք	10,481.8	950.0	11,431.8	23.6	18.2	90,126.5	5,711.7	95,838.2	10.9	9.2
7.	Շիրակ	9,861.6	93.3	9,955.0	27.2	16.0	111,876.4	3,181.1	115,057.5	14.6	11.8
8.	Սյունիք	16,483.7	312.9	16,796.5	23.7	26.3	128,159.4	4,946.4	133,105.8	15.4	16.4
9.	Վայոց ձոր	4,116.4	602.0	4,718.4	16.1	15.3	75,226.6	1,743.8	76,970.5	8.5	9.3
10.	Տավուշ	9,161.0	332.5	9,493.5	34.9	31.4	61,828.7	1,365.6	63,194.3	27.6	27.0
	Ընդամենը	443,766.2	11,461.3	455,227.5			960,277.4	44,535.0	1,004,812.4		

№	Մարզը	Ոռոգելի հողատարածքներ, հա	Չոռոգվող հողատարածքներ, հա

		գյուղ	քաղաք	ընդ.	գյուղ	քաղաք	ընդ.
1.	Արագածոտն	20,150.2	3,785.2	23,935.4	-	2,635.2	2,635.2
2.	Արարատ	30,286.8	2,611.6	32,898.4	11,751.5	181.8	11,933.4
3.	Արմավիր	48,522.7	3,145.7	51,668.5	10,299.8	898.7	11,198.4
4.	Գեղարքունիք	2,831.5	8,401.4	11,232.9	-	8,228.6	8,228.6
5.	Լոռի	7,859.8	1,949.9	9,809.7	4,035.8	1,896.0	5,931.8
6.	Կոտայք	12,794.5	6,517.5	19,312.0	4,682.1	5,066.0	9,748.1
7.	Շիրակ	18,084.1	2,271.2	20,355.3	3,894.4	2,101.7	5,996.1
8.	Սյունիք	6,900.8	4,848.1	11,748.9	3,242.1	4,166.8	7,408.9
9.	Վայոց ձոր	6,312.2	1,339.8	7,652.0	1,973.4	819.6	2,793.0
10.	Տավուշ	5,948.1	1,223.6	7,171.7	1,909.2	1,140.4	3,049.6